



Ա. Խ. ՄԻԱՑԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐՊԵՏԱՑ ՎԱՐՊԵՏՆԵՐ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

С. Х. МНАЦАКАНЯН

**КАМЕННЫХ ДЕЛ МАСТЕРА
МАНУЭЛ ТРДАТ. МОМИК.**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱՆԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ա. Խ. ՄԱՆՈՒՔԱԿԱՆՑԱՆ

ՎԱՐՊԵՏԱՑ ՎԱՐՊԵՏՆԵՐ
ՄԱՆՈՒԵԼ ՏՐԴԱՏ. ՄՈՄԻԿ

Հ 68215



ՀԱՅԿԱՆԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԵՎԱՆ

1982

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհուրդի ոռոշմամբ

Պատմութանառու խմբագիր՝ Եւանուապետուրյան զարուհի
Ա. Լ. ՀԲՈՒԱՆՆԻՑԱԽԱՆ

Գիրքը նշանաւոկարյան և Խոջիանվարել գրախոսներ՝
նաւառապետուրյան գոկուր Ա. Խ. ԹԱՐԱՎՈՒՆՅԱՆԻ և
արվեստի վասուակավագ դաշիչ Ա. Ա. ԱԱՀԱՅԱՆԻ

Մեացականիան, Ա. Խ.

Մ 831 Վարպետաց վարպետներ—Մանուկ. Տրդատ. Մո-
ժիկ թատ. խմբ.՝ Կ. Լ. Հավհանիսյան.—Եր.: ՀՍՍՀ
ԳԱ հրատ., 1982. 180 էջ. 23 թերթ նկ.

Աշխատավորյան մեջ վերլուծվում էն միջնադարյան Հայուստանի
եղանակոր ճարտարապետ-քանդակագործների՝ Մանուկի, Տըր-
մանիկի և Մամիկի առեղծորդորժությունները, Ըստարանվում էն
զատի և երանց գործերի եշանակություններ Հայկական միջնադարյան զադար-
վառառկան մշակույթի մեջ, երանց անգի ու զերք Հայկական ճար-
տարապետության և բանգակագործության զարգացման մեջ ընդ-
հակառապետ:

Հասցեազգվում է ընթերցողների լայն շրջաններին:

4902000000
Մ 703 (02) — 82

ԴԻՐ 85.113(22) 1
72 Ար 1

Հայ ժողովրդի դարավոր մշակույթի պահպանության մեջ ճարտարապետությունն իրավամբ դրավում է իր արժանի տեղը, հանդիսանալով միջնադարյան արվեստների մէջ այն առաջատարը, որը սինթեզում էր արվեստների համարյա մյուս բոլոր ճյուղերը:

Հայաստանը, ըստ էության, ճարտարապետության բացօթյա մի թանգարան է, որտեղ ամեն մի անկյունում հնարյավոր է տեսնել տարրեր դարերի պատկանող հուշարձաններ, գողարիկ ժատուններ և կամ լեռնալանչերի վրա արծաթազործի հմտությամբ բանդակված խաչքարեր:

Մէծ է մեր հայունիների կողմից ստեղծված ճարտարապետական կոթողների ճանաշողական նշանակությունը: Դարերի ընթացքում նվաճողների ձիերի սմբակների տակ կորել, անհետացել են մեր ժողովրդի մշակույթի շատ բարձրարվեստ գործեր, և Հայ ժողովրդի պատմության մեջ զիշ չեն այնպիսի ժամանակները, երբ նրա արվեստի մասին հիմնականում խոսում են լեռների, կիրճների ու անտառների խորրում թաքելված հուշարձանները՝ անխոս վկանները այն բարձր մշակույթի, որից, բացի այդ կիսակործան և ավերված կտուցվածքներից, համարյա թե ոչինչ չի հասել միզ:

Ժողովրդի պատմության առանձին շրջաններին համապատասխան, իր զարգացումն է ապրել նաև նրա մշակույթի, նրա արվեստը: Եղել են շրջաններ, երբ ժողովությու պահպամ է եղել սուր վերցնել Հայրենի օջախը պաշտպանելու համար: Եղել են խաղաղ շրջաններ, երբ ոչինչ չի մթազնել հորիզոնը, և վեր են բարձրացել ազաններն ու բաղաբները, շինացել բնակավայրերը: Սակայն Եղել են նաև տագնապով ին շրջաններ, երբ մշակույթն էլ էր դառնում զենք, և վեր էին խոյանում հոյակերտ կոթողներ, իրեն ուժի և կորովի խորհրդանշան:

Դժբախտաբար, շատ կցկառուր են մեր տեղեկությունները միջնադարյան Հայաստանում շինարարական գործի կազմա-

կերպման հղանակների մասին: Սակայն արդեն IV—VII դդ. հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած հատակագծային և ծավալային կոմպոզիցիանների մեջ նկատվող բազմապիսի ձևերին, հայկական հուշարձանները աչքի են ընկեռում իրենց ոճական միասնականությամբ, համաշափական ամբողջական համակարգի առկայությամբ: Դարեւը շարունակ հայ եկեղեցին իրաւունքություն էր սահմաններում պաշտամունքի կառուցվածքների ձևերի նկատմամբ, և միայն նպիսկոպոսի թույլտվությամբ էր, որ հնարավոր էր սրբազնայրերում շինարարություն կատարել: Հատուկ օրենքներ էին մշակված, որոնց համաձայն նպիսկոպոսներն իրավունք ունեին քանդելու պաշտամունքի ամեն մի կառուցվածքը, եթե նրա ընդհանուր ձևերը շհամապատասխանեին առաջադրված պահանջներին: Եթենարարական դորժն ընթառում էր իշխանների մոտ ժառայության մեջ զտնվող գործակալների վիրահակողության տակ:

Կառուցվածքների բարձր որակը, նրանց ոճական միասնականությունը, համաշափությունների մտածված օգտադորժությունը վկայում են միաժամանակ, որ հուշարձանները կառուցվել են բազմամյա վերձ ունեցող բարձրորակ վարպետների կողմից, որոնք ամեն մի կառուցվածքն ավարտելուց հետո ոչ թե ցրվել են, հեռացել, այլ նույն այդ հիմնական խմբով սկսել են մեկ այլ շինություն: Այդ հիմնական խմբի զննկավարը եղել է նարաւարապետը, որի աշխատանքը լիովին անշատված է եղել մյուս վարպետների աշխատանքից: Համեմատարար վերը հուշարձաններում նու որմնադիրների զննկավարն էր, զինավոր վարպետը:

Բացի հուշարձանների առանձին մասերի նշանագծումից և շինարարական աշխատանքների անմիջական վերահսկումից, նարաւարապետն էր, որ պիտի կազմեր կարեռ հանդուցյների մանրակերտերը, և նրա ցուցմունքներով էր, որ պետք է տեղադրվեին ամեն մի առանձին մանրամասն, ամեն մի զարգացման ժարաւարապետների հիմնական դորժներներն էին լարը, քանոնը, կարկինը, և այսօր նու շատ հուշարձաններում կարելի է տեսնել առանձին տարրերի տեղա-

որբան ու նշանագծման հետքերը, կատարված մի ինչ-որ սուր գործիքի և քանոնի միջոցով։ Այսպես, օրինակ, Զվարթ-նոցի սյուների խարիսխների տեղերը Հիմնավատերի վերին Հարթությունների վրա նշանագծված են արտակարգ ճշտությամբ։ այստեղ ցույց են տրված ոչ միայն խարիսխների կենտրոնները, այլև նրանց բոլոր սահմանները, որը և հնարավորություն պիտի տար որմնադիր վարպետներին կորազիծ Հիմնաւակի վրա խարիսխը տնօղավորել ճիշտ այնպէս, ինչպէս նախատեսված էր ճարտարապետի կողմից։

Յավոր, մեզ ոչինչ հայտնի չէ, թե ինչպիս էր կատարվում այս կամ այն հուշարձանի նախազիծը։ եղի՛լ են զծաղրեր, թե ոչ, եթե եղել են, ինչպիսի՞ք են եղել նրանք, ինչպի՛ս են իրականացվել տեղում։

Այն հանգամանները, որ հայկական հուշարձանները կառուցվել են խիստ որոշակի համաշափական սիստեմների հիման վրա, որտապարտվել են միաւնական շափական միավորներ, կասկած չի թողնում, որ հետում ևս եղել են համապատասխան զժապրենր։

Պատմիչների մոտ պահպանվել են տեղեկություններ հուշարձանների մասին, որից պարզ է դառնում, որ նախքան շինարարությունը սկսելը ճարտարապետները պատվիրատուններին (կոմիտորներին) ներկայացրել են ապագա կառուցվածքների մանրակերտերը։ Մակայն թվում է, թե դրանք միայն ընդհանուր պատկերացում կազմելու համար են ստեղծվել, և աշխատանքները իրականացվել են կոնկրետ զծաղրերի հիման վրա (վերջիններիս գոյության մասին կորեկի է ենթադրել մի քանի հուշարձանների պատերին, հարդ սպազմի վրա արված զժապրերի հիման վրա)։

Բնականարար հարց է առաջանում, ովքե՛ր են կառուցել այդ նշանավոր կոթողները, և ի՞նչ է մեզ հայտնի այն մարդկանց մասին, որոնք վեր են բարձրացրել Հոկտիմենն և Զվարթնոցը, Աղթամարն ու Անին... Համարյա թե ոչինչ։ Միշնադարյան պատմիչները զանը չեն խնայել միառանելու թաղավարներին ու իշխաններին, կաթողիկոսներին ու

ևսիսկոպոսներին, գովերգելու նրանց շինարարական դուժունեռությունը, այս կամ այն տաճարի կառուցումը:

Սակայն որբան մշատ են նրանց այդ հոյսելներա կառուցների իտկական կերպուղներին հիշատակելու ժամանակ, որբան քիչ անուններ են մեզ հայտնի այդ կարգի մարդկանցից, որոնք, առավել քան որեւէ այլ մնկը, արժանի էին հիշատակման:

Հարտարապետների մասին մեր ունեցած անդեկությունների հիմնական ազգյուրներն են վիմական և հատկապես շինարարական արձանադրությունները, թեև այստեղ էլ իշխաններն ու ևպիսկոպոսներն են, որ հանգստ նն զալիս որպես կառուցողներ, և խիստ հզակի դեպքերում է, որ հիշատակվում է հարտարապետի անունը: IV—VII դարների բազմաթիվ հոյսելներու հուշարձանների կառուցողներից հայտնի է երկու հարտարապետի անուն միայն՝ առաջինը Բագավանի տաճարի (631 թ.) հարտարապետ Իորայի Գուաղնեցին է, իսկ մյուսը՝ Թոգոսակը, որը VII դարի սկզբում իր ընկերների հետ միասին կառուցել է Աթենիի տաճարը (Վրաստան):

Չըսվարարվելով իրենց անուններն հավերժացնող արձանադրություններով, իշխաններն իրենց պատկերացանդակներն են տեղադրում տաճարների պատերին. կանգնած ամբողջ հասակով, նրանք Թրիստոսին են մենքնում տաճարների մանրակերտները և կամ ձևոքները պարզած դեպքի երկնային ամբակալը՝ ազութում հոգու փրկության համար: Այսպիսին է Մրենի տաճարի (639 թ.) արևմտյան մուսարի հակատակալ քարի վրա բանդակված կոմպոզիցիան, որտեղ Թրիստոսին և նրա երկու կողմերում պատկերված առարյաններին են ազութում Կամմարական իշխանները, որոնց անուններ պրված արձաններությունն էլ անդավորված է նույն արևմտյան հակատի կենարունական մասում: Այսպիսաս հետարբիր են Սիոնավանի տաճարի (VII դ. վերշ) պատկերացանդակները, որտեղ պատկերված են Կոհազատ իշխանը և նրանից աշ և ձախ՝ բարձրաստիճան հոգևորականներ:

VII դ. սկզբում կառուցված Պաղնիի տաճարի հարտարապետի հակատում, որբանակերների շարքում տեղ են շահել

ուաճարի կտիտորի փառապանծ նախնիները, IV դ. Հայ-
պարակական պատճբազմում զահ գեացած Աժատունի իշ-
խանները, որոնք պատկերված են Հղոր թշնամու՝ առյուծի
դիմ մենամարտելու պահին: Անցան գարեր, և X դ. կառուց-
ված Աղթամարի տաճարի պատճբին ևս տեղ գտան Արծրուն-
յաց երկու նահատակ իշխանների դիմաքանդակները, որոնք
դառնում VIII դ. զահ էին գնացել արարների բանություններին:
Եվ այս ամենի կողքին, նույն Աղթամարի Հարյուրավոր
պատկերաբանդակների շարրում տեղ չի գտնվել տաճարի
ճարտարապետի և բանգակագործի՝ Մանուկի դիմաքանդա-
կի համար, ճիշտ այնպես, ինչպես նույն X դարի վերջում
գործող ճարտարապետ Տրդատի անունը նույնիսկ չի փորա-
գրվել նրա Հոյակերտ կտոռցվածքներից ևու մեկի պատի
պյառ:

Բնականաբար Հարց է առաջանում, ինչո՞վ բացատրել
այս ամենը: Չէ՞ որ լավ Հայանի է, թէ ինչը ան մեծ էր շի-
նարար-ճարտարապետի պատիվը միշնադարյան Հայատա-
նում և շինարարական գործը ինչպես էր փառաբանվում Հա-
յաց հին առասպեկներում:

Շինարար-ճարտարապետի այս բարձր պատիվը փաս-
տորն յուրացվել էր ֆեոդալական վերեախավի կողմից, և
վերջինիս եերկայացուցիչները, թագավոր թէ՛ կաթողիկոս,
իշխան թէ՛ նպիսկոպոս շանը չէին խնայում իրնեց վերա-
գրելու նրանց մեծ գործը, իրենք էին հանդես դալիս որպես
մեծ շինարարներ: Թագական է վերհիշել, թէ ինչպես քրիս-
տոնեաթյան տարածման առաջին իսկ շրջանում մշակված
լիդներներում որպես շինարարներ են ներկայացվում և
Գրիգոր Լուսավորիչը, և Տրդատ արքան: Գրիգոր Լուսավո-
րիչն ինքն է լարը ձեռքին նշանագծում Հոփիսիմեի դամբա-
րանը, իսկ Տրդատ արքան իր ուսերի վրա Մասիսի լանջերից
պոկած ապառամեներ է քերում:

Ահա այս է պատճառը, որ սովորաբար շինարարական
արձանագրություններում ֆեոդալական վերնախավի ներկա-
յացուցիչներն են հանդես գալիս որպես շինարար-կառուցող-
ներ, և հենց նույն այդ միաբեր են արտահայտում նրանց

բարձրաբանդակեները՝ տաճարների մասրակերտերը ձեռքներին, Թրիստոսի առջև կանգնած։ Աշա այս առնչությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Զվարթնոցի պատկերաբանդակեները։ Այսուհեղ, 32 նիստ ունեցող տաճարի կամարադեզների հատման անկյուններում տնօպարզած էն եղել շինարարական գործիքները ձեռքներին մարդկանց կիսանդրիներ, ընդ որում 32 քանդակից պահպանվել է միայն յնը, այն էլ խիստ վնասված դրությամբ։ Տարածված է այն կարծիքը, որ այնունզ իբր պատկերված էն կառուցող վարդեաները, իսկ նրանցից մեկը, որի մաս էլ պահպանվել է Յոհան մակագրությունը, իբր եղել է տաճարի գլխավոր ճարարարապետը։ Նման կործիքի հետ անշուշտ չի կարելի համաձայնել։

Չպետք է մտանալ, որ Զվարթնոցը կառուցվում էր VII դարում, երբ տաճանյակ հայուկապ տաճարներ կառուցող ճարտարապետների անունները նույնինի չեն հիշատակվում, երբ նույնինի տաճարի կառուցմանը ականատես Սերեսը ոչ մի խոսք չի ասում Զվարթնոցի ճարտարապետի մասին։ Աշա այս պայմաններում հազիվ թե տաճարի վրա տեղ դանեին ոչ միայն ճարտարապետի, այլև շինարար վարպետների (թվով 32) կիսանդրիներ։ Պահպանված զիմարանդակեները ներկայացրել են կոնկրետ անձնավորությունների, և քարերի եղբայրին թերեւ գործադրված են եղել նրանց անունները։ Այդ դրություններից անազարտ վիճակում մեղ է հասել միայն մեկը՝ փորագրված Յոհան անունով՝ Հոգևորականի վիճարով մարդու պատկերաբանդակի մաս։ Մեացած բոլոր քանդակների նորմերը ջարդուաված են, իսկ զրությունները անհետ կորած։ Այսպիսով, ոչ մի հիմք չկա ննթազրելու, որ հատկապես Յոհանն է տաճարի ճարտարապետը, մանավանդ որ նրա պատկերաբանդակը կատարողական տեսակենակից քառ էլության ոշնչով չի տարբերվում մյուս պատկերաբանդակեներից և ներկայացված է ճիշտ նույն գործիքները ձեռքին, ինչ որ մյուս քանդակներում պատկերված անձինք։

Կառկած չի հարուցում, որ այնունզ պատկերված են ոչ թե տաճարը կառուցող վարպետները, այլ սիմվոլիկ ձևով՝

Ֆեոդալական վերնախավին պատկանող այն անձինք, որոնք
այս կամ այն կերպ օժանդակների են տաճարի շինարարու-
թյանը և դրա համար էլ արժանանալով մեծ պատվի՝ պատ-
կերվել են որպես տաճարի շինարարներ:

* * *

Է՛լ ավելի կցկուուր են մեր տեղեկությունները կառուցաղ
բան վարպետների և քարտաշ-որմնադիրների մասին։ Միակ
բանը, որ հասել է մեզ նրանցից, դա այն նշանագրերն են,
որոնց մեկը երկրաշափական գծվածքների, մեկը հայկական
այբուրենի տառաձենների նման փորագրված են քարերի վրա
և ժամանակին նպատակ են ունեցել դյուրացնելու աշխատան-
քի հաշվառման գործը, տարբերելու մեկ քարզործ վարպետի
աշխատանքը մյուս վարպետների քարերից։ Այն հանգա-
մանը, որ նշանագրերում հանդիպում են զգալի քանակու-
թյամբ հայկական այբուրենի տառեր, որոնք բոլորն էլ լավ
դժադրված են և իրենց կատարման որակով բնազ ետ չեն
մնում նույն դարաշրջանի արձանագրությունների մեջ օգտա-
գործվող տառերից, որոշ հիմքեր են տալիս պնդելու, որ Հին
Հայաստանում, նույնիսկ հասարակ ժողովրդի մեջ՝ սովորա-
կան քարտաշների շրջանում, զգալի էր դրազետների թիվը։
Ինքին հասկանալի է, որ անգրագետ քարտաշը որպես նշա-
նագիր շիր ընտրեն այբուրենի որևէ տառը, այլ անշուշտ կզե-
րադասեր Երկու-երեք զծիկներից կազմված նշանները, որոնց
ամենաստարբեր ձեմքը տեսնում ենք քազմաթիվ հուշարձան-
ներում։

Մյուս կողմից այն փաստը, որ նշանագրերում հանդի-
պում են միայն հայկական այբուրենի տառեր, վկայում է
IV—XIV դարերի հայկական հուշարձանները կառուցող վար-
պետների ինչպես ազգային պատկանելության, այնպես էլ
այլ երկրներից վարդետներ հրավիրելու սովորության բա-
ցակայության մասին։ Դրա հետ մնկանդ այն փաստը, որ
հայկական այբուրենի տառերով քազմաթիվ նշանագրեր են
հանդիպում Հայաստանի առնմաններից գույս (վրաստա-
ներում)։

նում՝ Զվարի, Աթենի, Աղվանքում՝ Դեբեննա և այլն), ինքնին արդեն վկայում է հայ վարպետների շինարարական գործունեության մասին նաև հարեան Երկրներում, մի գործունեություն, որն առանձնակի ժամանակակից ժամանում ԽI—XIV դարերում:

Պատմական հաջորդ շրջանից՝ IX—XI դարերից թեև մեզ ևն հասել մի քանի տասնյակ անուններ միայն, սակայն դրանց մեջ առանձնանում են Մանուկին ու Տրդատը՝ իրենց ժամանակից ամենանշանավոր քանդակագործ-ճարտարապետները, որոնց մասին ակնածանքում են իսոսում ժամանակակից պատմիչները: Մանուկ... Վասպուրականի Արծրունյաց թագավորական տան զբանավոր ճարտարապետ-քանդակագործն էր նա, և ինչպես պատմիչն է զբում՝ ուսցի իր իմաստութեամբն և զորաւոր ի զործն իւրա: X դարի սկզբին Դադիկ Արծրունի թագավորը զգալի աշխատանքներ է ծավալում Ռոտան և Աղթամար քաղաքներում, կառուցում նաև հաճանգիստներ և պալատներ, տաճարներ ու պրուավայրեր...

Մանուկի տաղանդը հատկապես զբանարվում է արքայական պալատական կառուցվածքների և տաճարների շինարարության ժամանակ: Ոստան քաղաքում, ծովամատուցմի վայրում, ինչպես նկարագրում է պատմիչը, նա Հիմնադրում է մի շքնազատների պալատ, որն ուներ ընդարձակ նկարագարդ և լուսավոր գաւզիներ, բազմաթիվ սենյակներ, որտեղից Հիանալի տեսարաններ են բացվում զերպի հեռավոր հորիզոններն ու լճի ծփացող շրերը: Մի ընդարձակ պալատ էլ կառուցում է Մանուկը Աղթամարում և նրանից ոչ հեռու պալատական այն Հիանալի եկեղեցին, որը հրշանիկ պատմականությամբ կանգուն է մենցել և հասել մինչև մեր օրերը:

Որոշ ձեւագոխումներով պերարտադրելով Հոփիսիմեատիս Զօրագիրի ավանդական Հորինվածքը, Մանուկը մշակեց տաճարի արտաքին հարդարանքի մի խիստ ուշագրաւ ժամակարդ, որտեղ կառուցվածքը շրջանցում են բարձրաքակեների հինգ գոտիները և նրա պատերը դարձնում աշ-

խարհիկ սյուժեների, հին և նոր կտակարաններից վերցված թեմաների մի պատկերաշաբաթ Տաճարը բարձրանում էր որպես Արժրունյաց թագավորական տան եկեղեցին, և պատահական չէ բնավ, որ արևմտյան ճակատն ամբողջությամբ հաստկացված է Գաղիկ Արժրունի թագավորի կտիտորական կոմպոզիցիային: Ամբողջ հասակով կանգնած է նա ծիրանին հաղին և տաճարի մանրակերտն է պարզում իր դիմաց կանգնեած Քրիստոսին:

Մենուելի տաճարի այս հոյակերտ պատկերացանդակները այնպիս էլ նկակի մեացին հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ, և չենք կարող նշնչ և ոչ մի հուշարձան, որն այս տեսակետից կարողանար համեմատվել Աղթամարի հետ:

Անցավ կես դար, և երկրի Հյուսիսում, այս անգամ արդեն Բագրատունյաց մայրաքաղաք Անիում, փայլատակեց մեկ այլ հանձնարեզ ճարտարապետության կազմակազործի անունը՝ Դա Տրդատն էր, որին Բագրատունի թագավորները հանձնարարություն էին իրենց առավել նշանակալից զործերը թէ՛ Անիում և թէ՛ նրա շրջակայրում: Եվ երբ 961 թվականին Բագրատունյաց մայրաքաղաքը փոխադրվեց Անի, նրանից ոչ շնոր գտնվող Արդինա ավանում Տրդատն էր, որ կառուցեց կաթողիկոսական եկեղեցին:

989 թ. Սմբատ արքայի հանձնարարությամբ Տրդատը ձեռնարկեց Անիի Մայր տաճարի շինարարությանը, որը հայկական ճարտարապետության ամենանշանավոր կառուցվածքներից մեկն էր առհասարակ: Տրդատի համբավն անցել էր երկրի սուբանձներից և նրան լավ էին հանաշում Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում: Պատահական չէ բնավ, որ հատկապես նրան հանձնարարվեց 989 թ. Կոստանդնուպոլսի առավել նշանավոր տաճարի՝ ս. Սոֆիայի գմբեթի վերականգնման դորժը, որը խիստ վնասվել էր երկրաշարժից: 1001 թ. Տրդատն ավարտեց Մայր տաճարի կառուցումը և Գաղիկ Բագրատունի թագավորի հանձնարարությամբ ձեռնարկեց ս. Գրիգոր (Գաղկաշեն) զվարինոցատիս Լենդեցու կառուցումը Անիում: Նորակառույց հոյա-

կերտ տաճարը Անի պիտի տեղափոխելոր ավանդություններով և ժամանակով սրբագրութված, երկրաշարժից կործանված Զվարթնոցի փառքը, վճրականուներ նախորդ դարերի այդ շքնազակերտ կոթողը: Սակայն նորակառուց տաճարը բնավի է և Զվարթնոցի կրկնօրինակը շքարձավ. պահպաններով Հիմնական կոնստրուկտորի ակզյունքները, Տրդատը կառուցներ ժամանակի ոգուն համապատասխան մի տաճար՝ համահնչյուն նոր զարաշքանի ոճական նոր ուղղությանը:

Հաստատ կերպով կարելի է ասել, որ Տրդատի ոչ բոլոր զորքերն են այժմ մնող հայտնի: Թվում է, որ որոշակի Հիմքեր կան հնիտողներու, որ նրան են պատկանում Հաղպատի տաճարը և Անիի միջնաբերդի ճարտարապետական համալիրի հիմնական դաշինները: Տրդատը միաժամանակ նշանավոր քանդակագործ էր: Այդ է վկայում և՛ Գաղիկ Բագրատունու Հոյակերտ արձանը, և՛ Հաղպատի կոփորական կոմպոզիցիան՝ Մմրատ և Գուրդեն թագավորների ֆիգուրներով հանդերձ:

IX զարի վերջից սկսվում է զարգացման մի նոր շրջան, երբ առաջատարն էր արդեն աշխարհիկ ճարտարապետությունը: IX—XIV դարերից հայտնի են արդեն շուրջ մի քանի տասնյակ ճարտարապետների անուններ, որոնց թվում այնպիսի մեծ վարպետների, ինչպիսիք են Ժամհայրը, որը 1181 թ. կառուցել էր Սանահեի զավիթը, Մինասը, որը 1248 թ. կառուցել էր Հաղպատի սեղանատունը, Գալճաղը, որը XIII դ. կերտել էր Գեղարդի ժայռափորերը: XIII դ. վերջին և XIV դ. սկզբին էր գործում նշանավոր քանդակագործ-ճարտարապետ և նկարիչ Մոմիկը՝ Սրբելլյան իշխանական տան շատ կառույցների հեղինակը: Նա նշանավոր մանրանկարիչ էր, առաջնակարգ քանդակագործ, որի խաչքարերն ու պատկերաբանդակները Արենիում և Նորավանքում իրենց խիստ որոշակի տեղն ունեն հայ քանդակագործության պատմության մեջ առհասարակ: Եվ զրա հետ միասին նա հեղինակն է այնպիսի ուշագրավ կառուցների, ինչպիսիք են Արենիի եկեղեցին և 1339 թ. կառուցված նորավանքի երկ-

Հարեկ դամբարան-նկեղեցին՝ հայկական միջնադարյան ճարտարապետության կարապի երդը:

XIV դարի կենսերից սկսած անասելի ժանրանում է մոնղոլների հարեկահամաքությունը, վայրագ ցեղերի ասպատակությունները ի վերջու քայլայում են երկրի տնտեսությունը, և մոնումենտալ շինուարագությունը կանոն է առնում շուրջ մի քանի դար: Եսատ հայ վարպետներ գերի են քշվում հեռավոր երկրներ՝ կառուցնելու օտար բնակալների մզկիթներն ու պալատները: Եվ այս ժամանակ, երբ հայրենի երկիրը հեծում էր օտար բնակալների լծի տակ, հայ վարպետների ձեռքում, արդեն օտար երկրներում, կյանք էր առնում վայրի ապառաժը, իսկ հայկական խաղողն ու նուռ, հայկական զարդաձևները ծածկում էին մուսուլմանական շատ մզկիթների ու պալատների որմնասյուները: Այսպես, հայ վարպետ Գալուստը կառուցում է սելջուկյան ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, հայ վարպետ Կալոյանը՝ Սերաստիայի մզկիթը, հայ վարպետ Թագավորը՝ Մալաթիայի մզկիթը և այլն:

Եվ միայն XVII դարում որոշ նախադրյալներ են ստեղծվում ճարտարապետության զարգացման համար, սակայն միջնադարի մեծ մշակույթը այնպես էլ չվերականգնվեց: Բայց այս ժամանակներում ես ստեղծվեցին ուշագրավ գործեր. նշենք Տաթեսի մեծ Անապատը, Էջմիածնի Շողակաթն ու Էջմիածնի տաճարի զանգակատունը և Մուղնիի տաճարը:

Մեր նոպատակը չէ վերլուծել հայ միջնադարյան բոլոր հայունի ճարտարապետների պորժերը: Բողոքելով այս առաջային, մենք այսանդ կանոն կառնենք միայն երեք, իսկապես հանճարենդ, իրենց գարուաշրջանների առավել նշանավոր ճարտարապետ-քանդակագործների՝ Մանուկյի, Տրդատի և Մոմիկի ստեղծագործությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն իսկապես մի նոր էջ է բացել հայկական միջնադարյան ճարտարապետության և քանդակագործության ընագույնություն և իր ուրայն տեղն ունի միջնադարյան մշակույթի պատմության մեջ:

Հայկական ճարտարապետության և քանդակագործության պատմության մեջ մի նոր է բացեց Աղթամարը՝ Վասպուրականի Գաղղիկ Արծրունի թագուհի մայրաքարտ հայրաբազում, հիմնադրված Խ դարի սկզբին։ Այն տեղավորված էր Վանա լճի համառուն կղզու վրա և շրջապատված էր ամրակուռ պարսպապատերով, առանձին, աշտարակներով ուժիղացված ամրություններով։ Քաղաքի մի մասն էր կազմում միջնաբերդը՝ նրա պաշտպանական շննդիրով, պալատական տաճարով և այլն կառույցներով։ Ճոխ, դարդարուն քաղաքում բազմաթիվ ապարանքներ էին կառուցել և նաև իշխաններն ու մեծահարուստները։

Իրենց Հզորությամբ մրցելով Շիրակի Բագրատունիների հետ՝ Արծրունյաց իշխանները ջանք չէին խնայում առանձին թագավորություն ստեղծելու և աօնելին՝ տիրանալու հայոց թագավորական դահին։ Այդ մի շրջան էր, երբ պետականության վերականգնումը, քաղաքների պարզացումը և աշխարհիկ մատադորության ընդացնումը իրենց անմիջական դրսերումը գտան մշակույթի տարրեր բնագավառներում։

Երկրի ֆեոդալական մասնառվածության պայմաններում ճարտարապետության և արվեստների զարգացումն ընթանում էր տարրեր զեղարվեստական զարոցների շրջանակներում, և նման զարոցներ են կազմագործում Սյունիքում, Վասպուրականում, Արարատ-Շիրակում։

Առանձնակի բնորոշ է, որ թագավորական կամ Հզոր իշխանական տները ունեին իրենց գլխավոր ճարտարապետական գործութեանները, որոնք և կառուցում էին նրանց նստավայրերի ու մայրաքարենների հիմնական շննդիրը։ Այդպիսի էին Սանուելը՝ Վասպուրականում, Տրդատը՝ Անիում և ազիկի ուշ՝ Մոմիկը Սյունիքի Օրբելլյան իշխանների տիրություններում։

Եթե Անիից մեզ են հասել բազմաթիվ կառույցներ՝ պարփակված Հզոր պարտապատերի նույնում, առաջ Վասպուրա-

հանի դեղատեսիլ մայրաբազար Աղթամարից մեջ է հասել
Մանուկյան միայն Պաղիկ Արծրունու պալատական
եկեղեցին:

Սակայն պահպանվել են ժամանակակից պատմիչներ
թուվուա Արծրունու և նրա պատմությունը շարունակող Ան-
աւուն Արծրունու հիշատակությունները, որոնք արտակարչ
հետաքրքրություն են ներկայացնում: Այս առնչությամբ մեծ
արժեք է ներկայացնում Պատապուրականի մյուս քաղաքների
և հասկապես Ռատանի միջնարերդի մանրամասն նկարա-
դրությունը, որի շինարարությունը նախորդել էր Աղթամա-
րին, և ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, ակրն-
հայտ են սրոշակի ընդհանրությունները Ռատանի և Աղթա-
մարի պալատական համալիրների ճարտարապետական հո-
րինչածքների միջև: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ
միշտ Աղթամարի հիմնագրութը Մանուկյան աշխատել է Ռա-
տանում և դեռևս Աղթամարից էլ առաջ եղել է Արծրունյաց
առան զբանավոր ճարտարապետը:

Մանուկյան մասին պատկերացում կարելի է կազմել ել-
ենուավերաց նրա գործնրից միայն: Պատմիչը լի հազորդում և ու-
մի կհիսագրական մանրամասն:

Արծրունիների շինարարական աշխատանքների պահպ-
ուարձավ Աղթամարը՝ Պաղիկ արքայի մայրաբազարը և հատ-
կապես նրա միջնարերդի կառուցները, պալատն ու տաճա-
ռը:

Տարակույս լի կարող լինել, որ Մանուկյան Աղթամարում
պետք է, որ կառուցած լինեն նաև այլ շենքեր. սակայն այդ
մասին մեջ ոչինչ չեն հազորդում պատմիչները: Եվ կարծես
որու փոխարեն մեջ է հասել Պաղիկ թաղավորի պալատի
մանրամասն նկարագրությունը, որն այս տեսակետից եղա-
լի էր ենույթը և ներկայացնում:

ԱՂԹԱՄԱՐԻ ՊԱԼԱՏԸ

Աղթամար քաղաքի ճարտարապետական ամենանշանա-
վոր հանգույցն էր միջնարերդը՝ Պաղիկ Արծրունու պալատի

և պալատական եկեղեցու հետ մեջտեղ՝ Դժբախտաբար, Համալիրի աշխարհիկ շենքերը չեն պահպանվել, և նրանց տարածական ձևորդի մասին պատկերացում կարելի է կազմել միայն թովմա Արծրունի և Անանուն Արծրունի պատմիչների։ Հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ Սակայն նույն այդ պատմիչների մոտ կարելի է առջեկություններ գտնել նաև Վասպուրականի այլ բաղաքների, նրանց պարագական համալիրների մասին, որոնց համեմատական ուսումնառիրությունը օգնում է բացահայտելու և ճշտելու մեջ հետաքրքրող Աղթամարի պալատական համալիրի կազմակերպան նախադրյալները¹։

Նման նշանավոր կենտրոններից էր Ռոտան բազարը՝ սեղագործած Վանա լճի հարավային ափին՝ Աղթամար կղզուու դիմաց։ Ինչպես նշում է թովմա Արծրունին, այսուղի շենքեր էր կառուցել դեռևս Պաղիկը Արծրունի թագավորի հայրը՝ իշխան Դերենիկը։ Պաղիկը է՛լ ազելի է ճոխացնում բազարը, ամրություններ և այլնայլ շենքեր կառուցում այնուզ։ Պատմիչը գրում է, որ «Պաղիկը բարեշինեց պարսպավոր ամրությամբ նշանակաց Ռոտանի բլուրը, որն ավերվել էր բազում տարիներ ի վեր։ Վերաշինեց նաև եկեղեցին, որն այնուզ է և կոշվում է սուրբ Մարիամ Աստվածածնի անունով...»։ Բազմաթիվ շենքեր է կառուցում նաև Վանի միջնարեցում՝ Ամրականում, և այդ թվում ռոսկեզօծ, պատրշպալավոր խրախնամանյակներ ավելացնելով ավելի առաջիք հոք՝ Պերենիկի շինվածիներ²։

Ռոտան բազարի և պալատի մասին ավելի մանրամասն անդեկտություններ է հաղորդում թովմա Արծրունու պատմությունը շարունակող Անանուն Արծրունին։ Վերշինս նկարապատում է բաղաքի շրջապատք, բուն բազարը և հատկապես շրջապատեաի պարագաներ։

¹ «Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն առնեն Արծրունուց»։ Քիչք, 1917։ Թավմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունուց առնեն, բարզմահամբաւ Վրեմ Կարգահայտի, Երևան, 1978։

² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 258։

³ Նույն անգում։

Հայ պատմիշներն առհասարակ խիստ զուսպ են հար-
տարապետական հուշաբանները նկարագրելիս, իսկ Արծ-
րունյաց պատմիշներն իրապես բացառություն են, կառենք
երջանիկ բացառություն, որովհետեւ այն դեպքում, երբ մեզ
չի հասել ամբողջական զրությամբ և ոչ մի պալատական
կառուցվածք, ականատեսների նկարագրությունը իրոք ստա-
նում է սկզբնապրյուրի նշանակությունը: Եզր իսկապես, ի՞նչ է
մեզ հայտնի հայկական թագավորական կամ իշխանական
պալատներից: Փաստորեն՝ շատ քիչ բան:

Վաղ միջնադարյան նշանավոր պալատներից (Դիբին,
Զվարթնոց, Արուճ) մեզ են հասել կառուցվածքների պատերի
ներքեի մասերը միայն, լավագույն դեպքում մի քանի շարք
բարձրությամբ: Ազեղի բարզոր վիճակում շնորհական մեջ
Անիի պալատական կառուցվածքները, որոնց վիճատակների
պեղումները բացեցին նրանց հասակագֆերը միայն և շնչին
մնացորդներ այն հոյակապ հարդարաների, որը զոհ էր զե-
ցել կրակին և թշնամիների ավերածություններին:

Նման պայմաններում հայկական թագարացիական հար-
տարապետության պատկերման հարցում առաջնակարգ նշա-
նակություն են ստանում Արծրունի պատմիշների տեղեկու-
թյունները, որտեղ թեև շատ քանի պարզ չէ ներքին հորին-
վածքի, բարյային կռնատրուկցիաների և զերչապես պալատի
կաղմության մասին ընդհանրապես, սակայն վառ, զեղեցիկ
նկարագրությունները հնարավորություն են տալիս ընդհա-
նուր պատկերացում կազմել այդ նշանավոր կառուցների
ժամին:

Ռատան քաղաքի պալատը (որը նախորդել է Աղթամարի
պալատին և էտիկան նշանակություն ունի զերցինիս ձևերը
համեմալու համար) բավականին մանրամասն նկարա-
գրում է Անանուն Արծրունին, դրեւով հետեւյալը. «Ամրացի
դադաթը ծովահայաց է և շատ վայելուց: Երբ հոգմերից
հուզված ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները հա-
ճելի և զայելուց են երևում, իսկ երբ օդը հստակ է լինում,
դրավում է բոլորին՝ իր ծաղկալումը տեսնելու համար: Որի
պատճառով և թագավորը ձեռնարկում է նրա մեջ կառուցել

ուպարտանքներ, սենյակներ և գողոցներ հրաշալի, ոլոտէն-րավոր և տևակ-տեսակի հորինմաժբով, որո չեմ կարող պատմել։ Պարապում է նաև ծովակողմը զորավոր վեմերով, հիմքերը դեմքով տեսնարին խորության մեջ, իսկ պարապի վերեռում, ծովի առջև շինում է մի ճեմադահլիճ՝ զարդարված ոսկեզրոդ և պես-պես ներկերով, հույզ լուսավոր, աշբերը շոյերու հուրախություն իր սրտի և իրեն արժանիների։ Կաշ-մում է կամարատներ, օդարեր, զովացնող դռներ, միաժամա-նակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ժաշ-ման ու մայրամուտի պահերին փայլասակելով ժովի ովրա, դահլիճի սրտի մեջ են զցում իրենց շողերը, և պես-պես դույներով շրջշրջելով զրոշմված պատկերներն ու պանազան հորինվածքները, ապշեցնում են դիտողներին»⁴։

Ինչպես կտևսնենք ստորև, ակնէայտ են որոշակի ընդ-հանրություններ Ոստանի և Աղթամարի պալատների միջև։ Երկու դեպքում էլ ծովակողմը պարապատավում է հաստա-հեղյում, զեզի լիճը առաջացող հզոր պատերով, իսկ բռն պալատը բարձրանում է լճի մեջ ասածացող հրզանդանի վրա։ Մյուս կողմից այստեղ իրենց դրանորումն են գտն ամրաշինության հնավանդ ազգանությները, որոնք այսքան քնորոշ են Հայկական լեռնաշխարհի հնագույն ամրոցներին։ Այդ վերաբերում է Հատկապես ամրոցների անդարաշինմանը։ արդեն բրոնզի դարում բերդշեները մեծ մասամբ կառուց-վում էին երկու անդնդախոր կիրճերի հատումից ստացված հրզանդանների վրա, երբ բավական էր պարապատավում նուանկանինի տարածքի մի կողմը միայն, որպեսզի ստացվեր հուսալի պաշտպանված տարածություն։ Ահա այս սկզբունքն էլ հարատեսեց հնագա պատմական դարաշրջաններում։ Ուշագրավ է, որ Ոստանի պալատում ես առկա են աշխար-հիկ կառուցներին այնքան քնորոշ բաց սյունասրահները։ Վերշիններս լավ հայտնի են զեռն վաղ միջնադարյան պա-լատներում (Զվարթնոց, Արուճ)։

Բովմա Արծրունու նկարագրությունից արդեն պարզ է

⁴ Խոյն անդամ, էջ 295։

դասանում, թե Ռոտանում ինչպիսի մեծ նշանակություն է տրվել միջնաբնագի պալատական դահլիճների տեղաբաշխման հարցերին և ինչ հոյակապ տեսաբաներ են բացվել այստեղից: Նույն այս մոտեցումը յուրահատուկ էր հայկական աշխարհիկ հարուստապետության առհասարակ և իր դրսերումն էր գանում թե՛ Անիի, թե՛ Ամրերդի պալատներում: Եթե Ռոտանի ու Ազթամարի պալատների առջև ժգումն էին լճի կապուտակ ջրերը, ապա Անիի միջնաբնագի դահլիճները դասավորված էին այնպես, որ այնունզից հիանալի տևաբաները էին բացվում դեպի անդեղախոր կիրճերն ու Հեռավոր ձյանածառեկ լեռնաշղթաները, իսկ Ամրերդի պայտահ լուսամուտներից դիտվում էր ամրող Արարատյան հարթավայրը, Հորիզոնում բարձրացող Մասիսի զագաթերը⁵:

Ինչպես հիշատակում է Թովմա Արքունիքին, Դադիկ արքան պալատներ և որսորդական դրյակներ է կառուցում երկրի Հյուսիսային կողմում, Արաքս գետի մոտ, որտեղ և զբանը լըլում էր նրա որսատեղին՝ լի բազմաթիվ և բազմատեսակ

⁵ Ռոտանի, Ազթամարի, Անիի պալատների դահլիճների լայնարձակ բառամասների առկարությունը արմատապես մխումն է այն անսակեաց արի Համաձայն Հայկական վազ միջնադարյան պալատները և խեցույրը դահլիճները բառավորված են հղել միայն երդիկների միջոցով և բնավ չեն անձնել բառամասներ: ԸստՀակոսակը, կան բոլոր հիմքերը պնդերս, որ Հայկական աշխարհիկ մասնամետուազ կառուցվածքները և Հատկապես հայուրաբնակ և թշուածական պալատների դահլիճները միշտ էլ հղել չեն: բառավորված, ունեցնել են առանձինատ բառամասները: Այդ մասն է վկայում, անշատ, Թովմա Արքունու նիշառակության այն մասին, որ երբ պայտա և հասեռմ բնիսն Դիրենիկի գոհելու ընթը, ոև պատառներով վակում են պալատի բոլոր բառամասները և առաջ է ինձում լըրնակերա գահլիճների վրա: Այդ մասին է վկայում Բատանի պալատի ապահովագրությունը, որտեղ հասկացնա շնչառում է բառամասների պահելուրի վրա մայիս ջրերից անդրադառ ճառագայթների սիրառու խռով, Ազիցին, լավ Հայունի և բառամասների բոլորան աղակիները: Հայտաբերքամ Դիրենի պետամեների ժամանակ: Այս մասին ազիցին հանգաւահարեն տե՛ս Առ Անացուկանյան, Քարթնաց և Խոյեատիզ Հուշարձուները, Երևան, 1972, էջ 250:

կենդանիներով։ Այս լայնածավալ շինարարական աշխատանքների պատճեն իրազամբ դարձավ Աղթամարը⁶ Դագիկ արքայի նորակառուցյ մայրաքաղաքը, որն իր ճոխությամբ և շուրջով պետք է արժանի լիներ ամբողջ երկրի մայրաքարագիրի կոչմանը։

* * *

Աղթամար կղզին, շնորհիվ իր բարենպատ աշխարհագրական դիրքի, հետագույն ժամանակներից արդեմ ժառայել էր որպես Հուսալի ապաստարան, և այն ամբոց էր արդեն անհիշելի ժամանակներից։ Այդ են վեայում կղզու Հյուսիսարևելոյն մասում ուահանված կիկլոպյան որմածքի մեջացորդները, Հակա ժայռաբեկորներից շարժած անշաղախ ուատերի Հատվածները, որոնք անվերապական թվազրություն են նախառորդական շրջանով։

Ազելի ուշ ժամանակներից հայտնի է Սերեսի Հիշատակությանը այն մասին, որ VII դարում Բյուզանդական կայսրության զեմ մզած իր պայքարի ժամանակ⁷ Աղթամարում էր ամբացել Ծեսպորոս թշնամին։ Դժբախտաբար այդ շրջանի կառուցվածքներից ոչինչ չի հասկել մեզ. կառած չի հարուցում, որ այնտեղ եղած ամրությունները շատ ավելի բարօնք դրության մեջ էին և դարում, և նրանց առկայությունն էլ հավանաբար միաբ էր Հզացրել՝ այնտեղ տեղափորել Վասպորտականի մայրաքաղաքը։

Եվ իսկապես, ափից ոչ հեռու գտնվող այս կղզին վասառորներն ընական հիանալի մի ամբոց էր, որը միշտ էլ հետաքամուր էր Հուսալի կերպով պաշտպանել ամեն մի թշնամու հարձակություն։ Նման ամբոցը չէր կարելի գրավել առանց երեւարանի նախապատրաստական աշխատանքների, մանավանդունու որ անտառուղուրեկ ափերը ոչ մի հնարավորություն չէին տալիս միտքապական միջոցների՝ լաստերի պատրաստման

⁶ H. A. Орбети, Избранные труды, М., 1968, стр. 31.

⁷ «Սերեսի Ֆոխակոպսի պատմություն», Օրեան, 1939, էջ 104.

Համար: Բավական է վերհիշել, թե ինչպիսի հմտությամբ նույն այդ տարիններին երկրի հյուսիսում Սևան կղզին ոգտադրծեց մեկ այլ հայ թագավոր՝ Աշոտ Օրեաթը, որն ամրանալով Սևանում, կարողացավ ուժեր կուտակել և անցնելով հարձակման՝ զլխովին ջախջախնել թշնամուն:

Անունուն Արքունին առանձնեակի սիրով է նկարադրում Աղթամարի Հիմնադրումն ու այնունզ ծավալված շինարարությունը. Գաղիկ արքան, զրում է նա, «Հրաման տվեց բազմաթիվ արհեստավորների և անթիվ մարդկանց՝ կորել ծանրութվարակիր վեմ քարեր ու զցել ծովի անհնարին խոր հատակը: Այսպես մեծն արքան մի առ ժամանակ ջանքեր թափեց և անսպասելիորներ կանոնեցվեց, ծովից հինգ կանգուն բարձրությամբ, քարահատակ ամբարտակը»²: Պատմիչը նկարագրում է, թե ինչպես Նույն այդ ամբարտակի վրա նա կառուցեց հղուր մի պարիսայ, որը և անփոցելի էր դարձնում նավահանգիստն ընդհանրագենա: Նկարագրելով բռն քաղաքի կառուցապատռումը, պատմիչը զրում է, որ այնունզ իրենց առարանքներն էին կառուցում զանազան իշխանություններ, իսկ ինքը՝ «թագավորը, Նույն խելացի ըմբռնմամբ բազմաթիվ հարտարապետների հետ, վարպետի լարը ձեռքին, լեռան ստորառում, որը կղզու գաղաթն է, միանգամբ տեղը նշանակեց և զծաղրեց վայելուշ զրուատենդեր, զցեց թագավորութեան հանդաւավայրին արժանի պարխապներ, փողոցներ, բուրաստաններ, պարտեզներ, թագավորավայրել նատառեղեր: Մազկանոցների ու պարտեզների համար հատկացրեց հովիտները»³:

Ապա պատմիչը անդրադառնում է բռն պալատի շինարարությանը, նկարագրում այն, ընդ որում այդ նկարագրությունը եղակի երեսութիւն է ամբողջ հայ մատենագրության մեջ և արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում: Նա զրում է, «Եվ քանզի արքունի դռանը հավաքվել էին բազում արհեստավորներ, պատվագործ մարդիկ, ժողովված երկրի բո-

* Թավան Արծունի և Անոնչն..., էջ 296.

² Նույն անդում, էջ 297.

լոր ազգերից, որոնք կարող էին անել արքային կամեցածը և խսկույն դորժը կատարում էին համաձայն հրամանի: Թափառվորը հրամայեց նրանցից մեկին՝ նարարարապետ, իմաստունեւ հանճարեղ մարդուն, շինելու քառանկյունի պալատ, որի լայնության և երկարության շափը քառասուն կանգուն էր, նույնքան էր և բարձրությունը: Արա որմերի լայնությունը ուներ Յ մեծաքայլ շափ տարածություն: Որմերը անապակ կրի և քարի զանգված էին, որ իրար էին խռովնչված, ինչու կապարի և սրջնձի համաձաւլվածքը: Պալատի շինվածքը, Շիմբից մինչև օդի մեջ կամաված նրա զադաթը, մնում էր հաստատուն առանց սյուների, ինչն արդարեւ մտրից վեց է ու պարմաների արժանի:

Պալատն ուներ նաև կամարակապ խորաններ, անկյուններ և գեղապաճույն բոլորապատեր, որոնց մ' միտրը կարող է թվարկել և ո՞չ էլ աշքերը՝ զնենել: Այն ուներ նաև երկընքի պիս բարձր, ոսկեպարդ և լուսաճանանչ զմբեթներ, որոնց եթե մեկը կամենար նայել, թագավորին իրը պատիվ անելով, նախ պետք է հաներ դլիորից խոյրը և ապա, տանչելով պարանոցը, հազիր կարողանար նշմարել զանազան ներկեցով նկարված պատկերները»¹⁰:

Ապա պատմիչը նկարագրում է պալատի որմենանեկարները, նշում գահի մրա նստած արքային՝ շրջապատված պատասխներով և սպասավորներով, աղջիկների պատը, սունդարամարտիկների խմբերն ու թոշուների երամեները: Նա զրում է, որ «Պալատի մեծությունը ահավոր է ու ապշեցնող: Նրա մեջ դրված են մասր հորինվածքով, հրաշալի զեղեցկությամբ կարառված զռեներ, որոնք բացվելիս երկիֆեղիզում և թարմ օգ են ներս բերում, զովացնում: Իսկ երբ զուն վեհուկները կիու միանում են, երեսում են որպես մի ամրողություն»¹¹: Պատմիչը խոսում է նաև բուն շինարարական աշխատանքների մասին, հիշատակում մի դորժավարից քազած նեղենությունն այն, մասին, որ պալատի շինարարության

¹⁰ Նույն տեղում, էջ 238:

¹¹ Նույն տեղում, էջ 238:

զլյա իրր ծախսվել է 200 000 լիոր և բրկաթ և այլն¹²: Նա դրում է, թե ինչպես հաստահեղյուս պարիսպները հռւալիս-րեն պաշտպանել են ամրոցը, որտեղ շինված են եղել մեծամեծ շտեմարաններ և համբարանոցներ, ինչպես նաև դանձերի, բազմաթիվ զենքերի և ձիու զարգերի պահպաններ¹³: Պալատի հոյակերտ ժամվալներին համահնչյուն մշակված էին նրա ինտերյունները: Պատմիչը նշում է, որ «Եթե մեկը կամենա ըստ արժանվույն, մանրամասնարար գովարաննել կառույցի ողջ զարդարանները, ոսկենախչ ու զմբեթածածկ սրահները, զանազան զահույքները, որոնք փայլում էին դերահրաշապես, մեկը մշումից ավելի պայծառ, կարծում եմ, որ անհասության ձգտելով, կտառանվի և անկարող կլինիչ»¹⁴:

Աղթամար... Անուն այս իրավամբ առանձին էշ է բացում հայ մշակույթի, հայկական ճարտարապետության և բանդակագործության պատմության մեջ: Անանուն Արծրունին, հավատարիմ ժամանակի ոսկուն, քազաքի, նրա հոյակերտ կառույցների շինարարության վետքը վերագրում է Արծրունյաց Գագիկ արքային, որը, նրա խոսքերով, ճարտարապետի լարը ձեռքին տեղաբաշխում և նշանագծում էր բազարի կառույցները, նրա փողոցներն ու զրուսայգիները: Սակայն նա գրում է նաև մի նշանավոր վարպետի մասին, որը կառույցն էր պալատը և շի մոռանում հաջորդ գիտում հիշատակել ճարտարապետ Մանուկին, որին և հանձնարարել էր արքան կառույցն պալատական եկեղեցին:

Բնականարար հարց է առաջանում, ո՞վ է եղել պալատի ճարտարապետը:

Կառույցների նկարագրության հերթականությունից կարելի է նպակացնել, որ պալատի շինարարությունը նախորդել է տաճարի կառույցմանը: Այդ նշում է Հ. Օրբելին, գրելով, որ իր կարծիքով Մանուկի տաճարի որոշ ձեռքում իրենց

¹² Միշնադարյան լիորը հավասար էր 325 գրամի:

¹³ Թուվան Արծրունի և Անանուն.... էլ 299:

¹⁴ Նույն տեղում:

անդրադարձե են գտնէ պալատական կառուցի առանձին դրվագները:

Մեր կարծիքով, պալատի ճարտարապետի ինքնության հարցը հեարավոր է լուծել, համադրելով նույն Անահուս Արծրունու պատմության համապատասխան հավաքածները: Եվ իսկապես, պալատի կառուցումը նկարագրելու նա դրում է, որ Աղթամարում հավաքած էին բազմաթիվ արհեստավորներ և «թագավորը հրամայեց նրանցից մեկին՝ ճարտարապետ, իմաստուն և հանճարեղ մարդուն, շինելու քառանկյունի պալատական նկեղեցու կառուցման մասին, նա գրում է. «Եվ քանզի ճարտարապետն էր Մանուկը, իմաստությամբ լի և իր դորժում զորավոր մի մարդ, որին նիշատակեցին վերեւում (ըսդգծումը մերն է—Ս. Մ.), հրաշակերտեց նկեղեցին զարմանալի արվեստով»¹⁵:

Տարակույս չի մնում, որ այստեղ խօսքը նույն ճարտարապետի մասին է, և վերևում հիշատակված «իմաստուն և հանճարեղ» մարդը ոչ այլ որ է, քան «իմաստությամբ լի» Մանուկ ճարտարապետը:

*

*

Տոհմային պատմիշի դրշի տակ Աղթամարի այս նկարադրությունը, ինչքան էլ շափառանցված լինի, պետք է որ Հիմնականում արտահայտեր իրականությունը՝ Գագիկ արքան ոչինչ չէր խնայի իր նորաստեղծ մայրաբազարի համար: Մյուս կողմից՝ բավական է համեմատել իրականում գոյություն ունեցող պալատական տաճարը նրա նկարագրաւթյան հետ, համազվելու համար, որ պատմիշի տեղեկությունները շատ դժողովում անհամեմատ ավալի դուռագ են, սեղմ, քան այն, ինչ կա իրականում: Այս պայմաններում Աղթամարի պալատի նկարագրությունը, մի պալատ, որը կառուցված էր

15 Նույն տեղում, էջ 297:

16 Նույն տեղում, էջ 300.

արաբական վեհապետերի շքեզատեսիլ պալատները այցելած Գագիկ արքայի հրամանով, կառուցված որպես Հայոց թագավորի նատոց, անշուշտ շէր կարող իր շքեզությամբ համեալ որևէ հարևան թագավորության պալատական շենքերից:

Դժբախտաբար, թէ՛ բուն պալատից և թէ՛ ամբողջ զեղպատեսիլ այդ քաղաքից ոչինչ չասել մեղ. կանգուն է միայն պալատական նկեղեցին՝ միակ վկան ժամանակին այտետեղ կառուցված քաղաքի մասին:

Անանուն Արծրունու նկարագրության հիման վրա խիստ զժվար է որևէ կոնկրետ բան ասել քաղաքի ընդհանուր հատակագծային լուծման, փողոցների ցանցի մասին: Կարելի է ենթադրել (նենելով տաճարի անդաբաշխութից), որ թագավորական միջնարեզը անդամութած է եղել կղզու հարավարենիլյան մասում, հղոր պարիսպը անշտան է կղզու հիմնական մասից դեպի Հարավ-արենից ձգվող լեզվականման մի տարածություն՝ 300 մ երկարությամբ և մոտ 150 մետր լայնությամբ: Ահա այստեղ էլ, ամենայն հավանականությամբ, անդամութած էն եղել Գագիկ Արծրունու պալատը և նրան կից օժանդակ շենքերը:

Խէ՛ վերաբերում է պաշտպանությանն ընդհանրապես ապա Մանուկիլը լավ էր հասկանում, որ պարզապես հեաբառություր չէր պարսպապատ կառուցել կղզու ամբողջ պարագաների հնչույն կարելի է եղբակացնել պատմիչի հիշատակությունից, ամրացված նն եղել կղզու առավել զյուրամատչելի հատվածները, որտեղ առանձին հենակները նն կառուցվել իրենց համապատասխան զինանոցներով և համբարանոցներով հանդիր: Հենակներն այդ, ամենայն հավանականությամբ, ձգվել էին կղզու Հարավային և Հյուսիսարևելյան նույնությամբ, որպէս հետեւ Հյուսիսարևելյան ափին ամափերի երկայնքով, որովհետև Հյուսիսարևելյան ափին թիրողությամբ հիանալի կերպով պաշտպանված էր ուժեղ թիրությամբ զիափի լիճը իշնող բլրականշերով, և այսուղ բարձական էր միայն առանձին պիտանոցներ ունենալ:

Մանուկիլը լավ էր զիտակցում, թէ ինչպիսի առաջնակարգ անհրաժեշտություն էր կղզու վրա անդամութած քա-

դարի համար նավահանգիստ ունենալը։ Մյուս կողմից ու պակաս կարևոր էր թշնամու հարձակման ժամանակ շրջակա քննակազմակերից փռխաղբական միջացների տեղափոխումը կղզի, մի բան, որը հնարավոր էր միայն ամրացված նավահանգստի առկայության պայմաններում միայն։

Բնական ծովախորշի բացակայությունը ատիպեց Գաղիկի թաղավորին ձեռնարկեն արհեստական նավահանգստի կառուցման բարդ և զժվարին գործին։ Ինչպես Ռատանում, այնպես էլ այստեղ դրսեորդից Մանուելի ինժեներական մեծ տաղանդը, երբ օգտագործելով կղզու հարավային ափի փոքր գոգավորությունը, նա կարողացավ արհեստական ամրաբարձրացնել լճի խորունի ջրերում։ Ավելին, ամրաբարձրակի մեջ նա մի մեծ դարսակ տեղափոխեց, լիովին ապահովելով նավահանգիստը թշնամու նավերի ներխուժումից։

Հ. Օրբելու և Ռազբությունը արհեստական նավահանգստստի տեղաբաշխման մասին միանգամայն տրամաբանական է և բնողունելի։ Հանգամանորեն հետազոտելով լճի մակերեսույթի պարբերական տատանումները, Հ. Օրբելին եղբակացնում է, որ լճի մակերեսույթի զգալի բարձրացումն է պատճառը, որ այսօր մենք շնոր տեսնում միշնապարյան Հայաստանի առավել նշանակալից ինժեներական կառույցներից մեկի և ոչ մի մնացորդ։ Մանուելի կառուցած այս պարսպապատը այժմ ամրոզավիրն ծածկված է լճի ջրերով, և միայն ստորջրյա հետազոտությունները հնարավորություն կտան պարզելու նրա ճիշտ տեղաբաշխումը։

Դժբախտաբար ոչինչ շի պահպանվել նաև բոն բազարի կառուցապատումից։ Անանուն Արծրունին մաներամասն պատմում է, թե ինչպես էին հարթեցվում շրջակա բլրալանջերը, ինչպես դարավանդների վրա աստիճանաձև դասավորված ժաղկանոցներ էին հիմնում, իսկ անդանքի գոգավորությունները օգտագործվում այդինքը և ժառանաններ անկելու համար։ Ահա այս աշխատանքներն են, որ Գ. Գոյանը¹⁷ մեկնա-

17 Г. Н. Гоян, 2000 лет армянского театра, т. II. М., 1952.
ст. 196.

բանում է որպես... Հելլենիստական տիպի թատրոնի կառուցում, մի բան, որը զուրկ է որևէ իրական հիմքից և իրավացիումն Հերքվում է Հ. Օրբելու կողմից¹⁸:

Նորաստեղծ քաղաքի համեմատաբար ոչ բարձր կառուցակատման մեջ աշքի էր ընկնում Գաղղիկ թաղավորի պալատը, և ինչպես այդ հատկապես նշում է պատմիչը, այն զեր էր խոյանում «իրրե բլուր» ամբողջ քաղաքի համայնապատկերի վրա: Անանուն Արժրունին հանգամանորներ նկարադրում է պալատը, նրա ընդհանուր հորինվածքը, ինտերիյերը, որմիանկարները, բերում նրանց սյուժեները և այլն, և այլն: Գաղղիկ թաղավորի պալատի այս նկարագրությունը նկալի երևույթ է ամբողջ Հայ մատենագրության մեջ առշասպակ և արժանի է առանձնակի ուշագրության: Սակայն ինչպես միջնադարյան պատմիչների այլ նկարագրություններից, այնպես էլ այս նկարագրությունից (որն անհամեմատ մանրամասն է) զարձյալ խիստ զժվար է ըմբռնել կառուցի տարածական լուծումը, նրա կոնստրուկտիվ ձևերը: Կարելի է կոսէհէ միայն, որ այն եղն է զգալի շափնք ունեցող, լայնանիստ զմբեթով պատկված մի կառույց, որն ունեցնէ է 40 կանգուն բարձրություն և նույնքան լայնություն ու երկարություն:

Մոնումենտալ կառույցների համաշափական այդ սիստեմը, երբ հուշարձանը փաստորնեն ներգծվում է մի քառակուսու կամ խորանարդի մեջ, լավ հայտնի էր հայկական վաղ միջնադարյան պաշտամունքային ճարտարապետության մեջ: Այդպիսի համաշափություններ ունեն նաև Մաստարան, Շոբիսիմեն, Զվարին՝ վրաստանում և ամենայն հավանականությամբ Զվարինացը¹⁹: Ուշ շրջանից նույն այդ համաշափություններն ունեն նաև որոշ դաշինքներ: Այժմ պարզ է դառնում, որ ավանդական այդ համաշափական սիստեմը կիրառվել է նաև աշխարհիկ ճարտարապետության բնագա-

¹⁸ Ա. Լ. Օրբելի, սկզ. սօն., стр. 33.

¹⁹ Ա. Մեսականյան, Զվարինացը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 96:

ժառում և հատկապես իշխանության թագավորական պալատ-ներում:

Պատմիչի նկարագրությունից կարելի է եղբակացնել, որ պարատն ամբողջությամբ զերցրած մի բարդ կառուցվածք էր, որտեղ կենտրոնական գմբեթաժամկե դահլիճի շուրջը խմբավորված են եղել բազմաթիվ այլ օժանդակ բաժանմունքներ: Նույն այս զարաշքանից (թեև կառուցված ըիշ ավելի ուշ) հայտնի է Անիի միջնաբերդի պալատը, որը նույնպես բարդ հորինվածք ունեցող կառուցք է եղել՝ կազմված մի բանի դահլիճներից և բազմաթիվ օժանդակ շենքերից: Դժբախտաբար, հայկական միջնադարյան պալատական կառուցվածքները մեզ են հասել խիստ վնասված դրությամբ, մի հանդամանը, որը նկատելիքորեն գժվարացնում է Աղթամարի պալատի վերակազմության զործը: Մասնագիտական գրականության մեջ կարելի է նշել մի շարք ուշադրավ զիտուություններ այդ մասին: Այդ պրոբլեմին ավելի հանդամանունն անդրադարձէլ է Հ. Օրբելին: Նրա կարծիքով, պալատի տարածական կենտրոնն է կազմի զմբեթավոր, խաչվող կամարներով ծածկված դահլիճը, իսկ կամարների հատումից առաջացած բառակումի տարածության վրա էլ նստել է հոգինվածքը պահպղ զմբեթը:

Այս ամենից հետո, երբ նորից ենք անդրադամում Աղթամարի պալատին, նրա նկարագրությանը, ապա ակնհայտ է դառնում, որ հայկական միջնադարյան աշխարհիկ նարաւագնուության մեջ մշակված տիպերից նրան թերևն ավելի մոտ է խաչաձև, սֆերիկ զմբեթով ծածկված դահլիճի հոգինվածքը, ընդ որում Աղթամարում, ամենայն հավանականությամբ, եղել է պարզ խաչաձև հորինվածքի զարդարմակեցու նպատակով հենախորշերը հեռացվել են միմյանցից և անկյունային մասերում առաջացրել ուղղանկյուն հատվածները: Այդպես են լուծված եղել թիշապուրի պալատը Իրանում, Մասսուրայի տիպի հորինվածքները՝ պաղ միջնադարյան Հայաստանում:

Բայց է, որ հենց այս հորինվածքին են համապատա-

խանում Անանուն Արծրունու Հետևյալ խոսքերը. «...Ի հիմանց անտի մինչև զդլուս նորին ի թոփս կազմեալ առանց ոյան ունի Հաստատութիւն»: Եվ իսկապէս, Հատկապէս այս տիրի Հորինվածքներում է, որ ամբողջ ներքին տարածության վրա գնրիշիւսմ է զմբեթը. և առանց որևէ Հենարանի կարծես իսկապէս ճախրում է օդում:

Թվում է, որ նշված Հորինվածքը իր կողային և անկյունային ելուստներով Հանդերձ լիովին Համապատասխանում է շխորանս կամարակիցս և անկիւնս արտահայտությանը, երբ զմբեթակիր կամարներին իսկապէս Հպված են արսիդներ (խորաններ), իսկ դահլիճի շորս անկյուններում առկա են ուղիղ անկյան տակ Հատվող տարածություններ:

Ինչ վերաբերում է զմբեթին, ապա նա, անշուշտ, ունեցել է երդիկ, որանդից ներս է թափանցել դահլիճը լուսավորող լույսը և որտեղից ներս ընկենող արևի ճառագայթները ունեցարդ որմնանկարներից ամեն անպամ նոր տեսարան հեշտաբել, նոր պատկեր լուսավորել:

ՊԱՍՏՍԱՆԱԿ ՏԱՅՄԱՐԸ

Մանուելի Հաջորդ նշանակալից դործն էր Ազթամարի պալատական եկեղեցին, որի մասին Անանուն Արծրունին առանձին Հիացմունքով է խոսում, նկարագրելով արարների զեմ մզված մարտերում Գաղիկ թագավորի ռազմական Հաշողությունները, նա զրում է, թե ինչպես Գաղիկ Արծրունին իր զորքներով Հարձակվեց արարական զորաբեկ ցեղի մրամբոցի վրա կոտոր զյուղում (Հանա լճի Հարավարեմտյան կողմը), բանդեց ամրոցը, բարեկը բարձեց նավերը և լճի վրայով բերեց կղզի՝ իր պալատական եկեղեցին կառուցելու համար:


Անանուն Արծրունին զրում է, որ «Եվ քանդի ճարտարապեսն էր Մանուելը, իմաստությամբ լի և իր զործում զորավոր մի մարդ, որին Հիշատակեցինը վերևում, հրաշակերտեց եկեղեցին զարմանալի արզեատով։ Կրոնավորը, որին Հիշեցինը նախապէս, օդինց նկարելու բարեկի վրա ճշգրիտ

Նմանությամբ, սկսած Արրաջամից ու Դավթից մինչև մէր տեր Հիսուս Քրիստոսը։ Հորինեց նաև մարզարեների և առաջալների դասերը, դարմանեալի տեսքով, ըստ յուրաքանչյուրի դիրքի։ Եկեղեցու շինվածքի շարքերում առնդագործեց, շարակարգեց երեների խումբը և թաշումների երամները, ինչպես նաև գաղանեների, խողերի ու առյուծների, ցույլերի ու արշերի խմբերը, քանդակագարդված միմյանց դիմումաց, հիշեցնելով ապրելու համար նրանց կոփը, իւշը հույժ ըղձալի է իմաստումներին։ Եկեղեցու իրանը գունդորեց գովհատի արժանի շրջանակով, որը գարդարեց նուրբ կտրվածքներով, վրան նկարեց խաղողի որթեր, այդեզործների, դադանեների ու սողումների հետ միասին։ Նրանց կերպարանը այլնաբն գանգանությամբ ամեն մի մասում նմանվում է իր տեսակին։

Իսկ շորս կողմերից, սուրբ խորանների վերևում, ճշգրտողներ նկարեց շորս ավելուարանիների պատկերները, որոնք արժանավորապես սուրբ եկեղեցու ուրախության պատկեր են ավելի բարձր են, քան բոլոր սրբերը։

Հետո նա զրում է, որ Մանուկը տաճարի արևմտյան հակատին պատկերեց փրկչին, որի դիմաց էլ ս...ճշգրիտ նմանությամբ հորինեց նաև Դավիկ արքայի փառահեղ պատկերը, որը հպարտ հավատքով բարձրացրել է եկեղեցին բազուկների վրա, ինչպես մանահայրով լի ոսկե սափոր կամ որպես անուշահոտությամբ լցված ոսկե տուփի։ (Դավիկը) տիրոջ առաջ կերպարված է այսօնես, որ առօս թողություն է խնդրում իր մեղքերի համար... Դարձաւ խորանի հարավային կողմից, եկեղեցու դռան հառնում, Հորինեց դահի տեղ, որը բարձրից դեպի ներքն է իշխում կամարաձև առտիճառներով, հեռու մարդկանցից... Խակ սուրբ խորանի ներսի կողմը հրաշալիորնն կարգավորեց եկարապանույն գույներով, արծաթապատ գլուխերով և լի ոսկեհուր զարդերով, ոսկեզօծ պատկերներով, պատվական ակներով, մարդարատշուարդարդերով և պիտուղներ, երենցի ու պայծառ սպասքով²².

22 Թավան Արծոնի և Անտոնի..., էջ 201.



I. Hagia Sophia, Istanbul, Turkey

Մեզ շի հասել տաճարի շինարարական արձանագրությունը, և չկա նրա կառուցման թվադրության մասին ժամանակակից պատմիչների մոտ որևէ հիշատակություն, որտեղ նշված լիներ կառուցման տարին:

Ուսումնասիրողները սովորաբար երեսմ են XVIII—XIX դարներից մեզ հասած մի ձեռագրից, որն ըստ էության Աղթամարի կաթողիկոսների ցուցակն է և այստեղ էլ նշված է նրա կառուցման ժամանակը՝ 915—921 թթ.²¹: Այս առումով որշակի հետաքրքրություն է ներկայացնում XVII դարից մեզ հասած մի հիշատակություն: Դա Դավիթ Բաղիչնեցու ժամանակագրության մեջ պահպանված տեղեկությունն է, որտեղ կարդում ենք. «Եւ Գաղիկ նոր թագաւոր, որ ի Յարծունեաց, շինեաց յԱղթամար կղզին եկեղեցի յանուն սրբոյ խաչին թվին ՑԿԸ (916)»²²:

* * *

Ըստ իր հատակադային հորինվածքի Աղթամարի տաճարը մտտենում է Հռիփսիմեի տիպի կառույցներին, թեև այնտեղ էական փոփոխությունների են ներարկվել անկյունային մասները, իսկ ծավալային կոմպոզիցիան մշակվել է խաչաձև տաճարների տարածական սկզբունքների համապատասխան: Այս ամենը հանգեցրել է նրան, որ արտաքին նակատները ստացվել են խիստ մասնատված և խաչաթեների անկյուններում մեր են խոյանում բազմանիստ, նեղինե աշտարականման հավելվածները: Կառուցվածքը պսակվում է լայնանիստ, ներսից շրջանաձև, իսկ արտաքինից 16 նիստունեցող թմբուկով:

Արտաքին ծավալների նման մասնատվածությունը, անշուշտ, պայմանավորված է բանդակագործական այն հոյա-

21 Ա. Խարյան, «Վասպուրականի Եշտառվոր վանքերը», Աղթամարի սուրբ Խոչ վանքը: Անգղագրական հանդես, N 12, 1910, էջ 208:

22 Վ. Հակոբյան, Մանք ժամանակագրություններ, հ. 2, Երևան, 1956, էջ 337:

Բ. Թորամանյանի այս զրույթները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ընդ որում պալատական դահլիճների «Դադկաշեն» լինելու հանգամանքը ինքնին հանդեցնում է այն եղբակացությանը, որ այդ դահլիճները նույնպես Տրդատի կառույցներն են եղել, ինչպես և ս. Դրիգոր տաճարը, որի խարիսխների թե՛ շինանյութը, թե՛ ձեերը կրկնել են Հյուսիսարևելլյան դահլիճի խարիսխների Հորինվածքը: Այստեղ հատկապես ուշադրավ է այն, որ տրդատաշեն այդ դահլիճները (Համեեայն գնաս Հարավարենլյան դահլիճն ահավերապահորեն) պատկվել են լայնանիստ գմբեթներով: Այս հարցում առանձնեակի ուշադրավ է Հարավարենլյան դահլիճը իր առանձին կանգնած լորս կենտրոնական սյուներով հանդերձ, մի Հորինվածք, որն իր ընդհանուր գծերով ընդհանուր մոտենում է նույն ժամանակներում կազմավորվող Հայկական գավիթների ձեերին (Հոռոմոս, 1038 թ.):

Մյուս կողմից լավ հայտնի է, որ վաղ միջնադարյան պալատական դահլիճները ծածկված են եղել փայտյա հազարաշեն գմբեթներով, թեև վերջիններս ունեցել են հաջորդական դասավորություն: Բայց և այնպես այս վաղ շրջանից մեզ չի հասել մեկ կենտրոնական գմբեթով ծածկված և ոչ մի պալատական կառույց: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Անիի պալատական դահլիճներից շուրջ երեք բառորդ դար առաջ, Դադիկ Արծրունու կողմից Աղթամարում կառույցված պալատական դահլիճը: Այն թեև չի հասել մեզ, սակայն պահպանվել է Թովմա Արծրունու պատմությունը շարունակող Անանուն Արծրունու մանրամասն նեկարագրությունը: Պատմիչը պալատը պատկերում է որպես ընդարձակ մի մեծ կառույց, որի կենտրոնական քա-

16 Բ. Թորամանյան, Եյութեր Հայկական Հարավարավեռության պատմության, Հ. Ա., Երևան, 1962, էջ 276:

ռակուսի դաշլիճը պատկված է հղել լայնանիստ, սֆերիկ գմբչիթով:

Դժբախտաբար, Անիի դաշլիճները, նրանց հիմնառակը կազմող ժայռի սարչը հնաևութով, խիստ վնասվել էն, և Հյուսիսային պատերից ոչինչ չի պահպանվել: Ն. Մատոշ Հառլեապիս նշում է այս դաշլիճների հմտալից տեղաբաշխումը: Նա դրում է, որ Հյուսիսարևմայան դաշլիճը հիանալի տեսարան էր բացվում դեպի Սաղկոցաձոր, ունկի Գաղկաշեն տաճարը և հեռվում երևացող Ալաջա լեռները¹⁷:

Միաժամանակ նա դրում է, որ «Հյուսիս-արևմայան դաշլիճի պատերը միանգամայն հարթ էին, և այսուղի շիացին ո՞չ պարզաբանդակներ, ո՞չ որմեանկարներ և ո՞չ էլ զիոպսի դրամու զարդաձերը: Դաշլիճը թէ՝ դրաից և թէ՝ ներսից աշրի էր ընկնում ճարտարապետական հորինվածքի կամարների և որմեագուների հատակ, զիշաշունչ ձեհրով և իր նույրը մանրամասերով»¹⁸:

Դաշլիճի հյուսիսային պատի մեջ բացվում էին շորս, 2,5 մ լայնություն ունեցող բացվածքներ, որոնք մկանվում էին դաշլիճի հատակի մակարդակից: Որոշ հետազոտողներ նրանց լուսամուտ են անվանում, աակային իրականում նրանք լուսամուտ չեն: Միանգամայն իրավացիք է Թորամանյանը, երբ նշում է, որ դաշլիճին հյուսիսային կողմից հպված է հղել մի լայն և երկար նախարարուն, և այդ նախարարանից էլ մուտք է եղել դեպի դաշլիճ, որովհետև նրա մյուս բոլոր պատերը բացվածքներ չեն ունեցել: Դաշլիճի հյուսիսային մասը կազմող այդ սրահը ևս ժայռի սահմարի հետևանքով դաշլիճնել է ներքեւ և խսպառ կործանվել: Դաշլիճի պատերից պահպանվել է մի հատված միայն, որտեղ ուժեղ որմեամույթը առաջանում է պատից, իր վրա կրելով կողային կամարները: Պահպանված այս հատվածը մեծ չէ, աակային այստեղ արդին նկատելի է հմուտ ճարտարապետի ձեռքը, առանձին մասերի համակերպման նրա վարպետությունը:

¹⁷ H. H. Marr, Ann. M., 1934, стр. 68.

¹⁸ Խոյն տեղում:

Մյուս կողմից ակնհայտ է դառնում, որ պալատական աշխատավորներն իրենց ճարտարապետական ձևերով եւ կառուցադական որակով ոչնչով չէին պիտում բազարի ամենանշանավոր շնչերերին, պաշտամունքային մոնումենտակ կառուցած ներին, և ուսելով հյուսիսարենցան դահլիճն մասին, Ն. Մատը պրում է, որ այսունզ սպեղումներով բացվեց բազարից սահման մի խարիսխ, ընդ որում ճիշտ այն բազարից, որից կերտված են ամբողջ Անիում միայն մի կառուցածի, այն է Գագիկ Առաջինի թագավորական տաճարի սյուները: Եաւ հավանական է, որ այս դահլիճն էլ, որին պատկանել է հայտնաբերված խարիսխը, Գագիկ արքայի, բոլորանե տաճարի կառուցածի զործն է, որը օգտագործել է իրեն դուր եկած բարը և՝ իր ու Գրիգոր տաճարում, և՝ իր պալատի նորակառուց դահլիճնում³⁷:

Ն. Մատը այսունզ չի հիշատակում Տրդատի անունը, ոյն ժամանակ դեռ հայտնի չէր, թե ով է և. Գրիգոր տաճարի հեղինակը: Սակայն նա տարակույս չի թողնում այն որոշակի ընդհանրությունների մասին, որոնք առկա են պալատական դահլիճի և ս. Գրիգոր տաճարի այդ կարևոր մանրամասների միջեւ:

Մեզ հայտնի չէ, թե երբ են ավարտվել պալատական դահլիճները, սակայն հաշվի առնելով աշխատանքների ծավալը, կարելի է նորագրել, որ նրանց կառուցումը ավարտվել է շատ ավելի վաղ, քան Մայր տաճարի շինարարությունը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Տրդատի կառուցական գործունեությունը, Կոստանդնուպոլիսից վերադառնալուց հետո, ժամանակով երկու հիմնական ուղղություններով: Առաջինը Մայր տաճարի շինարարությունն էր, երկրորդը՝ պալատական Համալիքի նոր, Հանգիստավոր դահլիճների կառուցումը: Երկուսն էլ ունեին առաջնակարգ բազարաշինական նշանակություն: Մայր տաճարը բազարի արևելյան թաղամասի գոմինանտն էր լինելու, մինչդեռ նոր դահլիճները պար-

³⁷ Նույն տեղում, էջ 79:

հիմունակությամբ էին միջնաբերդի դեպի քաղաքը ուղղված Հյուսիս-այլին ճակատը, և ազ երևում էին քաղաքի բռնօր թաղամաս-անքից, ճիշտ այնպես, ինչպես այդ դաշնաներից հիմանալի տեսարաններ էին բացվում դեպի կիրճները, դեպի քաղաքի տարրեր հատվածները։ Եթե հարավարենէլլան դաշնանից հատակորեն դիտվում էր Մայր տաճարը, ապա Հյուսիսարե-մբայան գաշնանից տեսարան էր բացվում դեպի քաղաքի հյուսիսարեմայան տարրածքը, դեպի այն ոչ բարձր բլուրը, որի վրա էլ Տրդատը Մայր տաճարի շինարարության ավարտից հետո ձեռնարկեց ո. Գրիգոր (Գաղկաշն) տաճարի կառուց-մանը, մի տաճար, որն իր շափերով հավասարը չէր ունենա-լու Անիում և պիտի դառնար ամբողջ քաղաքի ծավալաւա-րածական լումբինանուը։

Ս. ԳՐԻ ԳՈՐ (ԳԱՂԿԱՍԸՆ)

Անիի Մայր տաճարի շինարարությունը ավարտվեց 1001 թվականին, և հենց այդ ժամանակ էլ Գաղիկ Բաղրա-տունի թագավորի հանձնարարությամբ Տրդատը հիմնացրեց ո. Գրիգոր տաճարը։ Այս մասին Ստեփանոս Տարոնացին իր աշխատաւության մեջ, առանձին զլուխ հատկացնելով կա-ռուցիչն, զրում է հնանյալը։ «Յաղագս շինէլոյն Գաղկայ արքայի ի քաղաքն Անոյ զեկեզցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի».

Յայնմ ժամանակի, յորում լոռոյ լրությամբ ամեն Ռ մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ, ի Վասիլի կայսեր յաւուրս Գաղիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաշն եկեղեցին, որ ի Քաղաքուղաշ-տի, անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կոր-ծանեալ՝ կամեցաւ նոյնաձև շափով և յօրինուածով յարդա-րի ի քաղաքին Անոյ, Հիմնարկեալ ի կուսէ Սաղկացաձար ձորոյն, ի բարձրաւանդակ տեղուն, առաջատան, տեսու-ղացն, մեծատաշ, զիմարդեան, կոփածոյ զիմօք, մանուա-ծոյ քանդակաւ յօրինեալ, լոյսանցոյց պատուհանօք, երբա-

կի գրանց զրաւեգնօք, սրանցաւես տեսլեամբ գմբեթաւ-
րեալ, գունակ զերմարած և նրկնանման զնդինը²⁰:

Այսուեղ էլ, նույն էքում աշխատությունը հրատարակող
ԱՄ. Մալիսասյանցը սոզատակում բնրում է մեկ այլ ձեռա-
գրում՝ Հանդիպող հետեւյալ ընթերցումը «Միդատ վարպետ
և կեղծեցոյն» և ավելացնում (ընթերցիք՝ Տրդատ)²¹:

Տրդատի անունը հնեց այս առևշությամբ Հանդիպում
է մի շարք ավելի ուշ արտագրված ձեռագրերում, այնպէս
որ Տրդատի հեղինակ լինելը ոչ մի տարակույս չի հարու-
ցում²²:

Տաճարը պեղվել է Նիկողայոս Մատի կողմից 1905—
1906 թթ. ընթացքում, և այդ ժամանակ էլ նրա հյուսիսա-
յին շրամուարքի մոտ Հայտնարերզին են կառույցի շինարա-
րական արձանագրության առանձին մասերը, դրված Դա-
դիկ Բաղրատունի արքայի անունից²³. Պեղումները աստիճա-
նարար բացեցին ամրող Հուշարձաններ և պարզ զարձավ, որ
իրավացի էր Ստեփանոս Տարոնեացին. տաճարը ըստ էռ-
թյան կրկնել էր Զվարթնոցի հիմնական ձևերը. եթե Զվարթ-
նոցի տրամադրեն էր 35,52 մ, ապա Դագեաշենում, ըստ
ի. Ստրիգովսկու, արտաքին տրամադրելը Հավաար է ե-
ղել 35,15 մ, եթե նույն արտաքին պատը Զվարթնոցում ու-
ներ 32 նիստ, ապա այսուղ նիստերի քանակը հասնում էր
36-ի: Արտաքին նիստերի հատման հզրերը այսուղ ևս մշակ-
ված էին զույգ որմեայտներով: Սակայն եթե Զվարթնոցի
մուտքերը հինգն էին, այսուղ կար միայն երեք մուտք: Ներ-
քին ժամանացին կոմպոզիցիայի մշակման ժամանակ ևս,
ըստ Հումբան, պահպանվել են Զվարթնոցում Հայոնի ձևերը,
առկա են սյունազարդ էքսէպաներ՝ իրենց վեց սյուներով
հանդերձ: Արենլյան արսիզը Զվարթնոցի նման խուլ չէ, այլ

20 Ստեփանոս Տարեացի..., էջ 279.

21 Նույն տեղում:

22 Ա. Թագամանյան, Նյութեր..., Հ. առաջին, էջ 276, անշ. 4. Դաբա-
դարյանի ժամանացքությունը:

23 «Դիվան Հայ վիճակը այսությանը», պրակ առաջին, կազմէց Հ. Ա.
ՕՐԻ էջի, Երևան, 1966, էջ 42:

մյուս արսիդների նման ունի զեց սյուն։ Մալյթերը, նրանց հետ միասնությունն կազմող առանձին կանգնած սյունները, ինչպես նաև լայնաթոփիչը կրկնակի կորության կամարները մշակված են հարթ և նման են Զվարթնոցի ձևերին։ Սակայն այստեղ չկա Զվարթնոցի արենլյան կողմանը հետագայում (թերեւ IX դարի վերջ) ավելացված ուղղանկյուն ավանդատումը, առաջն իր արսիդն ունեցող մի փոքր ավանդատում էլ հետագայում ավելացված է նաև այստեղ։ Տարակույթը չի մնում, որ տաճարը օկզբնապես ունեցել է միշտ շրջագծային եղբանկար ունեցող հորինվածք։ Խել վերաբերում է դեկորատիվ զարդարութիվներին, ապա նրանք իրանց բոլոր ձևերով հանգեցն ամենասերտ կերպով առնչվում են IX—XI զարերի հայկական զարդարձների հետ, լավ հայտնի են նույն շրջանի մի շարք այլ հուշարձաններում և հատկապես Մայր տաճարում։

Սակայն առավել ուշագրավ հայտնադրությունը Դաւիթիկ արքայի կտիտորական քանդակն էր՝ տաճարի մանրակերտը ձեռքին։ Այն հայտնարեցվել էր խիստ զնամնաված, չարգված զրությամբ։ Գիտարշավի նկարից Ա. Ն. Պոլտաբացկու շանքերով միայն ի մի հավաքվեց և վերականգնվեց ամրոգցությամբ։ Հարավարեմտյան մույթի վրա փոքրադրված արձանագրությունը՝ «ՆԵՐ Թվականին շրջակամար կառուցած» վավերագիրն է այն գդալի աշխատատանքներին, որ ստիլոված էին ձևուարեկն 1013 թվականին նոր ավարտված տաճարը կործանումից փրկելու համար։ Խելովն ակարգեցին պեղումները, բոլոր արսիդների կենարունական զույգ սյունները (որոնց վրա հենավել են կրկնակի կորության լայնաթիւնները թաղերը) և սուսանձին կանգնած հարավարեմտյան սյունը պարփակվել են 3,5—4 մետր տրամադրի ունեցող մույթների մեջ։ Սակայն այդ էլ չի փրկել տաճարը։ Թերեւ շատ ուժեղ էր խախտվել առաջին ուժերի հավատականու-

20 նույն տեղում։

Տաճարի շինարարության ավարտի միշտ ժամանակը հաշմանդաւոր է։ Մահմանա Տաճարացին, որն իր գործը ավարտել է 1904—1905 թթ., խոսում է նրա զմբերի մասին։ Տաճարի հասագուռազեր տաճարի հարեւներ են հայտնել, ենթադրելով կառուցիչի ավարտը 1910 թ. կամ 1920 թ.։

թյունը և հասկանալի է, որ կառույցը չէր կարող նրան
կյանք ունենալ. այս պայմաններում բազական էր մի փոքր
երկրաշարժ, որ տաճարը լրիվ կործանվեր: Հուշարձանի աւ-
տինանական կործանման լրիվ պատկերը պարզեցին պեղում-
ները: Եվ պատահական չէ, որ 1864 թ. քաղաքը գրավելուց
հետո սելջուկները մղկիթի վերածեցին ոչ թե քաղաքի այս
ամենամեծ կառույցը, այլ նրանից շատ ավելի փոքր Մայր
տաճարը: Խիստ դժվար է այժմ ճշտորեն բացահայտել տա-
ճարի կործանման պատճառները: Նրանք սերտորեն առնչ-
վում են ըստհանուր հորինվածքի, այուների խիստ ալաջիկ
համաշխափությունների, քարային կռնատրուեցիանների իրա-
կանացման և շինարարական տեխնիկայի հետ, պրոբլեմ-
ներ, որոնց մեծագույն մասը պարզապես չի կարող ճշտվել
այժմ, մասնավունդ, երբ բացառված է տաճարը տեղում բ-
ռուանաբրնելու հնարքավորությունը:


Ինչ վերաբերում է տաճարի ծավալատարածական
հորինվածքին, ապաս այդ մասին որոշակի պատկերացում է
տալիք ազնվաւմների ժամանակ հայտնաբերելով առաջի
մասնակերտը, որևէ իրավամբ կարելի է դասել հայկական
հարտարակենության մեջ հայտնի ամենաուշագրավ ման-
րակերտների շարքը:

Բուն հուշարձանի հետազոտությունը սերտորեն կապ-
ված է Թորոս Թորամանյանի անվան հետ: Նա էր, որ պե-
ղումների ավարտից ոչ շատ անց կազմեց տաճարի վերա-
կազմության առաջին նախագիծը: Վերջինու կատարված էր
Զվարթնոցի վերակազմության նախագծի սկզբունքներով.
այսուղ ես տեկո էր օդական սրանի վրա բարձրացող վեր-
ևառարկը, իսկ երկրորդ հարկաբաժնի ներքին տեսակոնխա-
յին հորինվածքը դարձյալ շրջապատված էր բազմաթիվ բաց-
վածքներ ունեցող օդական պատով: Սակայն Թորամանյանը,
հինգտված անդում պահպանված նյութերից, որմատապես փո-
խել էր համաշխափությունները. ո. Դրիզոր տաճարի էքսերա-
ների այսուները մոտ երկու անգամ բարձր են Զվարթնոցի հա-
մապատասխան սյուներից: Բայց և այնպիս պետք է նշել, որ
նույն այն հարցերը, որոնք իրենց լուծումը չէին դան

Զվարթնոցի վերակազմության նախագծում, բաց էին մեացել նաև այստեղ: Դրանցից ամենահիմնականը վերնահարկ լինելու կամ չլինելու հարցն էր, որովհետև ինչպես Զվարթնոցում, այնպես էլ այստեղ պեղումները շհայտնարեցին դեպի վեր, դեպի հնիքադրյալ վերնահարկը տանող աստիճանների և ոչ մի հնտք: Ավելին, եթե կարելի էր մի պահենիքադրել, որ Զվարթնոցում աստիճանները տեղափորված են եղել արևելակոմմի ուղղանկյուն հավելվածում (թեև ակընհայտ է, որ այն ևս հնտագայում է կցվել), առաջ Գագկաշեն տաճարում չկա նույնիսկ այդ, և կառույցի արևելակողմում ավելացված փորբիկ ավանդատումը ևս, ինչպես այդ պարզվեց ողեղումների ժամանակ, հնտագայում է ավելացվել: Ոչ պակաս տարակուտանքներ է առաջացնում նաև երկրորդ հարկարաժնի օդակաձև պատը, որի մեջ բացված 36 լուսամուտներից միայն 12-ն են լուսավորում տաճարի ինտերյերը:


Ժամանակին մենք անդրագարձել ենք այս հարցերին, կազմել նոր վերակազմության նախագիծը, որտեղ բացակայում է հայկական ճարտարապետությանը խորթ վերնահարկը, իսկ երկրորդ հարկարաժնի ժավալը մասնաւոր խորշերը հետրավորություն են տալիս համակերպել ներքին տեսրակոնխը արտաքին ռուսոնդան հորինվածքի համար: Նշվեց արդեն, որ Գագկաշենը շղարձավ Զվարթնոցի կըրկնօրինակը, թեև պետք է նշել, որ փոփոխությունները հատակագծում շատ ավելի նվազ էին և շունչին այն սկզբունքային նշանակությունը, ինչ տեսնում ենք տաճարի ժավալային հորինվածքը և հատկապես ուղղաձիգ համաշափությունների թևագագառում: Գագկաշենը բարձրացավ որպես նոր գարաշբանի ոգուն համահնչյուն մի հուշարձան, որի սլացիկ ձևերը կարծես Մայր տաճարում մշակված համաշափությունների արձադանքը լինեին: Նվազատական չէ քնարք, որ այսները, ի տարբերություն Զվարթնոցի, այստեղ արվել են բաղալտից: Տրդալը լավ դիտեր, որ միայն բա-

²⁵ Ստ. Մնացականյան, Զվարթնոցը և նոյնատիպ հուշարձանները, Երևան, 1972, էջ 213.



7. Անի, Գագկաշենի ո. Դրիզոր տաճար, վերահանձնված
թ. Թորամանյանի

դալուը կարող էր զիմանալ այն ժամը բեռին և միայն բազալտի սյուները կարող էին ունենալ այդքան սլացիկ համաշափություններ։ Մյուս կողմքը, դժվար չէ տեսնել, որ այս հանգույքն հորինվածքը անցել էր իր գարաշրջանի շինարարական տեխնիկայի սահմանները։ Ճիշտ է, բազալտը ադառ կերպով կարող էր զիմանալ վերից և կող ձեշմանը, սակայն չէ որ սյուները միակառւը չեին, և այդ սլացիկ սյուների առանձին հատվածների ամրացումը մեծ վտանգի սկզբնաղ-




Տ. Անի, Պատկաշներ ո. Դրիգոր տաճար-
վերակազմություն՝ Սու. Մեացականյանի

բյուր կարող էր լինել։ Նույնը կարելի է ասել նաև սյուները կապող կամարների մասին և հատկապես արտակարդ արագ կառուցվող տաճարի շաղախի անհրաժեշտ ամրաթյան մասին։ Առևտրուկցիաներն աշխատում էին թույլատրելի լորդածության վերջին սահմանադռում և բազական էր համեմա-

տարար ոչ մեծ մի երկրաշարժ (որին առանց մեծ դժվարության դիմանում էին մյուս, համեմատաբար ոչ մեծ և քածրանիստ հուշարձանները), որպեսզի կառուցվածքի առավել քենևավորված և մեծ բարխածության տակ աշխատող հանգույցները լցիմանային, խախավեր երանց առատիկ համարակակշռությունը և տաճարը կանգներ կործանման եղթին:


Պեղումների ժամանակ հարանարերված բազմաթիվ մանրամասներից և ոչ մեկը Զվարթնոցի ձևերի պարզ ընդորինակումը շեր: Բեկ ակնհայտ է որոշակի ընդհանրություն



Տ. Անի, Դադիացին ա. Գրիգոր տաճար. Հատակազին

առենք Զվարթնոցի և Դադկաշենի էքսեղրաների խոյտկերի և խարիսների ընդհանուր ձևերի միջն, բայց և այնպես Դագկաշենում նույն այդ տարրմբը հաշված էին արդեն բազալտից քանդակվելու համար, և այսանդ շեկար այն նուրբ դրվագավորումը, խոյտկերի զամբյուղաձև մշակումը, ինչ տեսնում

Ենք Զվարթնոցում։ Սակայն, միաժամանակ նույն Դադկաշշէնում նրա տուֆակերտ մանրամասների զրա առկա են նոր գարաշըքանի ոճական ուղղությանը բնորոշ, հարթացին ու մասնատված զարդարանդակները, որոնք իրենց հերթին խիստ տարրեր են Զվարթնոցի ուժեղ, հյութեղ ձներից։



10. Անք, Դադկաշին ո. Դրիզոր տաճար,
Հայունացին վերակառուցումից հետո

Դագկաշին տաճարի արտաքին հարդարանքում հատուկ տեղ ունի Դադիկ արքայի կտիտորական կողման զիցիան, որը, ինչպես այդ պարզ դարձակ պեղումների ժամանակ,

առնդավորված է եղել տաճարի հյուսիսային ճակատին և
ուղղված է եղել դեպի քաղաքի հզոր պարսպապատը, նրա
զինավոր մուտքը՝ 2,20 մ բարձրություն ունեցող այդ խո-
շոր քանդակը կերտված է եղել վարդագույն տուֆից և ապա
ներկվել է, ընդ որում դեմքը և պարեգոտը կարմիր, մորուքը
և բնդերը՝ սև, չալման՝ սպիտակ (առաջամասում, ճակատից
վեր, կարմիր շերտով), թեքերի ելուստները՝ նույնպես սպի-
տակի:

Գագիկ արքայի այս համարյա թե կլոր արձանը (նա
մի կողքով էր միայն հպված պատին) հայկական կրծիտո-
րական պատկերաքանդակների մեջ առանձնակի տեղ է զը-
րագում և ըստ էության միակն է, որտեղ Տրդատը այնպիսի
վարպետությամբ կարողացել է դրանորեն պատկերվող անձի
անհատական գծերը:

Ն. Մառը մի ամբողջ ուսումնասիրության նյութ է դարձ-
րել Դաղիկի չալմայի ծագման հարցը և ցույց տվել, որ նրա
ի հայոց գալլ Բագրատունյաց թագավորների զլիսին (Հաղ-
րատ, Անի) բնագլ էլ պատահական չէր. չալման այդ քան-
դակներում հանդես է զալիս որպես արարական խալիֆա-
թի կողմից հայկական թագավորների ոշանեշահա տիտղոսի
հաստատման խորհրդանշական Հայկական քանդակը չէր ներկ-
վում ուռուսարակ. Տրդատը այստեղ ևս խիստ համարձակ
քայլի է զիմել՝ ապահովելով մեծ բարձրության վրա գտնվող
պատկերաքանդակի տեսանելի լինելը, նրա արտահայտչա-
կանությունը: Եվ շնայտ այդ պայմանականությանը, նա
կարողացել է պահպանել Բագրատունի արքայի արտաքին
հատկանշական գծերը, տալ Առաջավոր Ասիայի X—XI դա-
րերի սահմանագծում ապրող հզոր թագավորներից մեկի ի-
րական, խիստ տպավորիչ պատկերը:

* * *

Նշվեց վերը, թե ինչպիսի նշանակալից տեղ էր հատ-
կացված տաճարին քաղաքի ընդհանուր տարածքում, ինչ-
պիսի մեծ քաղաքաշինական խնդիրներ էին կատված նրա

կառուցման հետ: Նրա վերասլաց հօրինվածքը գերիշխում էր քաղաքի ամբողջ տարածքի վրա, և նիշտ այնպես, ինչպես Մայր տաճարն էր դիտվում քաղաքին արևելքից մոտեցողներին, այնպես էլ դեռևս շատ հեռուներից դիտելի էին Գագկաշենի վերասլաց ծավալները թե՛ արևմուտքից և թե՛ հյուսիսից մոտեցողներին:

Մեզ ոչինչ հայտնի չէ Տրդատի կյանքի վերջին ասրիների մասին: Մի բան պարզ է միայն, որ նա ամեն ինչ պետք է աներ փրկելու համար Գագկաշենը, և նոր մույթերի մասին 1013 թ. արձանագրությունը վկայում է, որ պրանից հետո էլ չէր դադարելու համար պայքարը:

Սակայն Տրդատի նման նրբազգաց, Մայր տաճարի միմֆոնիան ստեղծող վարպետի հոգեկան բարդ խառնվածքը արտակարգ ժանր պիտի տաներ Գագկաշենի կործանման հարգածը: Եվ այն հանգամանքը, որ ոչ մի արձանագրություն կամ տեղեկություն չի պահպանվել Տրդատի՝ Գագկաշենից հետ ծավալած գործունեության մասին, թերևս հիմք է տալիս ենթադրելու, որ Գագկաշենը եղավ նրա վերջին զործը և նա դառնացած հեռացավ աշխարհից՝ տեսնելով իր այդ հոյակերտ կառուցյալի առտիճանական փլուզումը:

ՏՐԴԱՏԻ ԴՊԲՈՅԸ

Հայկական ճարտարապետության պատմության մեջ Տրդատի գործունեությունը նշանագործ մի ամրող շրջան, և տարակույս չի կարող լինել, որ նրան շրջապատում էր դինակիցների և համախոների ամբողջ մի խումբ, որոնց մեջ, ինչպես կարելի է հաստատապես տեսլ, երներով պահպանված կառուցյներից, թիշ շիշին իսկապես տապանդավոր ճարտարապետներն ու նրբանաշակ վարպետները: Խ դարի վերջին և XI դարի սկզբի շատ շնորհերի վրա ակնհայտ է նոր ռմական ուղղության որոշակի կնիքը, ուղղություն, որի նշանաբանն էր վարպետ Տրդատը: Եվ պատահական չէ բնադր, որ նրա զործերից առաջեկ մեծ արձագանք գտավ Գագկաշենի հոյակերտ տաճարը: Մեծ էր այս արքայական տաճա-

բի հմայքը։ Նրա ճարտարապետական ձևերի դրսեորումները կարելի է տեսնել նույն դարաշրջանի տարրեր կառուցներում, ինչպես Անիում, այնպես էլ մայրաքաղաքից դուրս (Խծկոնքի ու Սարգիս, Անիի Փրկիչի հեղեղեցի)։ Այս կարգի հուշարձանների թվին պետք է դասվի անշուշա Անիի հյուսիսային արվարձանում բարձրացող Հովվի հեղեղեցին, ընդորում վերջինիս երկրորդ հարկարամնի ճռանկյունաձև խորշերը ամենայն համականությամբ կրկնել են իր մեծ նախարարի համապատասխան տարրերը։ Ոչ պակաս ուշադրություն են նույն այս գոզարիկ հուշարձանի առաջին հարկարամինը ծածկող, մի կետում հատվող կամարները։ Կանարուկտիվ այս լուծումը հիշեցնում է Տրդատի կողմից մշակված այն սկզբունքը, որն օգտագործել էր նա Կոստանդնուպոլիսի ու Սոֆիայի գմբրեթի վերականգնման ժամանակ։ Հ դարի վերջի և XI դարի սկզբի հայկական ճարտարապետության և հատկապես Արարատ-Եփրակի և Անիի մշակութային ուղղությունը հնարավորաւթյուն է տալիս խոսելու Տրդատի ստուգմատորթական գապրոցի առկայության մասին, այն մասին, որ նրա շատ մտահղացումներ ու խղաներ, նրա մշակութ տարածական առանձին ձևերը իրականացվում էին իր համախռնիքի, իր աշակերտների կողմից, որոնցից շատերը տաղանգավոր վարպետներ էին և համար հանդիս էին դարիս միանգամայն ինքնուրուցին գործերով։

Այս տեսակներից առանձնակի ուշագրավ է Անիի Առաքելոց եկեղեցին, որն աշքի է ընկեռում իր խիստ ինքնառիկայ, նորարարական հորինվածքով, մի բան, որ այնքան ընորոշ էր Տրդատի գործերին ընդհանրապես։ Ծվ եթե այս կառուցը Տրդատի դործն էլ չէ, առաջ ոչ մի կառկած չի կարող լինել, որ նրա հեղինակն է Տրդատի տաղանդավոր աշակերտներից մեկն ու մեկը, որի անունը դժբախտաբար չի հասել մեզ։ Սակայն խիստ ակեհայտ են տաճարի զեկորատիկ ձևերի ընդհանրաւթյունները Տրդատի այլ կառուցների դարձաձևերի հետ, և այս բանն անշուշտ պատահական չէր կարող լի-

ներ՝ Մյուս կողմից, Տրդատին անշուշտ լավ հայտնի էին բյուզանդական հինգ զմբեթանի նշանավոր կառույցները, և թերեւ Հ դարում գնուեա կանգուն էր Հուստինիանոս կայսրի կողմից VI դարում կառուցված Առաքելոց հինգ զմբեթանի տաճարը:

Միջին բյուզանդական շրջանի կառույցներից հետույնը IX դարում Մակնունիան հարատության վասիլ Առաջին (Հայազդի) թագավորի կառուցած նեա տաճարն էր, որը նույնագիտ, ինչպիս և Կոստանդնուպոլիսի Առաքելոց հեկդեցին, չի հասել մեզ, և պահպանվել են միայն միջնադարյան պատմիչների նկարագրությունները։ Ուստիմնասիրուղները տարբեր ձևերով են վերակազմում այդ հուշարձանը, ընդ որում մինչև աշժմ էլ պարզ չէ, թե ինչպես են դաստիրված եղել կողային չորս զմբեթները։ Հիմնական առանցքների ուղղությամբ, թե անկյուններում։ Նորագույն հետազոտություններում այն կարծիքն է հայտնվում, որ ինչպես Առաքելոց եկեղեցում, այնպիս էլ այսանդ զմբեթները, ամենայն հավանականությամբ, զասագորված են հղել Հիմնական առանցքների ուղղությամբ, և նեան փոխանցում է ատեղել Առաքելոց տաճարի և Վենետիկի ու Մարկոսի միջև (XII դար)։ Հետազա դարերում ևս հինգ զմբեթի գաղափարը չի մոռացվում, և այն հանգիս է զալիս մի շարք ուշադրավ հուշարձաններում։ Բյուզանդական այս կառույցների բնորոշ կողմն էր զմբեթների տեղաբաշխությունը Հիմնական ուղղություններով (խաչաթեների վրա), և նրանք բոլորն ել կազմում էին սանաւրների ինտերյեների կազմավորման օրգանական մասերը, ընդ որում զմբեթների նման զասագորությունը բնավ չէր պայմանավորում երանց միանման հատակադարձին լուծումը (էֆեսի տաճարը, VI դար, Կիպրոսի կղզում XII—XIII դարերում կառուցված մի շարք հեկդեցիներ)։ Մինչդեռ Հայկական ճարտարապետությանը ի սկզբանե խորթ էր տաճարի ինտերյերում զերիշխառ մեկից ավելի զմբեթ ունենալու դաշափարը, և բյուզանդական ճարտարապետությանը բնորոշ այդ հատկանիշը երեք տեղ չգտավ

հայկական նարտարապետության մեջ, թեև Հանգիպում էն վրացական հուշարձաններ, որտեղ միննույն առանցքի վրա տեղավորված են երկու զմբեթներ (Դուրջիանիի և վելացմինդան, IX դար):

Ինչ զերաբերում է Հայկական նարտարապետությանը, առաջ վազ միջնադարից մեզ չի հասել և ոչ մի հուշարձան, որտեղ հաստատապես կարելի լիներ պեղել հինգ զմբեթների առկայությունը: Հեռավոր զուգահեռ կարող են լինել միայն Ավանի տաճարի (VI դարի վերջ) ավանդատների զըմբեթավոր ժամկերը, թեև նրանք ևս դուրս չեն եկել կառուցցի ընդհանուր ծավալից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Անիի Առաքելոց հեղեղեցին սկզբունքային նորություն էր և այն իր անմիջական նախատիպը շտաներ ո՞չ վազ միջնադարյան Հայաստանում և ո՞չ էլ Բյուզանդիայում:

Բյուզանդական աշխարհահռչակ կառուցցների արձագանքն էր թերևս միայն նարտարապետական իդեան, քրիստոնեական տաճարը հինգ զմբեթներով պատկելու գողափարը, երբ կողային փոքր զմբեթները կարծես նախապատրաստում էին կենտրոնում բարձրացող զերալաց մեծ զըմբեթի ձևերը: Սակայն հիմնականը տեղական, Հայկական միջավայրն էր, որտեղ արդեն X դարի սկզբում ի հայտ են դալիս լորս անկյուններում լորս կանոնավոր արսիդներ ունեցող եկեղեցիներ, ընդունակ շինարարական արձանագրություններում նրանք դիտվում են որպես առանձին եկեղեցիներ (Քարեզի, X դարի սկիզբ):

Այստեղից արդեն մի քայլ էր դեպի նույն ավանդատները պատկող զմբեթներ կառուցելը, քայլ, որը սակայն մեծ տաղանդի սխրանք էր պահանջում՝ զուրս գալու համար ավանդական դարձած պարփակ ձևերի շրջանակներից:

Տրդատի ստեղծագործական ուղղությանը առավել մոտ էն Մարմաշենի նարտարապետական համալիրի հիմնական կառուցցները և հատկապես Վահրամաշեն մեծ տաճարը: Ո-

ըոշ Հետազոտողներ այն վերագրում են իրեն՝ Տրդատին, այնքան մոտ են Մայր տաճարի և այս խոկապնա նշանավոր հառուցիցի ճակատները:

Սակայն կան մի շարք տվյալներ, որոնք հեարավորություն չեն տալիս անզինքապահորներ ընդունել այս գրույթը: Բանեն այն է, որ Տրդատի կառուցած ամենավաղ դմբեթավոր սրանենիցից մեկում՝ Հազբատում, արդեն բացակայում են արևելյան զույգ գմբեթակիր մույթերը: Մինչդեռ Մարմաշենի տաճարում առկա են նշված զույգ մույթերը և ակընհայտ է, որ ճարտարապետն այսուղ հետեւ է հեարավության ձևերին:

Սակայն զբան հետ միասին խիստ որոշակի է Մայր տաճարը շրջանցող գեկորատիվ կամարաշարի ձևերի ազդեցությունը և առանձին մոտիվների ուղղակի ընդօրինակումը:

Տրդատի դպրոցի շրջանակներում մշտակված գործերից է նաև Մարմաշենի բոլորաձև հատակադիմ աւելցող քառարափիդ հորինվածքը, որից դժբախտաբար մեզ են հասել ներքեմ մասերը միայն՝ այնքան մասնատված և ուժեղ որմնախարիստի հետ միասին: Այս կառուցքն է, թերեւ, որ նախատիպ է եղալ եծկոնքի նկեղեցու համար:

Վերը նշվեց, որ այս շրջանի հայկական գարդարվեստում զգալի տարածում են գտնում անտիկ ճարտարապետության և զարդարանդակների հեռավոր արձագանքները հանդիսացող մեանդրներ, ականթատերների խիստ ոճավորված ձևեր և այլն, ընդ որում բացառված չեն, որ նրանց ի հայտ գալը կապված էր իր՝ Տրդատի ստեղծագործական որոնումների հետ:

Տրդատի ստեղծագործությունը մի նոր էշ էր հայկական միջնադարյան ճարտարապետության և քանդակագործության բնագավառում, մի ժամանակակից միջնադարյան մշտակույթի և արվեստի երկնակամարի վրա առնաւարակ:

Հայկական ճարտարապետության և արվեստի մեջ ձևավորված ոճական նոր ուղղությունը, որն իր բարձունքներին հասավ Տրդատի և նրա գլուխի ստեղծագործական շրջանակներում, ընդունակ էր ստեղծելու էլլ ավելի հոյակապ զործեր, եթե երկրի բուռն զարդացումը նորից չկատեցնելին սելլուկ-թուրքերի արշավանքները և նրանց մի դարից ավելի տեսող տիրապետությունը: Ազ երբ երկիրը XIII դարի վերջում նորից թոթափեց օտարի լուծը, սկսվեց զարդացման մի նոր շրջան՝ պայմանավորված պատմաքաղաքական նոր պայմաններով և նոր գործուներով: Ի վերջո նրանց էին, որ ելակետ զարձան ճարտարապետության և արվեստի զարդացման նոր փուլի, ոճական ուղղության մեջ տեղի ունեցած նկատելի շրջադարձի համար: XIII—XIV դարերում էլլ ավելի է ուժեղանում երկրի մասնաւորվածությունը, այժմ արդեն չկային ուժեղ, ինքնամփոփ թագավորությունները, և ճարտարապետության ու արվեստի զարդացումը հիմնականում ընթանում էր առանձին իշխանական տիրություններում, քաղաքներում և հատկապես վանական կինտերուններում: Այժմ արդեն ո՞չ անհրաժեշտություն կար և ո՞չ էլ հեարագորություն հսկայածավաշտամարների կառուցելու համար: Զարդանում է աշխարհիկ ճարտարապետությունը, պաշտամունքային կառույցների ձեմիրը հարմարեցվում էն ոչ մեծ վանական համալիրների պահանջներին: ճարտարապետական ձեմրը էլլ ավելի հն մանրանում, նրբագնդ դառնում, զարդարանդակների ունիթներ ավելի ու ավելի հարթային է դառնում: IX—XI դարերում Տրդատի և նրա դպրոցի կողմից մշակված ճարտարապետական որոշ ձեմրը և հատկատես զեկորատիվ կամարաշարերը թեև շարունակում են հարատենել, սակայն նոր պայմաններում էլլ ավելի մեն նրբանում, ավելի գեղանի զառնում, և ակնհայտ է նրանց զարդաձենի զերածվելու միտումը:

Քանդակագործության և սյուժետային սելինֆի բնագավառներում որոշակի կերպով նկատելի է հեռացումը հնա-

վանդ, մոնումենտալ ձևերից: Ակնհայտ է մանրանկարչությանը բնորոշ որոշ մոտիվների ներթափանցումը քանդակագործության մեջ, ըստ որում ավելի ու ավելի մեծ տեղ է տրվում դռևապյան գործունին, ուժեղանում է ընդհանուր արելելլան դարդաճների և մոտիվների միահյուտումը Հնից եկող ավանդական ձևերի հետ: Այս շրջանում խիստ է ական գերեխությունը առաջանաւ գործունին, ուժեղանում է արդի և կոնկրետ պատմական պայմաններում, տարբեր նահանգներում և շրջաններում, իրենց շուրջը համախմբելով կերպարվեստի տարբեր բնադրավառների նշանավոր գործիչներին, այդ գործոցները շատ անզամ կանխորոշում էին ավյալ նահանդի կամ երկրամասի թե՛ մանրանկարչական ու որմնանկարչական և թե՛ քանդակագործական ու ճարտարապետական ունական ուղղություններն ու նրանց բնորոշ գծերը:

Առանձնակի տեղ են գրավում այդ գործոցները Սյունիքի մշակութային կյանքում: Այստեղ X—XIV դարերի ընթացքում կազմավորվել էին երկու կենտրոններ, որոնցից առաջինը ձևավորվել էր X—XI դարերի ընթացքում, հարավային Սյունիքում (Տաթե), երկրորդը ստեղծվել էր XIII դարի վերջին և XIV դարի առաջին կեսին Վայոց Ճորտում՝ Օրբելյան իշխանների տիրույթ Գլամորում:

Տաթեի գեղարվեստական դպրոցում են ստեղծվել հայ արվեստի այնպիսի նշանավոր գործեր, ինչպիսիք են 989թ. էրմիածնի ավելացրանի մանրանկարները, թղթենո Նորավանքի հայտնի պատկերացնակները, Տաթեի և Գեղևիձանքի որմնանկարները և, վերջապես, Տաթեի ամբողջ ճարտարապետական համալիրը՝ նրա ոլորտի մեջ գտնվող այլ կառույցների հետ մեկտեղ:

Պատմական հաջորդ շրջանում քաղաքական և պաշտամունքային կենտրոնների հյուսիս տեղափոխվելու հետ մեկտեղ, Վայոց ձոր են տեղափոխվում նաև մշակութային կենտրոնները: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Օրբելյան իշխանները կարողացել էին համաձայնության դալ մոնույցների մեծ խանի հետ և ազատել Սյունիքը տեղական հարկահամարների անասելի դամանություններից: Եվ եթե

Հրերի մյուս նահանգների բնակչությունը հաճախ շղիմանալով վայրագ կեղեքումներին, թողնում էր հայրենի քահակայրերը և հետանում երկրից, ապա Սյունիքը գտնվում էր համեմատաբար բարձոր վիճակում, և այնազ զգալի ծավալ էր ստացել մոնումենտալ շինարարությունը: Այդ շրջանում Սյունիքը էին անցնում տարանցիկ առևտրի մի քանի ուղիներ, և պատահական չէ, որ շատ լեռնանցքների մոտ գետես այսօր էլ նկատելի են քարավանատների փլատակներ, իսկ լեռնային կարկաչառու գետերը գոտկող կառուցներից շատերը այժմ էլ կանգուն են և օգտագործելի:

XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին տասնամյակներին Օրբելյան և Պռոշյան իշխանական տները Սյունիքի տարբեր վայրերում հիմնում են մի շարք վանական հոգածառություններ, անմատչելի ծերպերի վրա կառուցում ամրոցներ, իրենց նատավալը բարձր զըրշապատում ամբակու պարսպապատերով: Այս պայմաններում պատահական չէ բնավ, որ զեսպի Սյունիք էին ձգում ժամանակի շատ մտավորականներ: Ահա այսուղ էլ, Սյունիքի դժվարամտչելի, աւելին առավել գեղատեսիլ վայրերից մեկում հիմնվում է Նորավանքը՝ Օրբելյան իշխանական տան հոգեսոր կենտրոնը:

Ուստի, միանգամայն տրամարանական էր, որ Նորավանքից ոչ հեռու, XIII դարի վերջին քառորդում, հիմնադրվեց Գլաձորի նշանավոր համալսարանը: Գլաձորում կազմավորվեց հայկական մանրանկարչության առավել ուշագրավ դպրոցներից մեկը, և ինչպես ցույց է տալիս ուսումնակիրությունը, այն իր որոշակի նշանակությունն ունեցավ նաև կերպարվեստի մյուս բնագավառների գորգացման գործում:

Այժմ անվերապահորեն կարելի է խռոնի Գլաձորի մանրանկարչական դպրոցի և Սյունիքի XIII—XIV դարերի մոնումենտալ արվեստի միջև եղած որոշակի կապերի մասին: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ բացի մանրանկարչությունից, Գլաձորում զգալի տեղ էր տրվում քանդակագործական արվեստին և հարստապահությանը, և թիւ չէին այնազ

այնպիսի գործիչները, որոնք հավասարապես ուժեղ էին
կերպարվեստի բոլոր բնագավառներում:

Ահա այս կարգի առավել խոշոր գործիչներից մեեն էր
Մոմիկը, որն իրավամբ յուրահատուկ անզ է գրավում միշ-
նագորշան Հայաստանի գեղարվեստական մշակույթում և
համարձակ կերպով կարող է դավել Հայ միջնադարի ամե-
նանշանավոր գործիչների շարքը:

Դժրախատարար, Մոմիկի մասին չի պահպանվել և ոչ մի
մատենագրական հիշատակություն, սակայն դատելով նրա
գործերից, դժվար չեն նկատել, որ նրա համարյա թիւ ամբողջ
գործունեությունը ընթացել է վայոց ձորում, Օրբելյան իշ-
խանական տան աիրույթներում. XIII դարի վերջում և XIV
դարի առաջին տասնամյակիներում նա էր Օրբելյան իշխա-
նական տան պլիսավոր նկարիչը, քանզակազործը և ճարուա-
րապետը, և Օրբելյանները նրան էին հանձնարարում իրենց
բոլոր նշանավոր գործերը:

Մոմիկին առանձնապես հոգանավորում էր նշանավոր
մատենագիր, Սյունյաց մետրոպոլիտ Մանվանոս Օրբելյանը,
և այդ հոգանավորությունը շարունակվեց նաև նրա հաջորդի՝
Հովհաննես Էպիփառոպոսի գահակալության ժամանակ։ Մո-
միկի մանրանկարչական առավել նշանավոր գործներից էն
1292 թ. ավետարանի մատենակարները, որոնց ոճական կա-
տարումը մատենում է Գլամորի մանրանկարչական գործոցի
շրջանակներում մշակված գործներին։ Ավետարանում բա-
ցակայում են այսամետային նկարները. պատկերված են
միայն ուվետարանիներին պատկերներ, լուսանցակարգեր և
պլիսապարզեր. Մոմիկի այս գործում ընորոշ է դումային անզն
ներկապնակը, հիմնական դույներն են կարմիրը, կապտա-
կանաշաղումը և գեղինը։ Ահա այս գույնների տարրենք երանդ-
ների միջոցավ էլ նա ստանում է Հիսանալի ներդաշնակ գործան-
ցումներ։ Նա օգտագործում է նաև ոսկին, սակայն Համե-
րապետ առանձնագիր տարրենք չափավոր է նաև ամենի համար-
միասին պատկերված ֆիգուրները կուռ են, ամուր կանգնած

1. Ա. Ավետիսյան, Հայկական ժողովներության Դամորի գշա-
րացը, Երևան, 1971, էջ 52.

և ակնհայտորեն հիշեցնում են պատկերացանդակների ձևերը, պատկերաբանգակներ, որոնց կերպաման մեջ, ինչպես կտնանենք հետագայում, նա հասավ արտակարգ վարպետության։ Նրա հաջորդ դործը Ստեփանոս Օրբելյանի համար նեկարազարդված ավետարանն է։ Այն աշքի է ընկնում իր կատարման մեծ վարպետությամբ, թեև շափերը անոռվոր փոքր են՝ $8,7 \times 12$ սմ և ունի 300 էջ։ Այս հանգամանքն անշուշտ պատահական չէր։ նշանավոր ոպատմիւր թերեւ մշտապես իր մոտ էր պահում իր ավետարանը, աւելում իր հետ բազմաթիվ ճանապարհորդությունների ժամանակ։

Չեռողի սկզբում պատկերված են ավետարանին հիմնական իրադարձությունները՝ «Ավետումը», «Ծրիստոսի ծննդը» և այլն։

Մեծ հմտությամբ են կատարված զիխառառերն ու լուսանցարգերը։ Սակայն այս ամենեն հետ մեկտեղ չեն կարելի չնկատել, որ ինչպես Կեռան թագուհու ավետարանում, այնպես էլ այստեղ Մոմիկին առաջել շատ հրապուրն էն թեմատիկ նկարները, մարդկային ֆիգուրների զերարտադրությունը։ Այստեղ է ահա, որ առաջել ցայտուն է դրանու մուտքամբ նրա անհատականությունը, նրա յուրովի մուտքամբ պատկերի կումպոզիցիոն կառուցվածքին և տարածական յուժմանը։ Հաւեկապես պհատը է շնչառն Մոմիկի մանրանկարներում ճարտարապետական խորքի հմտալից պատկերումը, մի հանգամանք, որն անմիջապես տարրերում է նրա մանրանկարները մյուս նկարիչների գործերից։ Ի սարդերություն լայն տարածում դրամ մոտեցման, երբ ճարտարապետական խորքը ներկայացվում էր ունակ իրականությունից հեռու՝ ֆանտաստիկ կառուցների ձևով, Մոմիկի մոտ այդ խորքը կազմող շնչառերը մոտ են իրական կառուցներին, և այս վազ դործերում արդին ցայտուն կերպով դրանվորվում է նրա որոշակի հակումը դեպի ճարտարապետական արվեստը։ Այդ շնչառերը մշտակված են հաստատուն և մոնումենտալ ձևերով, տարրեր կառուցները աշքի են ընկերում տարածական ձևերի բազմազանությամբ։ Այս ամենը

անշուշտ պատահական չէ: Մոտ լինելով քանդակագործությանը և ճարտարապետական արվեստին, Մոմիկը շնչ սահմանագատում զբանք, և ճարտարապետությանը բնորոշ տարածական մտածողությունը իր կնիքն էր դրել նաև նրա մանրանկարչական գործերի վրա: Նրա զողարիկ, իր բացարձակ շափերով ոչ մեծ մանրանկարները կարծես մի-մի որմնանկար լինեն, որտեղ ամեն ինչ լուծված է կուռ տնկտոնիկական ակզրունքներով: Մոմիկի մանրանկարներին խիստ բնորոշ է մեզմ, ներգաշենք գունեալեակը, ընդ որում նա որոշակիորեն զերադասում է միմյանց լրացնող ներգաշեակ զույները և հատկապես կանաչը՝ իր ամենատարեմը ելեկչերով: Հարկ է նաև նշել, որ բազ ժանոթ լինելով հայկական երիկեյան մանրանկարչությանը, նու չդնաց այդ դպրոցի նշանավոր գործերի պարզ ընօրինեակման ճանապարհով:

Մոմիկը դիմանեակարային արվեստի ամենամեծ վարպետներից է հայ մանրանկարչության մեջ: Առանձին հակում ուներ նա դիմի Աստվածամուռ կերպարը, որն այնքան հաճախ է հանդես դայլիս նրա մանրանկարչական և, ինչպես կանոնենք ստորեւ, նաև քանդակագործական աշխատանքներում: Սակայն նա երբեք չի կրկնում իրեն: Ամեն անգամ տեսնում ենք մի նոր մոտեցում, մի նոր տարրերակ այդ այնքան լավ հայտնի, որինքան տարածված կերպարի որուկերտման մեջ: Այսոգես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանի պատվերով ժաղկած ավետարանում Աստվածամայրը Էրիտառապետ մի կին է, արտահայտիլ և խոր աշքերով, զնմքի նուրբ զիմագծերով և հեղամկուն կեցվածքրով: Այս է Աստվածամայրը Արենիի եկեղեցու ճակատակալ քարի վրա: Այն հարկ նա վեհաշառ երկնային թագուհի է, որը հանդիսավոր կերպով բաղմել է զանին:

Մոմիկի մանրանկարչական գործերին բնորոշ են չորս դրամատիկական, ներբեն կուպականությամբ հազեցված մարդկային ֆիգուրները, որոնք բնույթ էլ չեն կորշում ճարարապետական խորքի վրա: Նրա պատկերած ֆիգուրները շարժում են, դեմքերն արտահայտիլ, և նրանց թեթե, բաց գունային գամմա ունեցող հազուաները հիանալի կերպով

որակորդում են շատ ավելի ծանր, մուգ գույներ ունեցող ճարտարապետական կառույցների ֆոնի վրա։ Ակնհայտ է նկարչի մասշտարային մտածողությունը։ Այսանդ չկա այն յուրօքինակ անհամամասնությունը, որը հաճախ է հանդիպում հայ մանրանկարիչների գործերում, երբ խորքը կադարձող ճարտարապետական կառույցները մշակվում են առանց հաշվի առնելու իրական շրջապատը, դորժողության միջավայրը, և կարծեա եթերային, երազային կերպարները լինեն։ Մինչդեռ Մոմիկը իր պերառնաժները պատկերում է իրական միջավայրում, և շատ դեպքերում այդ միջավայրը կարծես բայց արթակ լինի, որտեղ տեղի է ունենում իրադարձությունը։ Իսկ խորքի կառույցները իրենց տիպերով հար և համան են՝ բնորոշ տվյալ գարաշրջանի ճարտարապետական հուշարձաններին, և կառույցների տարրեր պլանների առկայությունը, միմյանց նկատմամբ ես ու առաջ դասավորված լինելը ակնհայտորեն պիկայում են հնանկարույին պատրանք ստեղծելու նրա գործերի մասին։

ՆՈՐԱՎԱԼԱՐԾԻ ԽԱՀԱԲԱՐԵՐԸ

1305 թ. մահանում է Սուեֆանոս Օրբելյանը։ Նրան հաջորդում է Հովհաննես Էպիմկոպոսը, որը Մոմիկին է պատվիրում Ստեփանոս Օրբելյանի հիշատակը հավերժացնող խուշբարի կերտումը։ Թեև ույս խուշբարի միշտ թվադրությունը հայտնի չէ, բայց և այնպիս տարտկույս չի կարող լինել, որ Մոմիկը ձեռնարկել էր այն Ստեփանոս Օրբելյանի մահից անմիջապես հետո։ Հասկանալի է, որ նշանավոր գործիք հիշատակին նվիրված հուշարձանի կանգնեցումը չէր կարող հետաձգվել։ Այժմ այդ խաչբարը խիստ վնասված, դրված է Նորավանքի գամբին ներառւմ, նրա արևմտյան պատի երկայնքով արված պատվանդանի վրա, մի շարք այլ խաչբարների հետ միասին²։

X—XI դարերի համեմատարար պարզ, շատ դեպքերում

² Ա. Բայելյանիակարյան, Միշնակարյան հայ ճարտարապետներ և քարաշուշ վարդակական, Երևան, 1963, էջ 81։

միադ միջնադարյան խաչերի համաշխափությունները պահպանող խաչքարերը XIII—XIII դարերում զգալի բարդանում են, և այդ պրոցեսը էլ ավելի է ուժնախում XIII—XIV դարերում: Նշեցինք արգելե 1291 թ. կերտված Պավղոսի հայոնի խաչքարը: Չի կարելի չնկատել, որ այդ խաչքարի հետ որոշակի ընդհանություններ ունի Մոմիկի՝ 1308 թ. կերտված խաչքարը: Վերջինս, առկայն, համեմատարար ավելի ձգված համաշխափություններ ունի, ընդ որում ուշագրավ է ներքեմ մասում պատվանդան հիշեցնող հարթ տարածության անշատումը, որտեղ և տեղավորված է իշխանությի նրամթայի արծանագրությունը: Մյուս ակզրունքային նորությունը խաչքարի վերին հատվածի եռամբառ կամաշարացչին մշակումն է և այդ կամարեկրի տակ դեմքուն կոմպոզիցիայի կերտումը, որտեղ զահի վրա նստած է Թրիստոնը, նրանից ձախ կանգնած է Աստվածամայրը, իսկ աջ կողմում, ձեռքերը զեղսի Թրիստոնը պարզած, պատկերված է Հոգհաննեա Մկրտիչը:

Մյուժեատային կոմպոզիցիանների տեղավորումը խաչքարերի վերին հորիզոնական հատվածներում անշուշտ նորությունները կարող ենք նշել Գեղարդի զավթում տեղավորված Տիմոթ և Մխիթար կազմադների (վարպետների) խաչքարը, կերտված մոտ մեկ զար առաջ՝ 1212 թ., որտեղ երեք շրջանակների մեջ պատկերված են առանձին ավելացրանույթին առաջընթաց առաջնական գործարքի խաչքարում նրանք գիտառութեան կազ շունեն միմյանց հետ և մշակված են նույն հարթային ակզրունքով, ինչ որ ամրող խաչքարը առնասութակ: Միանգամայն այլ բան ենք տեսնում Մոմիկի խաչքարում: այստեղ խաչքարի վերին մասը գրավում է մի այլուն միայն, կողային ֆիգուրները շարժվում են դեպքի կենտրոն, և որ առավել նշանակալից է, նրանք կերտված են անհամեմատ ամենի բարձր ռելիեֆով և անմիջապես աշքի են ընկնում խաչքարի հարթային մշակում ունեցող նուրբ դարդաձեւերի ֆոնի վրա: Այդ բարձրաբանդակենքը ոճական որոշակի ընդհանություններ ունեն Մոմիկի ավելի ուշ շրջանի գործերի հետ: Այս հանգամանքը ակնհայտ է դասեամբ, երբ

այստեղ պատկերված Աստվածամոր և Հովհաննես Մկրտչի ֆիդուրները համեմատում ենք նույն Մոմիկի կողմից կերտված նորավանքի գալիքի շքամուտքի Աստվածամոր և Հայրաստծո ֆիդուրների հետ: Եվ այդ այն դժբարում, երբ նշված խաչքարի և նորավանքի գալիքի շքամուտքի բանդակների միջև ընկած է Արքնին եկեղեցու արեւմտյան շքամուտքի Աստվածամոր բանդակը, որն աշքի և ընկնում արդեն իր խիստ հարթայնությամբ:

Խաչքարերի արվեստը ավելի ու ավելի է Հրապուրում Մոմիկին: Այս շրջանում է առաջ, որ նրա աշքերը հիմանդանում են, և նա նույնիսկ շի կարողանում ավարտել 1307 թ. ակատած ավելուարանի նկարազարդումները: Այս տեղեկությունը այնպահպես է այժմ ԱՄՆ-ի Հարդիրության գրադարանում գտնվող նրա մի ձեռագրի հիշատակարանում, որտեղ Մոմիկը ինքն է նշում, որ շի կարողացել ազարտել ձեռագիրը, ոչարագլաւեալը հետեւնուզ և հետո միացն, ոՅուսօվն որ առ Ֆիուս զկեի սակաւ ամաց լոյս աշաց իմոց դարձավ առիս:³

Թեև հիմանդությունը երկար շի անում (այդ է վկայում անշուշտ իր՝ Մոմիկի սաակաւ ամաց» արտահայտությունը), սակայն հավանաբար այն իր որոշակի հետքերն էր թողել, և ընազ էլ պատահական լոգեար է համարել, որ 1307 թ. ավելուարանից հետո մեզ հայտնի չէ Մոմիկի կողմից նկարազարդված և ոչ մի այլ ձեռագիր:⁴ Դրանից հետո նա ամբողջովուն կլանվում է բանդակագործությամբ և հարտարապետությամբ, այս բնագավառներում ևս ստեղծելով մի շարք հոյակառ գործեր:

ՏԱԹԵՎԻ Ա. ԳԻՒԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ:

«Երբ եղվեց, որ Մոմիկը իր գործունեությունը սկսեց որպես մանրանկարիչ: Սակայն այդ վազ շրջանում արդեն

³ Հ. Քաւոյան, «ԴՊ գարի մահրանկարիչ Մոմիկի մասին», «Պատմության հանդիսական» հանդիսական, 1969, N 2.

⁴ Աս. Մեսականյան, նամակ խմբագրաթյանը, «Պատմության հանդիսական» հանդիսական, 1969, N 4.

ակնհայտ էր նրա ձգտումը գեղի մռնումնենուալ արզնաւները, և մենք բոլոր հիմքերը ունենք նրան վերագրելու 1295 թ. Ստեփանոս Օրբելյանի կողմից կառուցած Տաթենի ու Դրիգոր Եկեղեցին:

Հուշարձանը կառուցված է Տաթենի զլիամփոր տաճարի հարավային կողմում, այնտեղ, ուր ժամանակին բարձրացել էր ճարտարապետական համալիրի հնագույն եկեղեցին: Այդ գողտրիկ կառուցվածքը իր հորինվածքով ներկայացնում է մի թաղածածկ գանձին՝ արևմտյան կողմին ճշակված մուտքով⁵: Ուշագրավ են հուշարձանի ինտերիերը և հատկապես նրա արենելյան կողմի զույգ լուսամուտները, որոնց ձևերը տարիներ հետո Մամիկը կրկնեց Արքայի եկեղեցու (1321 թ.): Մեծ հաշակով է մշակված Տաթենի եկեղեցու արևմտյան մուտքի ճակատակալ քարի ժաղկանչուականությունը պարզիցիան, որը կարծեա նախօրինակ է Հանդիսացել Արքայի եկեղեցու և նորավանքի գավթի՝ հետագայում նրա կողմից կերտված մուտքերի ձևերի մշակման համար: Այս եկեղեցու կառուցումն էր, որ նախօրդել էր 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի պատվերով նկարագրադած ավետարանին: Թվում է, որ այս հանգամանքը պետք է նկատի ունենալ, հապկանալու համար Մոմիկի մանրանկարչական հորինվածքների շնարարապետականը բնույթը:

ԱՐԵՆԻ ՆԿԵՂԵՑՄԱՆ

Հայկական ճարտարապետության նկակի հուշարձաններ են Հայտնի, որտեղ առկա է կառույցի հիշտ թվադրությունը. Նրա ճարտարապետի ստորագրությամբ հանդիրձ: Այդպիսի կառույցներից է Արենիի եկեղեցին, որի շինարարական արձանագրությունը զրված է Մյունիքի արքեպիսկոպոս Հովհաննես Օրբելյանի անունից: Վերջինս իրեն հայտարարում է ոչինո՞ւ սուրբ եկեղեցույց, թեև նույն այս արձանագրու-

⁵ Առ. Մեսարշանյան, Հայկական ճարտարապետության Արևմտյան դպրոցը, Երևան, 1964, էջ 101.

թյունն ավարտվում է տաճարի իրական կառուցազի ստորագրությամբ:

սթվ. 22 (1321) ՇԱՄԺ ԵՂԵՒ. ՄՊՄԻԿ ՎԱՐԴՊԵՏԱ:

ՄՆ ՀՅԱՊԱԹՅԱՄԲ Է ԸՆԹՐՎԱԾ ԱԿԵՂԵՑՈՒ ԿԱռՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԸ: ՎԵՐԱՍԼԱՑ ՀԱՄԱՀԱՓՈԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՆԵՑՈՂ, ՊԵՂԵԱ- ԴՅԱՐՁՆԵԴՈՒՅՆ ՄՈՒՖԻՑ ԿԵՐԱՎԱԾ ՀՈՒԶԱՐՃԱՆԸ ՄԵՂԱՎՈՐՎԱԾ Է ԱՐԺԻԱ ԳԽԱԲԻ ԷՋԲԻՆ ԲԱՐՃՐԱՑՈՂ ԲԱՐԻ ՊԱՊԱԹԻՆ և ՊԻՄՎՈՅ Է ՉԱՄ ՀԵՌՈՒՆԵՐԻՑ: ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՐ ԱՐԾՆԵԱՄՆԵՐԻՆ, ՄԱՄԻԿԸ ԱՐՄԱՆԸ և ՀՊԵԱՑ ԸՆԴՀԱՆՐԱՑԱԾ ՃՆԵՐԻ ԸՆԴՈՐԻՆԱԿՄԱՆ ԱՆՆԱՊԱՐԵՆՎ: ԱՐԴԻՆ ԷԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱՎԾՄԱՐՄԻՆ ՃՆԵՐՈՒՄ ՆԱ ՀԵՌՈԱՑՎԱԾ Խ—XIV ՊԱՐԵԲՈՍՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊԱՇՈԱՄՈՒՆ- ՔԱՐԺՆ ՀԱՐՄԱՐԱՎԱԿՄԱՌՄՅԱՆ մեջ ԸՆԴՀԱՆՐԱՑԱԾ ԳՄՐԵԹՎ- ՎՄՐ ԱՐԱՀԵՆԵՐԻ ԿԱմ շրջու անկյուններում ավանդատներ ու- նեցող խաչաձև Հորինվածքներից: ՆԱ ԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՐՃԱԿ ԷԿԵՂԵՑՈՒ ՀՐԱՄԱՐՎԻՑ արևմտյան կողմի ավանդատներից և արապիառվ զգալի տարածություն շահնեց եկեղեցու ինտերի- բում: Այդ ամենին նԱ ՀԱՍԱՎ գմրեթակիր կամարների արե- մբայան ՀԵՆԱՐԱՆՆԵՐԸ առանձին կանգնած մույթերով վո- խարինելու միջոցով:

Արևների նկեղեցին իր երկու, արևմտյան կողմի առան- ձին կանգնած մույթերով Հանդերձ պատկանում է Հայկա- կան ճարտարապետության մեջ շատ սակավ տարածում ու- նեցող տիպին: Նկեղեցին ունի երկու մուտք, տեղափորված արևմտյան և Հարավային կողմերում, ընդ որում անհա- մատ ավելի շքնչ է մշակված արևմտյան շրամուտքը:

Առանձին Հետաքրքրություն է ներկայացնում արևելյան արաբիդի մեջ բացվող զույգ լուսամուտը: Այստեղ միշնապա- տը մշակված է ոչ մեծ սյան ձևով, իսկ բացվածքները ձգված Համաշափոթյուններ ունեցող խաչերի մն հման: Մի բոլորաձև բացվածք էլ արգած է սյան խոյակի մեջ: Նման լուծում Հանդիպում է միայն մեկ կառուցազում: Պա 1295 թ. Տաթևում, Մտեփանոս Օրբելյանի պատվերով նույն Մոմիկի կողմից կառուցված ոչ մեծ Ս. Գրիգոր եկեղեցին է, որի

* Կայ վիճակը թյունի, պրակ 3, Երևան, 1967, էջ 29:

ձարտարապնուական մի շարք ձևեր որոշ ձևափոխումներով հանդես են գալիս այսօնեղ՝ Արենիի եկեղեցում:

Սակայն Արենիի եկեղեցում հանդիպում են նաև խիստ ինքնառիսոց, հետաքրքիր լուծումներ, որոնք առհասարակ զուգահեռներ չունեն ուրիշ հուշարձաններում: Այդ զերարերում է հատկապն մուտքերի բարավորների կոնստրուկտիվ ձևերին: Նշենք հարավային մուտքի ցածր կորումյունը ունեցող բարավորը, որի փականային բարը ունի կողային ուղղանկյուն հլուստներ: Վերջիններս կոչված էին ապահովելու կոնստրուկցիայի կայունությունը նույնիսկ այն դեպքում, եթե սնյամիկ ուժերի ազդեցության առակ կողային քարերը որոշ շափով հեռանային միջանցիք:

Հուշարձանի արտաքին ճականանորը աշքի են ընկեռում ալացիկ համաշափություններով և ձևերի հատակությունը: Ենշտված է միայն արևելյան ճականը, որտեղ առկա են երկու, հատվածքում աստիճանաւովոր և ստալակտիտային փոխանցումներով պսակվող խորշեր:

Տաճարի գնդարձեմատական մշակման գործում արտապակար նշանակություն ունի արևմտյան շրամուաքի ճականակալ բարի միաւ տեղավորված Աստվածամոր պատկենրաժանդակը, կոմպոզիցիա, որն իրավամբ կարելի է գտնել Մոմիկի ամենանշանավոր գործերի շարքը:

Ոչ պակաս առավորիչ են ինտերիերում առագաստների միաւ քանդակված ավելացարանիշների խորհրդանշանները: Տեղավորված գմբեթից անմիջապես ներքե, նրանք մի զեղատմանի քանդակազարդ գոտի են կազմում, որոշակի կերպով հակառակվելով ինտերիերի հարթ ու ողորկ, որմնանկարներից ու քանդակներից զուրկ պատճերի հարթություններին:

Այստեղ ևս ակնհայտ է Մոմիկի ստեղծագործական ինքնատիպությունը, նրա ձգտումը՝ հեռանալ ընդհանրացած կանոնիկ ձևերից և մշակել մի յուրահատուկ սիստեմ, որտեղ եկեղեցի մտնողի հայացքը ակամա ոգեսք է ուղղվելով զերի մեր, զերի հիանալի լուսավորված, շրեղազարդ պատկենրաժանդակները, զերի լուսավոր գմբեթը: Այդ պատկերացանդակները կարծես հիմնատակ էին զմբեթի համար, զմբեթ,

որը դարեր ի վեր քրիստոնեական եկեղեցու համար սրբա-
զան երկնքի, դրախտի խորհրդանշանն էր:

Առաջատանելին վյա պատկերված են ավետարանիներ
ՀոգՀանի, Մատթեոսի, Պուկասի և Մարկոսի խորհրդանշան-
երը, Հայոպատասխանարար՝ Հրեշտակ, թեավոր ցուլ, ար-
ծիվ և թեավոր առյուծ:

Ավետարանիների խորհրդանշաների պատկերումը չավ
հայտնի էր միջնադարյան հայ արվեստում, և տեսրամորֆի
ձևով նրանք տոկա են արդեն VII դարի կմրատի որմնա-
նեկարներում: Հետագայում նրանք տարածում են գանում
հատկապես Սյունիքի, մասնավորապես Վայոց ձորի քան-
դակագործական դպրոցում: Այս հանգամանքը առանձնակի
հետաքրքրություն է ներկայացնում և թերեւ պետք է բա-
ցաւումի մանրանկարչական արվեստի մեջ ընդհանրացած
ձևերի աղջեցությամբ և այն սերտ համագործակցությամբ,
որ կար Գևաճորի մանրանկարչական դպրոցի և Վայոց ձորի
ժանդակագործ վարպետների միջև: Այս առումով էլ միան-
դամայն տրամարանական է Մոմիկի գործերում տեսրամոր-
ֆիքրի ի հայու գալը, ընդ որում զրանք իրենց որոշակի տեղն
են գտնում տարիներ հետո նրա կողմից կառուցված Բուր-
բել իշխանի երկշարկ գամբարան-եկեղեցում:

Արենիսում այդ բարձրարանզակները կերպված են առա-
զաստենիքի միակտուր, մեծ բարերի վրա, ընդ որում նրանց
կորագիծ նիշտ տաշվածքը և հատկապես բարձրացնելն ու
կոնստրուկտիվ այս բարդ հանգույցում տեղավորելը կարող
էին իրականացնել կառուցօղական-ինժենիրական բարձր
դիտելիքների տոկայության դեպքում միայն: Առաջիկ մեծ
վարպետությամբ է պատկերված Հրեշտակը, որը հազին ու-
նի թեթև, կորագիծ ծալքերով իշնող լայնարձակ հագուստ
և կարծես նախրում է օղում: Զախ ձեռքում նա բռնել է
սուրբ դիրքը, իսկ աշ ձեռքի մատերը ծալել օրհնելու համար
Դիմադժերն ուղիղ են, կանոնավոր, կորագիծ, մաղերը գա-
ւորում խոպապներով իշնում են ուսերի վրա: Հիանալի են
ոյատկերված թռչնաթթները: Լայնարձակ, ուժեղ, բազմա-
շեր երկար գիտուրները ներգաշնակ են առաջատար առ-

Հուն կորագծերին, զմբեթատակ օղակի ձևերին: Գլխի շուրջը լայն լուսապատճեն է, որը նույնիսկ դուրս է դալիս ստալակտիտային օղակի սահմանելորից և հիանալի ֆոն է ստեղծում շրջառակի արտահայտիչ դեմքի համար:

Այս պատկերաքանդակը խիստ սրոշակի աղերս ունի հայկական մասրանկարչության մեջ ընդհանրացած ձևերի և հատկապնմ մեծ վարպետությամբ կատարված հրեշտակաների պատկերագրական տիպների հետ: Այստեղ ակնհայտութեն զգացվում է Մոմիկի, որպես նշանավոր մասրանկարչի, հմուտ ձևորդ: Մոմիկի մյուս նշանավոր գործը նույն Արենիկի հեկեղեցու արևմտյան շքամուսքի ճակատակալ քարի վրա պատկերված Աստվածամայրն է՝ մասունչ Հիսուսը դրեհին:

Աստվածամոր պատկերումը պաշտամունքային կառույցների մուտքերի վրա լավ հայտնի էր դեռևս վաղ միջնադարում, թեև այնտեղ Աստվածամայրը, որպես կանոն, պատկերվում էր կտիտորական կոմպոզիցիաներում: Այսպէս, Թեմզաշնուր տեսնում ենք ամբողջ հասակով կանգնած Աստվածամորը, որի երկու կողմերում կանգնած են նրան երկրպագող կտիտորները:

Աստվածամոր պատկերումը մուտքերի ճակատակալքարերի վրա հասուն տարածում է ստունում XIII—XIV դարերում, մասնավորապես Վայոց ձորում (Արտօն, Արենի, Սպիտակավոր, Նորավանք): Այս հանդամանքը անշուշտ պատահական չէր և բառ էության հանդիսանում է Վայոց ձորի գեղարվեստական դպրոցի առանձնահատկություններից մեկը: Արենիի Աստվածամայրը մի վեհաշուր երկնային թաղումի է, որը հանդիսավոր կերպով բազմել է գանին, և պատկերի խորքը կազմող ծաղկահյուս կոմպոզիցիան կարծես շքեղագարդ մի գորդ լինի՝ կախված գանին նույնամասում: Մեկ այլ գորդ էլ, մշակված երկրուշափական դարպամուտիվներով, փուլած է նրա ոտքերի տակ: Ամբողջ բարձրագագակը տեղափորված է երկու գուգահեռ զանիկներով կազմված ալարանե կամարի տակ: Ծիկ Աստվածամոր քիցուրը տեղափորված է միշտ մուտքի առանցքով, մասուն-

Հիսուսը թեքվել է դեպի աջ, «Հարաննություն» է անում, կարծես ձգուում է զուրս պրժենել մոր գրկից: Թրիստոնեական պատկերագրության մեջ լավ հայտնի է այս տարրերակը. այն որոշ տարածում է զտեռում հատկապես XIII—XIV դարերում: Պատկերաբանդակի որոշակի հարթային բնույթը, միտումնավոր կերպով ուժեղ ուղինեֆից խուսափելը անշուշտ պատահական չէր: Դժվար չէ տեսնել, որ այն պայմանավորված էր շքամուտքերի ճարտարապետական ձևերով, որոնք իրանց հերթին աշքի են ընկեռում ընդհանուր զուսպ, հարթային մշտկումով:

Այն տպավորությունն է ստացվում, որ Մոմիկը ձգտել է պատկերեն կառույցը որպես ամբողջական, ուղղաձիգ մի ժամանք, որպես մի վերասլաց աշտարակ՝ զրված ամբողջ տարեածիքի վրա գերիշխող բլրի գագաթին: Եվ իսկապես, երեսու շքամուտքերն էլ նկատելի են միայն համեմատարար մոտիկ տարածությունից, մինչդեռ հեռավից զիտելիս նրանք ամբողջապես ճուրվում են ընդհանուր ժամանքի հետ՝ չմասնատելով նրան և ոչ մի հարթությունը: Մեծ վարպետությամբ է մշակված Աստվածամոր պատկերաբանդակի խորքը, բռնական ժաղկանյուս ճոխ զարդաձեկերից կազմված կոմպոզիցիաներ: Այն որոշակիորեն հիշեցնում է նույն զարաշքանում ընդհանուրացած խաչքարերի նրբազնը հարթությունները, նրանց հարթային գեղատեսիք ձևերը: Մյուս կողմից, շքամուտքերի տիրապահների մշակումը նույր հարթաբանդակային ձևերով հայկական ճարտարապետության մեջ լավ հայտնի էր Արենիի եկեղեցու կառուցումից շատ ավելի զարդարությամբ:

Նույն այդ սկզբունքի հիման վրա է մշակված Տաթեր ս. Գրիգոր եկեղեցու շքամուտքը, մի կառույց, որը Մոմիկը ավարտել էր Արենիի եկեղեցուց շուրջ քառորդ դար առաջ:

Սակայն Մոմիկը հազվագյուտ զննվերում էր կրկնում դուր եկած ձևերը. նրան հատկապես բնորոշ էին լայն որոնումներն ու նորանոր մոտիվների մշակումը: Կարելի է նշել առանձին մանրամասներ միայն, որոնք նաև օգտագործել է նույնությամբ իր հաջորդ կառուցներում, թեև այսուղ ևս նա մշակում է նույն ձևի մի նոր տարրերակ, մի նոր լուծում:

Այսպես է մշակված Առտվածամոր զանը ծածկող գորդի զարդաձևերը Նորավանքում, որը ոչ այլ ինչ է, քան Արևիի դորդի կրկնումը, սակայն շրջված արդեն 45° -ի առակ:

ՆՈՐԱՎԱՆՔԻ ԳԱԼՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒԾՈՒՅՑ

1321թվականին Մոմիկը ավարտում է Արևիի եկեղեցին, և նույն այդ ժամանակ էլ ուժեղ երկրաշարժը ցնցում է ամբողջ Վայոց ձորը: Այն այնքան ուժեղ էր, որ նրա մասին հատուկ մակագրություն է արգում եկեղեցու շինարարական արձանագրության վերցում: Դժբախտաբար մեզ չի հասել այս շրջանից Սյունիքի դեպքերը նկարագրող և ոչ մի գրավոր հիշատակություն: Մտեմիանոս Օրբելյանը մահացած էր արդեն, իսկ որևէ այլ տոհմային պատմիչի գործ չի պահպանվել բնակվությունում: Այդ երկրաշարժը պեսար է որ զգալի ավերածություններ արած լինեն, որպեսզի անհրաժեշտություն պահպանվեր հետագա սերունդներին հայտնելու այդ մասին: Բացառված չափությունը է համարել, որ այդ մի միջոց էր հիմնավորելու նաև այն վերակառուցումները, որոնք պեսար է ձեռնարկվելին նույն այդ երկրաշարժից տուժած վայրերում: Այժմ խիստ դժվար է ասել, թե ինչ կառույցներ են տուժել այս երկրաշարժից և ինչ շենքեր են վերականգնվել: Մեր հետաղոտառը յուրաքանչյուր են տալիս, որ հատկապես տուժել էին Օրբելյանների հոգնոր կենտրոն Նորավանքը և, ամենայն հավանականությամբ, նույն 1321թ. ավարտված Սպիտակավոր եկեղեցին և մանավանդ վերցինիո սլացիկ գմբեթը: Այս վերակառուցման հետքերը թերեւ կարելի է տեսնել թմբուկի արևելյան կողմի որմածքում, որտեղ առկա են մի շարք վնասված քարեր, որոնց առկայությունը ոչ մի կերպ չի կարելի բացատրել, եթե ոչ թմբուկի երբեմնի վերակառուցումնուի:

Սակայն անցեներ Նորավանքին. XIII դարում այստեղ կառուցվել էին երեք նշանակալից շենքեր: Առաջինը ա. Կարապետ եկեղեցին էր՝ կառուցված Անդարիտ Օրբելյանի կողմից XIII դարի առաջին քառորդում և ավարտվել էր քսա Սա. Օրբելյանի՝ 1223թ.: Դավիթը գտնվում է եկեղեցու արե-

մըտյան կողմում և մի շարք վերակառուցումներ է ապրել: Ամենից առաջ ակնհայտ է, որ պատերի ներքեւ մասերը, նրանց հավող, չորս կենտրոնական սյուներին համապատասխանող որմեասյուներով հանդերձ կազմում են գավթի շինարարական առաջին վավերագրերը: Խակ ոյն հանգամանքը, որ պատերի հենց այս մասերի վրա էլ պահպանվել են մի շարք արձանագրություններ, որոնցից հետույնը թվագրում է 1232 թ., տարակույս չի թողնում, որ գավթի շինարարությունը սկսվել էր այն ժամանակ, երբ նկեղեցին նոր էր ավարտվել (1223 թ.): Նման զգալի շափեր ունեցող շենքը հազիվ թե ավելի վաղ ավարտվեր, զրա համար աեցրածիշտ էր առնվազն 6—7 տարի: Սակայն որոշ ժամանակ անց ուժեղ երկրաշարժը մեծապես վնասում է վանքի կառույցները, որից և տուժում են թե՛ նկեղեցին և թե՛ գավթիթը:

Նկեղեցին այժմ կիսակործան է, և զմվար է վերականգնել նրա տարբեր շրջանների վերակառուցումները, մինչդեռ զրանք ակնհայտ են գավթի կանգուն շենքում: Այստեղ զետեղից մոտ երեք մետր բարձրության վրա պատերը ուղիղ գծով կտրվել են, ավելացվել է մի ուժեղ հորիզոնական գռախ, որից վեր էլ իրականացվել է աստիճանաբար առաջացող թերազիր ժածկը: Նման վերակառուցումը, երբ հեից համեմատարար բիլ բան էր մեացել, գիտառքն հավասար էր մի նոր գավթի կառուցելուն և չպետք է զարմանալ, որ Սմբատ Օքքլյանը իր մեծ արձանագրության մեջ իրեն է վերագրում նրա շինարարությունը: Նույն արձանագրության մեջ նա խոսում է նաև նկեղեցու վերանորոգման մասին: Այդ արձանագրության սկզբում կարդում ենք.

Ի թ՛ՈՒԽՍ ԶԺ (1261) ԱՅՍ ԳԻՐ ՑԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՉԱՆ ԱՆՁՆՁԵԼԻ ԻՄ ՍՄՊԱՏԱ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ՈՐԴՈ ՄԵՍԻ ԼԻՊԱՐՏԻ, ՈՐ ԶԴԱԼԻՒԹՍ ՇԽՆԵՑԻ ԶԻԿԵՂԵՑԻՄ ՎԵՐԼՈՍԻՆ ՆԱՐՈԴԵՑԻ...¹:

Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գավթիթը

¹ «Շիքան Հայ զիշաղության», պրակ 3, Երևան, 1967, էջ 217.

² Նույն առջում, էջ 218.

զգալի վերակառուցումներ է ապրել ևս մեկ անգամ։ Այդ վերակառուցման ակնհայտ հետքերը պարզ նկատելի են գավթի ծածկի կենտրոնում (ներառյալ այնքան տարօրինակ ձեեր ունեցող ստալակտինային գմբեթը) և արևմայան սպատի կենտրոնական մասում, որտեղ վերակառուցվել է հին մուտքը և մի նոր երկնարկ շքամուտք կառուցվել։ Այս առնչությամբ ավելացվել են ուժեղ ելուստ ունեցող ստալակտիտավոր կամարազեղներ, և շքամուտքն ամբողջությամբ ավելի բարձր է ստացվել, քան 1261 թ. կառուցված գավթի բիզու, և թիշ շանրեր չեն թափվել հարմարեցնելու շքամուտքի ելուստը հին ծածկի թերապիր հարթության հետ։

Այս ամենը խիստ ակնհայտ է և լավ նկատելի է նույնիսկ լուսանկարներում։

Շքամուտքի նման վերակառուցումը պատահական չէր-այն անշուշտ կապված էր գավթի արևմայան մուտքը շեշտելուց անկության հետ, և բարձր, ուժեղ ելուստ ունեցող այդ շքամուտքը մեկնարանովելու էր որպես ճարտարապետական համալիրի զինավոր մուտքը։ Հետագայում, XVII դարում կառուցված բարձր պարիսպը փակել է դիպի վանը տանող ճանապարհը, մինչդեռ միջնադարում, երբ չկար այդ պարիսպը, լեռնալանջով բարձրացող ճանապարհի բոլոր հատվածներից հիանալի կդիտվեր համալիրի այդ առավել առաջացող կառուցից՝ գավթի արևմտյան պատը և նրա այնքան սովավորիչ բարձր շքամուտքը։ Այս առնչությամբ էլ միանգամայն տրամարանական հետու ուժեղ ելուստ ունեցող ստալակտիտավոր կամարազեղները։ Դժբախտաբար մեզ չի հասնէ գավթի այս վերակառուցման մասին և ոչ մի պատմական տեղեկություն, և այդ հարցում չեն օգնում նաև շքամուտքի պատկերաբանգակենքը վրա եղած արձանագրությունները, որոնք բոլորն էլ ունեն պաշտամունքային բնույթ։ Սակայն առաջնակարգ նշանակություն են ստանում բուն շքամուտքի ճարտարապետական ձևերը և հատկապն ուժեղ ելուստ ունեցող ստալակտիտավոր կամարազեղները, որոնք ընդհանրանում են ոչ վաշ, քան XIV դարի առաջին ամսնամյակներում, և որոնց հիանալի

օրինակներ ունենք նույն Վայրց ձորում (Սպիտակավոր, Բահուճառի միանալ նկեղեցի):

Այս ամենից Եղբակացնում ենք, որ գավթի վերակառուցումն ընդհանրապես և հատկապես շքամուտքի ավելացումը պեսար է թվագրել ոչ վաղ, քան XIV դարի առաջին կեսը. զավթիք ուժեղ վնասվածքներ էր ստացել թերեւ 1321 թ. Վայրց ձորի երկրաշարժի ժամանակ:

Միանգամայն արամարտական է, որ Օրբելյանները իրենց Հռիփոր կննարունը և տաճմային գամբարանը չեն կարող թուզնել կիսակործան դրամթյան մեջ, մանուվանդ որ նույն արդ պահին արգել ավարտվել էր Արհենիի նկեղեցու շինարարությունը: Այս որայիշանեներում հազիվ թե կարելի լիներ տարակուսել, որ Նորավանը մնաւաված կառույցների նորոգման գործը ևս պետք է հանձնարարվել Մոմիկին՝ իշխանական տան դիմավոր հարաւարապետին:

Լավ հայտնի է, որ Հայկական թագավորական և իշխանական տները ունեն իրենց զըխավոր Հարսարապետ-քանդակագործները, որոնց և մշտապես վատահում էին առավել նշանակութից կառույցների շինարարությունը: Այսպիսին էր Մանուելը Արծրունիների մոտ: Կ դարի առաջին քառորդում նա էր զեկումարում նօրասանող մայրաքաղաքի՝ Աղթամարի Հիմնական շենքերի կառույցումը, կերտում պալատական եկեղեցու զարդանաշնաշաշ պատկերաբանդակները: Ալղողիսին էր Տրդառը Անիում, և նրան էին զստահում Բագրատունյաց թագավորները իրենց առավել նշանակութից կառույցները՝ Մայր տաճարը, Գաղկաշենը և այլ շենքերը:

Սյունիքում, Օրբելյանների իշխանական տան կառույցները XIII դարի երկրորդ կեսում իրականացնում էր Սիրանեա Հարսարապետը, նրան հետագայում փոխարինեց Մոմիկը, որը, ինչպես տեսանք վերը, կառույցել էր Տաթեսի ո. Գրիգոր Եկեղեցին, Արմենիի վերասլաց եկեղեցին, և միանգամայն տրամարտանական էր, որ նրան էր հանձնվել վերականգնելու Նորավարերի երկրաշարժից վեատված շենքերը:

Համոզվելու համար, որ այսանդ՝ նորավանքում իսկապես Մոմիկն է գործել, բավական է ուշադիր կերպով համեմա-

առել գամիթի շքամուստի ձևերը նրա ազելի վաղ շրջանի դորժերի հետ, համեմատել նրանց Տաթենի, Արենիի եկեղեցներ, նրա կերտած խաչքարերի ձևերի հետ։ Նորավաների շքամուստի առաջիկ տպավորիչ հասվածներն են բացվածքների ճակատակալ քարերի պատկերաբանդակները, ընդ որում ակնհայտ է այն որոշակի բնորդականությունը, որ կա նրա կերտած խաչքարերի, Արենիի և Նորավաների շքամուստի գրա կերտված աստվածամայրերի բարձրաբանդակների միջեւ։

Ինչպես Արենիում, այնպես էլ Նորավաներում աստվածամայրերը նաև այն են ուղղանկյուն գորգերով ժամկված զահերին, և երկու տեղում էլ մահուկ Հիսուսը ու արտաճակալությունը է անում, կարծես ձգուում է դուրս արձնել մոր դրիբց։

Այս հանգամանքը անշուշտ պատահական չէր, և պատկերանդակի հատկապես այս ախադին առաջելություն տալը Բերես զալիս է Մոմիկի մահերանկարչական գործերի բնորդանությունը ուղղությունունից, որոնք աշքի ևն ընկնում իրենց դիմամիկայով, պերսոնաժների շարժուն կնշվածքներով, մի հանգամանք, որ այնքան տարրերում է Մոմիկի գործերը այլ մահերանկարչների գործերից։

Ե՞զ Արենիում, և՛ Նորավաների դավիթում պատկերացանդակների ֆոնը կազմում են ծաղկացյան Հորինվածքները։ Ըստ Էտիլյան կրկնօնում են նաև զահերի ձևերը, և դրանուն նույն են զահերը ծածկող գորգերի երկրոշափական Հորինվածքները։ Բնշանու եզվեց, Նորավաներում այն միայն շրջապատ է 45°-ի առակը։

Մյուս կողմից ոչ պակաս ուշողուազ է Մոմիկի երեք գործերում (Տաթե, Արենի, Նորավաների զալիին) շքամուստի ծաղկացյան կոմպոզիցիաների ձևերում նշմարվող զարգացումը։ Եթէ Տաթենում ամբողջ տարածությունը ծածկված է Համահման, ըստ Էտիլյան կրկնված զարգացմուիզներով, որուն շիմնականը ուղրանցյան ուսումնարված անընաղպես են, ապա Արենիում դուշի վրա երկու կողմից վեր են բարձրանում և թերթում աշ ու ձախ ձախ ծաղկափլիքներ՝ շրջապատված սաւերի և անընաղպես գալարուն մոտիվներով։ Սուկայն հետաքրքրից է, որ այդ բնորդականության գրա Աստվածածուկերի վրա, Աստվածա-

մոր ֆիզուրից աչ և ձախ, ընդհանուր մակարդակից զգալիութեն առաջանում են խաղողի երեքական ողկույզներ, սաեղծելով նոր հանգույցներ, նոր շեշտված կետեր։ Նորավանքում բուսական ճոխ զարդաձեների հետ միահյուսված են արձանադրության տառեր, իսկ խաղողի ողկույզներին այստեղ կարծես փոխարինում են երկու արբապատկերներ, որոնք նույնական տեղավորված են Աստվածամոր ֆիզուրից աչ և ձախ և ուղղված են գեղի կենտրոնական ֆիզուրը։

Սակայն կան և ինքնատիպ զժեր։ Եթե Արենիում ամբողջ խորքը լուծված է համարյա թե սիմետրիկ ձևով, ապա նորավանքում Մոմիկը զգալիորեն խախտել է արդ՝ ձախ կողմում բուսական զարդաձեների հետ համարյա թե ձուլվել են մեծ, դեկորատիվ տառերը, իսկ աչ կողմում առկա է արդեն գալուրների ժապավեն՝ նրա վրա փորագրված արձանադրության տառերով։ Մանրանկարչական խորանների մշակմանը այնքան համաշնչյան այս ձեմքը հանդես են գալիս Մոմիկի բոլոր կառուցների շրամուտքերում։ Բացառություն են կազմում միայն իշխան Բուրթելի երկարեցած քամբարան-եկեղեցու տառաջին և երկրորդ հարկերի շրամուտքերը, որոնք, ինչպես կտեսնենք հետպայտում, ավարտվել են Մոմիկի մահից հետո, նրա աշակերտների կողմից։

Այս ամենի հետ միասին լի կարելի շնկատել երկու պատկերանդակեների միջև եղած տարրերությունները։ Արենիի հիմնականում խիստ հարթացին լուծմանը հակադրվում է նորավանքի պատկերաբանդակի համեմատաբար ուժեղ ռելիկտը։

Այս հանդամանքն անշուշտ պատահական չէ և, ինչպես անձանք, պետք է իր բացատրությունը զտնի երկու կառուցների ճարտարապետական ձևերի մեջ եղած սկզբունքային տարրերությամբ։ Արենիի եկեղեցին մշակված է որպես վերաբաց, միասնական մի ծագալ, ընդ որում ոչ մի խիստ հլուստ ունեցող ճարտարապետական ձև չէր մասնաւում նրա հարթացին մշակում ունեցող նիստերը։ Այս սկզբունքին լիովին համապատասխանում էին և արևմտյան, և հարավային շրամուտքերի հարթացին մշակումները։ Այս ընդհանուր մուեցման հետ լիովին համաշնչյուն էր նաև արևմտյան շրա-

մուսորի ճակատակալ քարի վրա քանդակված Աստվածամոր
պատկերը:

Այլ ձևով էր մշակված Նորավանքի գավթի շքամուսոր:
Այն ըստ Հության հանդիսանալու էր Համալիրի ոլլավամոր
մուսորը, դիտնի էր զգալի սարածությունից, և բնավ էլ պա-
տուհական չէին այն ուժեղ հլուստ ունեցող ստալակտիտամոր
կամարագեղները, որոնց այնքան յուրահատուկ առնոր են
տալիք այս շքամուսորին առնասարակ:

Այս ամենը չէր կարող իր որոշակի ազդեցությունը չու-
նենալ շքամուսորի ճակատակալ քարի վրա պատկերված Աստ-
վածամոր քանդակի կատարման վրա, և բնավ պատահական
չէ նրա, Համեմատած Արծնիի նույնատիպ քանդակի հետ,
ուժեղ ռելիքֆը: Ուշադրավ առանձնահատկություններից մեկն
է կազմում այստեղ Աստվածամոր գլխին պատկերված ազալ-
նին, որի թները կազմում են լուսապսակի շարունակությունը:
Մի եռամ թողնելով Աստվածամոր և սուրբ Հոգու առնալությունն
ու նման սյունեի սիմանտիկան, նշենք, որ սարածական տե-
սակնետից ազալնու թների խիստ առաջ դալը որոշակի ծավա-
լային հանգույց է ստեղծում, յուրովի փոխանցում պատկերա-
բանդակից դեպի այն շրջանցող ստալակտիտամոր կամար-
ագեղը:

Ի վերջո նշենք, որ ուժեղ Ֆլուստ ունեցող բարձրաբան-
դակները լուզ հայտնի են Մոմիկի նախորդ գործերում. մենք
նկատի ունենք 1308 թ. կերտած խաչքարը, որտեղ խաչքարի
վերնամասը կազմող զեխուս կումպոզիցիայի ֆիգուրները աշ-
քի են ընկենում իրենց ուժեղ ծավալային մշակումով: Այս հան-
դամանքը սկզբունքային նշանակություն է ստուեռմ Մոմի-
կի ստեղծագործական որոնումների ուղիները հասկանալու
համար. պարզ է դառնում, որ նա ամեն անզամ, ելնելով
բանդակի տեղադրման պայմաններից, նորովի էր մոտենում
հարցին և բնավ կաշկանդված չէր մեկ անգամ ընտրած
պատկերման ունիւնիկայով:

Այժմ դառնուանք Նորավանքի գավթի շքամուսորի լուսա-
մուսորի ճակատակալ քարի վրայի մեջ պատկերագրական
կոմպոզիցիային:

Այստեղ պատկերված է Հայր առավածք, ձեռքում ըլլունած Ազամի դլուխը: Այդ է հաստատում նաև նրա մոտ նզած արձանագրությունը: Այս սյուժեն հետաքրքիր է և խիստ ուշագրավ: Բանն այն է, որ միջնադարյան արվեստում Հայր առավածքը ընդհանրապես դիմովում էր իրական կրանքից խիստ հեռու մի էակ և բնավ էլ պատահական չէ, որ նույնիսկ ավելացարանային սենագրաներում նա պատկերված է սիմվոլիկ ձևով, որպես երկնքից իջնող մի աշ, որին սովորաբար զուգորդում էր նրա խորհրդանշանը՝ ազամինին: Մինչդեռ այստեղ տեսնում ենք նակարտակալ քարի ամբողջ բարձրությունը դրավող փառաշնչությունով մի մարդու պատկեր, որը բարձրացրել է ազ ձեռքը օրնենիու համար, իսկ ձախ ձեռքում կրծքի մակարդակի վրա բռնել է մարդու հիանալի շահված մի դլուխ:

Աստծո շունչը, որը կրանք է տալիս Ազամին, խորհրդաշնչած է ազամինիով, վերցինս կարծես դուրս գալով Հայր աստծո մորութից, թռչում է զեզի Ազամի շրթունքները: Մի երկրորդ ազամինի ևս պատկերված է մորութի ծալքերի մեջ: Հայր աստծո ֆիզուրից ձախ տեղավորված է Քրիստոսի խաչելության տեսարանը, իսկ աշ՝ մի հրեշտակ: Ավելի ցած փորագրված է տեսարանը բացասարող արձանագրությունը: Այս բարդ հորինվածքի պատկերագրական էությանը անդրագարձել են մի շարք հետազոտողներ և հատկապես Սիրարքի Տեր-Ներսիկյանը, որի կարծիքով այստեղ միահյուսված են Ազամի սահզծումը, խաչելությունը, Դանիելի տեսիլը, աճեղ դրաւաստանը և այլն:

Մոմիկն այստեղ հանդիս է զալիս ստեղծագործական լայն որոնումների, հանրահայտ ձեռքից և սյուժեներից խուսափելու իր տարերքում, մոտեցում, որը կարմիր թելի պես անցնում է նրա բոլոր՝ թե՛ մանրանկարչական, թե՛ քանդակագործական և ճարտարապետական գործերով առհասարակ: Դրա հիմնալի օրինակն է Արքենիի նկադիցին ամբողջությամբ, որտեղ նորույթ է և հորինվածքն ընդհանրապես, և՛ ճարտարապետական մանրամասները, և՛ հատկապես պատկերացրական ավանդական սյուժեների նորովի կատարումը: Այս-

աղիսին էր դարձել Նորավանքի գավթը վերակառուցումից
հետո, որտեղ երդիկի ստալակտիտները իրենց ձևերով կրկնօ-
րինակը չունեն մինչ այդ Հայկական ճարտարապետության մէջ
Հայտնի ստալակտիտների ջարբում, էլ չենք խոսում այնքան
անսովոր շքամուտքի մասին՝ իր խիստ յուրովի այսմետացիւր
պատկերաբանդակներով հանդերձ:

ԶՈՐԱՅ ԵԿԵՂԵՑՅԻՆ

Նորավանքի դավթի ծածկի կենտրոնական մուտքի վերա-
կառուցումը, Նոր շքամուտք ավելացնելը շատ երկար ժամա-
նակ շէին կարող պահանջել, և 1322—1323 թթ. գավթի վերա-
կանգնումը անշուշտ ավարտվել էր արդեն։ Ուսումնասիրու-
թյունները ցույց են տալիս, որ գավթի վերականգնումից հե-
տո Օքքելյան իշխանները նրան են հանձնարարել իրենց ամա-
ռային նստավայր Եղեղիսում մնել այլ, այսպես կոչված, Զո-
րաց հեկդեցու կառուցումը։ Որ այս ուշագրավ, այնքան ան-
սովոր եկեղեցին դարձյալ Մոմիկի գործն է, վկայում են ոչ
միայն Հայկապես Մոմիկին ընորոշ Հայարձակ որոնումները,
այլև կառուցի բոլոր ճարտարապետական ձևերը, որոնք այն-
քան համաշնչուն են, այնքան մոտ Մոմիկի այլ հուշարձան-
ների հայտնի ձևերին։ Հուշարձանն աշքի է ընկնում խիստ
արտասովոր ճարտարապետական հորինվածքով։ Նման լու-
ծում շներ տեսնում են մի այլ տեղ։ Դրա հետ միասին մեծ
վարպետությամբ են մշակված երան ճարտարապետական ման-
դրամաները, իսկ կառուցվածքն ամբողջությամբ տողորված է
բարձր գեղարվեստականությամբ և համամանությունների
անմտաց ներդաշնակությամբ։ Եինարարական արձանագրու-
թյուննից, որը փորագրված է արևելյան պատի Հյուսիսային
խորշի պատկի վրա⁹, պարզ է դառնում, որ այն կառուցել է
Հարացյիշ իշխանի թառը՝ Մյունցաց հոգիսկոպոս Ստեփանոսը,
որը նպիսկոպոսական գումին էր նստած XIV դարի 20-ական
թվականներին։ Մի այլ արձանագրություննից, փորագրված

⁹ «Դիմոն Հայ վիմագրության», պատկ 3, էջ 222.

1328 թ., պարզ է դառնում, որ հիեղեցին այդ ժամանակ արդեն գոյություն ուներ:

Հստ իր հատակագծային հորինվածքի այն ներկայացնում է պաշտամունքային կառուցիչ արևելյան մասը միայն՝ արսիդը և երկու ավանդատներ՝ տեղավորված նրանից աշ և ձախ: Արևմտյան պատի ամբողջ կենտրոնական մասը գրավում են երեք լայնանիստ, բաց կամարները, և այսպիսով արսիդը իր ամբողջ բացվածքով տեսանելի էր դրսից: Եկեղեցու արևմտյան կողմում ստրածվում է մի ընդարձակ սարահատակված հարթակ, որտեղ էլ, ինչպես ներկաղված է, ժամասացության ժամանակ հավաքվում էր իշխանական թիկնապահների զորագունդը: Թվում է, որ հենց այս ողինվորական բնույթն էլ թերողել է հիեղեցու արտաքին ճակատների այն զուսպ մշակումը, որը բնորոշ է այս կառուցվածքին: Պատահական չէ, որ հուշարձանը որոշ շափուկ առանձնանում է Մոմիկի համեմատարար ավելի շքեղատեսիլ կառուցյների շարքում: Սակայն չեայս դրան, օգտագործված ճարտարապետական ձևերի համադրությունը Մոմիկի մինչ այդ կառուցված շենքերի համապատասխան ձևերի հետ, որոշակի հիմքեր է տալիս այստեղ ևս ահանձու մեծ վարպետի ձեռքը: Այսպես, օրինակ, չի կարելի չեկատել այն որոշակի ընդհանրությունը, որ կա այս հուշարձանի և Մոմիկի կառուցած Արենիի եկեղեցու ճարտարապետական ձևերի և Կատեկապնա երկու տեղում չի հուշարձանների արևելյան ճակատները ձևավորող համավածքում հոանկլունաձե, ոչացիկ խորշերի մանրամասների միջն. Նրանք հար և նման են և այդ ձևով հանդիպում են միայն և միայն այս երկու կառուցյներում: Ծիչոտ համանման են մշակված թիւ ներսի ստալակտատային գոտիները, թիւ քիվերը, թիւ որմեասյուներն ամբողջությամբ՝ իրենց խարիսխների և խոյակների ձևերով հանդերձ: Խոկ Զորաց եկեղեցու տառեձին կանգնած ուժուները խիստ մօտ են նորավաների Բուրթել իշխանի դամբարան-եկեղեցու ոստոնդային սյուների ձևերին:

Համանման երեսութիւնների է նաև կառուցիչ կռնացուկանի լուծումներում: Հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ եղակի բացառություն են կազմում այն

Հուշարձանները, որտեղ կամարները ավելի ցած են, քան եիս-սաշբքանագիծը։ Այս տեսակետից բնորոշ օրինակ են հանդիսանում Արենիի նկեղեցու մուտքերի կամարները, որոնք երկու դիմում էլ դրախտ ոլարածեն են, իսկ ներսից ցածրանիստ։ Եվ ահա ճիշտ նույն լուծմանն ենք հանդիպում Զորաց հկեղեցում, որտեղ արևմտյան նախառի վրա բացվող ազանգատների կամարների կոնտրուկցիաները մշակված են ճիշտ և ճիշտ նույն սկզբունքի հիման վրա։

Մոմիկի գործերին առհասարակ բնորոշ են համարձակ կանատուկարիվ լուծումները։ Ունի անսանք, թե ինչպիսի հմատվածք էին լուծված Արենիի նկեղեցու հսկայածավալ, միակտոր քարերից պատրաստված առաջասաները։ Աչ պակաս ուշադրավ երևույթի ենք հանդիպում Զորաց հկեղեցում։ Բանե այս է, որ այստեղ կառույցի ամբողջ արևմտյան պատը իր ներքեի մասում հենվում էր երեք, Հաքոբյական դասավորություն ունեցող բավականին բարձր կամարների վրա, հանգամանք, որը չ'ը կարող որոշակի սպառնալիք լինել անյամիկ ուժերի հարցածների ժամանակ։ Եթե կամարների սյուները ընկնեին, անմիջապես կխորտակվեր նկեղեցու արևմտյան պատն ամբողջությամբ։ Եվ ահա Մոմիկը մշակում է համարձակ մի լուծում։ Նա մի բայնաթուիչը կամար է ձգում հկեղեցու արևմտյան պատի ամբողջ լայնքով, կամար, որի թոփշը հավասար էր արսիդի թոփշին, և այդ կամարի վրա հենում նկեղեցու արևմտյան պատի վերին մասների ամբողջ որմածքը։ Այդ կամարը դրախտ չի երևում և պարփակված է ներսի երեսապատճան սահմաններում։

Մոմիկն այստեղ, ըստ էության, օգտագործել է դժուկ վաղ միջնադարում, IV—VII դարերում Հայտնի կոնստրուկտիվ լուծումը, երբ Հորիզոնական բարավորի վրա արվում էր վերերից եկաղ բեռը կրող ուժնդ մի կամար։ Սակայն այստեղ նույն արդ սկզբունքը արտակարգ համարձակությամբ օգտագործված է ամբողջ կամարաշարի վրա եկաղ բեռը ընդունելու համար, մի լուծում, որ չի հանդիպում և ոչ մի այլ տեղ։ Ամփոփելով Զորաց հկեղեցու հարտարապետական ձևերի տեսությունը, չենք կարող չեշել նաև երա արևմտյան հակառակում

սարքեր բարձրությունների վրա տեղավորված շորժ պահունակները: Թեականաբար հարց է առաջանում, ինչի՞ համար էին նրանք: Ենթադրել, որ նրանց վրա կամարներ են հենվել և կառուցվի այնքամյան կողմում ինչ-որ շենք է եղել, թվում է խիստ անտրամարտական: Այդ ժխտում են ոչ միայն պահունակների սռնդարշակման սարքեր մակարդակները, այն այն, որ պատճերի վրա չի պահպանվել կամարների և ոչ մի հետք: Թվում է, որ այսունզ ես մենք գործ ունենք Մոմիկի գեղարվեստական մտածողության մի խիստ ուշագրավ կողմի հետ, և բացառված չէ ընալ, որ այդ պահունակները նախատեսված են եղել հանդիսավոր արարողությունների պահին նրանց վրա ինչ-որ դեկորատիվ մանրամասներ, թերևս զինանշաններ տեղավորելու համար:

Այսպիսին էր աւա Զորաց նկեղեցին, Մոմիկի այս խիստ ուշագրավ, ճարտարապետական մեծ համարձակությամբ մըշակված հուշարձանը:

Նկատի ունենալով կառուցվի համեմատարար ոչ մեծ շափերը, կարելի է ենթադրել, որ նրա շինարարությունը պետք է որ ավարտված լիներ 1327-ին: Դրանից հետո միայն Մոմիկը կարող էր սկսել Բուրբել իշխանի հոյակապ դամբարան-եկեղեցու շինարարությունը, մի կառուց, որին նա ձեռնարկեց արգել բավականին առաջացած տարիքում, թեև, ինչպես ցույց նե տալիս հուշարձանի իրական ձևերը, Մոմիկը բնավ չէր կարցրել իր համարձակ մտածողությունն ու ստեղծագործական որոնումների ավյունը: Այդ պահին նա արդեն փորձված, հըմուռ ճարտարապետ-քանդակագործ էր, և նրա համար անցած կտապներ էին Տաթևի, Արմենի, Եղեգիսի և կեղեցիներն ու նույն Նորավանքի դավթի վերակառուցումը, որոնք հիանալի փորձ էին, մի-մի աստիճան նրա վարպետության կատարելության ճանապարհին:

ԿՈՐԻԱԿԱՆՔԻ ԵՐԱՀԱՐԱԿԱ ԴԱՄԲԱՐԱՎԱՆ-ԵՎԵՂԵՑԻՆ:

Բուրբել իշխանի դամբարան-եկեղեցին աշքի է ընկեռում իր համարձակ ճարտարապետական ձևերով, մշակման մեծ

յուրօրինակությամբ, մի բան, որ, ինչպես տեսանք, հատկապես բնորոշ է Մոմիկի ստեղծագործությանը առհասարակ:

Հուշարձանը կառուցված է Նորագանքի համալիրի հարավարենության կողմում, հիմնական կառուցվելուց զգայի հեռավորության վրա և հանդիսանում է համակառուցի զինավոր զոմինանուը, թեև այժմ կործանված է այն պսակող պյունագարդ ռուտոնդան:

Ըստ իր ճարտարապետական հորինվածքի, այն մի անդրադարձ է հայկական ճարտարապետության մեջ մինչ այդ էլ լավ հայտնի, կարելի է ասել, ավանդական գարձած երկշարկ դամբարան-եկեղեցիների հորինվածքին, որոնց կոմպոզիցիոն սկզբունքները հանում են վաղ միջնադար, և է՛լ այնուի վազ՝ անտիկ ժամանակները։ Երկշարկ դամբարան-եկեղեցիների կառուցվական ձևերը, առաջին հարկի գամբարանով և երկրորդ հարկի աղօթարանով հանդիրձ, ամենասերտ կերպով առնչվում են հայ եկեղեցու հետց ընդունած կանոններին, ըստ որոնց քրիստոնեության տարածման առաջին շրջանում արդեն արգելված էր թաղումներ կատարել եկեղեցու ներսում։ Ի թիվս այլ հանգամանքների, այս օրենքը խթան հանդիսացավ հայկական մեմորիալ ճարտարապետության զարգացման համար, և արդեն վաղ միջնադարում ստեղծվեցին մի շարք հոյակերտ երկշարկ դամբարաններ (Աղջ, IV դար, Կարենիս, VII դար), մեմորիալ մոնումենտներ (Օձուն, VI դարի կես, Աղուղի, VII դար) և այլն։ IX—XI դարերի ընթացքում մշակվում են նույն հորինվածքի կենտրոնագրեթ տիպեր (Անի, Հովհի եկեղեցի, XI դար), իսկ XIII—XIV դարերում երկշարկ աշտարակածներ, ուստոնդաներով պատկերով հորինվածքներ (Եղվարդ, 1301թ.): Աչշագրավ է, որ այս կարգի համարյա թև բոլոր կառուցվելում երկրորդ հարկ առնող առափնանեները կամ լիսվին բացակայում են և կամ երկրորդ հարկի մուտքի առջեւ արգած վնարդիկ հարթակին են հարգում ընդումնենը 2—3 աստիճան՝ ընդհատվելով զդաշի բարձրության վրա (Եղվարդ, Կապուտինելու)։

Այս ուշագրավ հանգամանքներն անշտաշտ պատահական չելու երկրորդ հարկ, որպես կանոն, բարձրանում էին որոշ մարդիկ

միայն, և այն էլ սարգված հատուկ օրերին, Հանգսցյալի հիշատակը նշնկու համար: Անըն էին բարձրանում նրանք փայտացա շաբթական աստիճաններով, ընդ որում սովորական օրերին վերջիններս հնուացվում էին, և այսպիսով վերին հարկը միանդամայն անմատչելի էր դառնում շրջակա թատկության համար: Այս պայմաններում, երբ նորից նոր անդրադառնում նորավանքի երկհարկ դամրաբան-եկեղեցուն, չի կարելի չնեատել, որ այստեղ նու Մոմիկը Համբառարիմ է մեացել իրեն, չի գնացել ընդհանրացած ճանապարհով և մշակել է մի լուծում, որը արմատապես տարբեր էր մինչ այդ օդատագործվող ձենքրից: Բանն այն է, որ այստեղ աստիճանները ոչ թե ընդհատվում են Երկրորդ հարկի հարթակի մոտ, ոչ յլ շարունակվում են ներքեան հատնելով գետենի մակերեսին: Նորավանքի այս կառուցը միակն է նույնատիպ հուշարձանների շարքում, և Հատկապես այստեղ է, որ զերեւ տանող աստիճանները ակամիելով գետենից, միաժամանակ դառնում են Հուշարձանի դեղաբարվեստական արտահայտչականության ամենագլուխավոր հատկանիշներից մեկը:

Ամանդական ձենքրից նման հեռացումը անշուշտ պատահական չէր, և թվում է, թե այստեղ իր որոշակի աղջեցությունն է ունեցնել երկհարկ դամրաբան-եկեղեցու կառուցման վայրը: Նորավանքը սովորական վանական համալիր չէր, այն Ծրբելլան իշխանական տան հոգեոր կենտրոնն էր, որտեղ բացառված էր օտար, անձանոթ մարդկանց մռաւթը: Դա տաճային կենտրոն էր, տունմային հեկնացիներով և զամրաբաներով հանդերձ, և նրա մնակուստցմանը թիշ չէր նպաստում նրա աշխերան հնուու, դժվարամատչելի տեղում գտնվելու հանցամանքը: Կառուցին տուաշին հարկը դամրաբանն է, որի արհման մասի ուղղանկյուն թաղաժամանկ մասի տակ էլ (որի արմելլան կողմի պատին քանդակված է մի մնձ խաչ) թաղման է ինը՝ Բուրթել իշխանը: Տարկարամինը կիսապետափոր է և ծածկված է հիանալի մշակված խաչաձև թաղովի: Միաեղությունը անդավորված է արևմտյան կողմում: Երկրորդ հարկաբանին մշակված է ամաներական, սեղմ համաշափություններ ունեցող դմբեթավոր սրահի ձևով: Սակայն անկյունային



11. Նորագույն, երիշուրի զամբուրան-հինգեցի, վերականգնության
Ն. Մ. Տափարակու

մասերում ավանդատների ծավալների հավելման միջոցով երկայնական ճակատներում ևս բացվել են արևմտյան և արեվելյան ճակատների խաչաթեներին հավասար խաչաթեներ, և անկախ արևմուտք-արևելք ուղղությամբ ունեցած որոշ ձգվածոթյանը, երկրորդ հարկացաժինը թողնում է խաչաձև հորինվածքի տպազլությունը կենարունական մասը ծածկված է եղել գմբեթով, որտեղ թմրուկին փոխարինել է բաց բազմալուն ոռոտնդան:

Այստեղ էլ, այսուների վրա տեղավարված է եղել Բուրբել իշխանի կտիտորական կոմպոզիցիան:

Սակայն Մոմիկը շտեսավ իր կառույցը վերջնականապես ուղարւոված վիճակում: Հուշարձանը, համաձայն նրա արևմտյան ճակատին փորապրված արձանազրության, ավարտվել է 1339 թվականին, իսկ վաստակաշատ Մոմիկը մահացել էր արդեն 1333 թվականին, ինչորեա վերայում - է նրա հիշատակին կանգնեցված խաչքարը: Հուշարձանի վերջնական ավարտի նման ձգձգումը թերեւ պետք է բացատրել այն արտաշարգ համար հարզարանքով, որն այնքան տարրերում է այս կառույցը: Իսկ դա ժամանակ էր պահանջում, և դասելով կատարված հակայական աշխատանքից, այն ավարտելու համար անհրաժեշտ պետք է լիներ ոչ պահառ 3—4 տարի: Նման իրադրություն դոյցաթյուն ուներ ոչ միայն նորագունքում:

Բանն այն է, որ միջնադարյան հայկական մարտարապետության մեջ ընդհանուրացած կառույցովական ավանդույթների համաձայն, Հուշարձանների զնկորատիվ տարրերը քանդակվում էին ամենալեռքում, որոնց համար էլ շինարարության ընթացքում թողնվում էր որմածքից հատակ դուրս եկող բարեր: Եզդ երբ ավարավում էր բուն կառույցը, վարպետները ըսկելուում էին քանդակել զարդարվելու մկան ամենավերջությունը և աստիճանաբար իջնում ցած՝ միաժամանակ հեռացնելով լաստակները: Կառույցովական այս մեթոդը լիովին ապահովում էր զարդարանդակները վերենից պատահաբար ընկած բարերից վնասավելու վառագից: Սակայն ավյալ կոնկրետ պայմաններում ամեն ինչ չէ, որ քանդակել է այս մեթոդի համաձայն: Մենք նկատի ունենք կառույցը պահելով ոռոտնդան:

դան. Երաւ սյուների խարիսխները, խոյակները, կամարազեղ-ները անշուշտ պետք է քանդակված լինենին նախօրոք և տեղափորձված իրենց համապատասխան տնօւմ կառուցյի շինարարության ժամանակից: Դա հատկապես վերաբերում է սյուների վրա տնօւմությամբ կախուրական կոմպոզիցիաներին: 16 սյուն ունեցող այս ռոտոնդայի՝ դնողի արևմուտք ուղղված կմնարոնական այսն վրա քանդակված է եղել Աստվածամոր պատկեները, իսկ նրանից աջ և ձախ, գարձալ սյուների վրա, տեղավորված են եղել Հիմնական կտիտորների պատկեներանդակները: Այս քանդակը, որտեղ պատկերված է մի իշխան՝ դամբարաննեկեղեցու մանրակերտը ձնորին, անշուշտ Բուրթել իշխանն է, իսկ Աստվածամոր մյուս կողմում կանգնածը՝ Բուրթել իշխանի որդին՝՝ Բեշքենը:

Կտիտորական այս կոմպոզիցիան արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում, ընդ որում տարակույս չեմում, որ քանդակները կերտված են Մոմիկի կողմից: Դժվար չէ տեսնել այն որոշակի ընդհանությունները, որոնք առկա են մեզ հետաքրքրող քանդակի նակատակալ քարի վրա քանդակված Աստվածամոր պատկերացանդակի միջև: Ակընայալուրեն մոտ են դիմադները: Նորավաների քանդակում մասնիկ շիստափից ներքեւ քանդակված առյուծը (ապէտարանիչի խոյնը գուշականը) կրկնված է նույն այսանոց: Եվ եթե ավելացնենք, որ այսանոց նա Աստվածամայրը նստած է ուղղակյուն գահի վրա և նրա ձգված գորգը այսանոց նուազարտվում է նույնանման վիճիներով, առպա տարակույս չի մնում, որ ինչպես նորավաների Աստվածամայրը, այնպիս էլ մեզ հետաքրքրող պատկերացանդակը կերտված են նոյն վարպետի, այն չ' Մոմիկի կողմից: Այս է հաստատում նույն կտիտորական մյուս ֆիգուրների համեմատությունը Մոմիկի այլ գործերի և հատկապես նրա խաչքարերի վերին մասերում տնօւմությամբ ֆիգուրների հետ:

Այս ամենը հետաքրքրություն է առլիս հզրակացնելուց որ Մոմիկը, կառուցնելով այս հոյսակերտ դամբարաննեկեղեցին, արդեն համարյա թե ավարտել էր նրա շինարարական մասը

մինչև իր մահը, մինչև 1333 թ. և նույնիսկ Հասցրել կերտել
ռոտոնդայի կտիտորական կոմպոզիցիայի պերսոնաժների
բարձրաբանդակները: Խնշ վերաբերում է ազնվակներին, առաջ
վորված զարդաձեներին և պատկերաբանդակներին, առաջ
առեղ դրասթյունը քիչ ազնվակ բարդ է, և զատելով առաջին և
երկրորդ Հարկների մուտքերի ճակատակալ բարձրի վրա արձած
կոմպոզիցիաներից, նրանք կերտվել են արդեն ոչ թէ Մոմիկի,
այլ թէրևս նույնպես տաղանգավոր, սակայն այլ վարպետնե-
րի կողմից: Այդ բարձրաբանդակներն անշուշտ կերտվել են
նախօրոց, առանձին և հետագայում միայն անդադրվել իրնեց
տեղերու:

Միանգամայն այլ էր կառույցի ճակատների զարդաբան-
դակների հարցը: Նրանց համար, որպես կանոն, նախօրոց հա-
մապատասխան ճշուատներ էին թողնվում, և թուն զարդաձելը
բանդակվում էր հետագայում՝ ուղղակի պատի վրա: Սակայն
նրա աշդ իսկապես այլոցին է հզեկ, ապա տարակույս չի մնում,
որ կառուցող ճարտարապետը արդեն շինարարության պրո-
ցեսում ունեցել է ճակատների մշակման ամբողջ ախճման,
նախօրոց իմացել, թէ որտեղ ինչ զարդաբանդակ պետք է լի-
նի, որպեսզի համապատասխան ճշուատ թողնվի նրա համար:
Իսկ սա նշանակում է, որ նույն ճարտարապետը նախօրոց
մշակել էր ոչ միայն ամբողջ կառույցի տարածական ձևերը,
այլև համապատասխան մանրակերտի կամ առանձին տախ-
տակների և կամ մակաղաթների վրա մշակել ամեն մի ճա-
կատում բանդակվելիք գարդաձեների տնօպարաշխման սխմանան,
նրանց ձևերը և դրա համապատասխան էլ ելուսաներ թողել
պատճերի որմածքի վրա: Ունենալով այդ էաբիզները, գծագրե-
ր կամ նկարեները, քարտաշ վարդետները առանց որևէ զրծ-
վարության կարող էին իրականացնել ճարտարապետի մը-
տահացացումը, նրան նախատեսած զարդաձեները: Մրանով էլ
պեսք է բացատրել այն ակնհայտ ընդհանրությունները, որ
կան Բուրթելաշն նկեղեցու ճակատների և հատկապես երկ-
րորդ Հարկի մուտքի շրջանակը կազմող զարդաձեների և Մո-
միկի կերտում իւալբարերի մոտիվների միջն:

Սկզբունքուն այլ էր իրազրությունը առաջին և երկրորդ

Հարկների մուտքերի ճակատակալ քարերի քանդակների հարցում. ինչպես նշվեց վերը, այդ քանդակները զգալիորեն տարբերվում են Մոմիկի այլ քանդակներից և իրականացվել են երամահից հետո՝ այլ քանդակագործների, այլ վարպետների կողմից:

Նորավանքի հրկհարկ գումբարան-եկեղեցին Մոմիկի վերցին դործը եղավ: Այն բնորոշվում է կառուցողական արտակարգ միասնականությամբ, և նրա ժամանակաշրջանը ձևակերպությունների մեջ ակնհայտորեն զգացվում է մեծ վարպետի հմտությունը: Այս ամենը մեզ իրավունք է տալիս այս կառուցվածքը դասելու հայ նարարագության մշակութիւն առավել նշանավոր հուշարձանների շարքը, այն համարելու հայ միջնադարյան նարարագության և քանդակագործության կարապի երգը:

Նորավանքում Մոմիկի հիշատակը հավերժացնող մի համեստ խաչքար է մնացել միայն, ամենայն հավանականությամբ կանոնացված նրա աշակերտաների կողմից: Մոմիկի գործունեության մեջ զարմանալի կերպով միանցուազնել նն ավանդականն ու մեծ վարպետի վառ անհատականությունը. և ինչպես ամեն մի մեծ վարպետ, նա ևս չի սահմանափակվել որևէ ժանրի սահմանեներում: Նրա գործունեությունը ժամանակից ոպուտմական խիստ բարգ իրադրության պարմանենքում, երբ Մյունիքը կայտեա կղզի էր մոնղոլական ամբարդեսթյան տակ հեծող հայրենի երկրում, այդ զրամատիկ իրադրությունը իր որոշակի կենքն է զրել Մյունիքի այս շրջանի ամբողջ արվեստի վրա ընդհանրապես և Մոմիկի ստեղծագործության միայնակության:

Եվ չեայած այդ ամենին, մենք բոլոր հիմքերն ունենք նշելու, որ Մյունիքում և հատկապես Վայոց ձորում XIII դարի երկրորդ կեսում և XIV դարի առաջին կեսում կազմավորվել էր գեղարվեստական մի խիստ ինքնատիպ դպրոց, որտեղ սերտ համագործակցության մեջ գործում էին բազմաթիվ առաջնային վարպետներ, մանրանկարիչներ, քանդակագործներ, հանդակագործներ, նարարագութեաներ և այլ դպրոցի շրջանակներում է, որ ստեղծվեցին հայ միջնադարյան արվեստի այս շրջանի առա-

վէլ նշանավոր գործերը: Այս մեծ գործում իր նշանակալից ավանդն ունի Մոմիկը, որի ստեղծագործական որունումների և ոճական ուղղության կերպը կարելի է նշմարել մի շարք այլ հուշարձանների վրա և այս շրջանում կերաված այլ պատկերաբանակենքի երբագնդ ձևերում: Թիե նաև ուներ իր աշակերտներն ու իր հետնորդները, սակայն ակնհայտ է միաժամանակ, որ նույն այս շրջանում գործում էին նաև այլ տառապատճեր վարպետներ, որոնց անունները չեն հասնել մեզ, վարպետներ, որոնց ստեղծագործական որունումները բնուվ էլ չէին գետում Մոմիկի բացած արահետներով: Մեզ հասած հուշարձանների համեմատական հետազոտությունը կատարվ էի թողեռմ, որ ինչպես Սյանիքի մանրանկարչական դպրոցի շրջանակեներում, որտեղ գործում էին մի շարք տաղանդավոր մանրանկարիչներ (Մոմիկ, Բորսո Տարոնացի, Ավագ և այլն), ոչ պես էլ համանման իրազրությունն էր ստեղծվել նաև մոնումենտուլ արվեստի բնուգավառում, և այդ տաղանդավոր վարպետներն էին, որ ստեղծել էին Բանահատի, Այստանի, Եպիտակավորի, Հովհաննես Կարապետ վանքի համայնքները և Նրանք էին կերտել Մայիստակավորի և Բուրթելաշին Երկհարեցամբարան-եկեղեցու մուտքերի և Աղեղիսի տիմզանների անմասաց պատկերաբանավորները:

Դժբախտաբար, մինչեւ այժմ մենք քիչ բան գիտենք այս նշանավոր վարպետների մասին: Թիերեւ հետազու հետազոտությունները պարզեցնելու համար:

* * *

Մենք ծանոթացանք հայկական միջնադարյան ճարտարապետության և արվեստի հրեն նշանավոր դործիշեների կյանքին և գործին, գործիշենը, որոնց ստեղծագործությունները դարձր շարունակ ուղենիշ և ժառայիլ հաջորդ սերտնութերին՝ հատագու դարների ճարտարապետության և արվեստի կոթողեների կերպում ժամանակ:

Առանձին նշանավոր ճարտարապետների և քանդակագործների ստեղծագործությունների ուսումնասիրությունը հը-

Նարավորություն է տալիս միանգամային այլ տևանկյունից
զիտել նարարարապետական մշակույթի, բանդակադրծու-
թյան զարգացման ռազիները:

Բանե այն է, որ եթե ժամանակագրական սկզբունքով
կառարված հետազոտությունների ելակեան է հուշարձաններից
տիեզարանական վերլուծությունը, իւկ արվեստի բնագավա-
ռում՝ պատճենագրական և սեմանտիկական ուսումնասիրու-
թյունները, և այս գեղքում առանձին ճարտարապետների և
բանշահագործների որոնումները կարծես ետին պլանի վրա են
մզվում, ապա միանգամային այլ պատճեր է սահմանագում,
երբ նպատակ ենք դնում հետազոտել առանձին արվեստագնունների
ստեղծագործությունները:

Միայն այս գեղքում է հնարավոր գառնում ուրվագծել
ավագ գործչի ստեղծագործության գարգացման կոնկրետ ու-
ղիները, նշմարել նրա որոնումների ճանապարհները:

Այս տեսակներից հասուել հետաքրքրություն են ներկա-
յացնում հայկական միջնադարի ճարտարապետության և
արվեստի այնպիսի գաղափաթների ստեղծագործությունները,
ինչպիսիք են Մանուկը, Տրդատը, Մոմիկը: Սակայն միաժա-
մանակ նրանցից յուրաքանչյուրն իր ժամանակի ծնունդն էր,
իսկ նրանց ստեղծագործությունները՝ ավագ գարգարչանում
գերիշխող ռեական ուղղությունների արդասիր: Ծիշա է, լի-
նելով մեծ արվեստագնուններ, նրանք միշտ որոնումների մեջ
են, միշտ առաջ էին նայում, և նրանց գործերը շատ անգամ
զուրս էին զալիս ժամանակի բնորդանրացած ձևերի շրջանակ-
ներից և կամ նույնիսկ դարաշրջանի շինարարական տեխնի-
կայի ընձևուած հնարավորություններից, բայց և այնպիս գա-
րաշրջանի կենիքը խիստ ակնհայտ է նրանցից յուրաքանչյուրի
ամեն մի գործի վրա:

Այս պայմաններում միանդամային արաւմարանական է
Մանուկի և Տրդատի ստեղծագործական մոտեցումների որոշ
բնորդանրությունը: Եթե Տրդատի դործունեությունը սկսվեց Աղ-
վամարի ավարտից շուրջ կես դար հետո միայն, առաջ Տրդատի
և Մոմիկի միջև քնիած էր մոտ երեք հարյուր տարի ժամա-
նակ, մի բան, որ չեր կարող իր որոշակի կենիքը շղնել Մոմիկի

սահնդօսպործության վրա առնասարակ: Այս առումով ոչ պահաս ուշազրապի ևն այն փոփոխությունները, որոնք առկա են Հայկական ճարտարակագենության և քանզակագործության մեջ Տրդատից մինչև Մոմիկ ընկած ժամանակաշրջանում: Միաժամանակ պետք է նշել, որ տարրեր էր նաև նրանց գործերի պատմական անդրագարձը, և բնավայր նույն նշանակությունը շունչցան այս մնաց վարդեաների գործերը պատմական հաջորդ շրջաններում: Մանուկի նշանավոր գործը, Աղթամարի քանդակագույրոց տաճարը, կառուցված էր խիստ ինքնաւիսոց, յուրաքանչափ առաջանեներում, կառուցված էր որպես Արծունյաց թագավորական տաճ, Արծունիների փառարանման ապահով և ինքնին համականացի է, որ այն անկրկնելի էր միշտ այլուրնեա, ինչպես անկրկնելի էր նրա սանգծող ժամանուիլը, ինչպես Մանուկի տագանորս:


Միանդամայն այլ էր իրազբությունը Անիում, ուստիո կառուցված շնորհը և առաջին հերթին Տրդատի գործերը ըարձակ բազմաթիվ ընդորինակումների առարկա թիւ նրա ժամանակականիցների և թիւ հետապա գարերում գործոց նարաւարապետների համար Նրա սանգծած ճարտարարականական դպրոցը իր խիստ որոշակի կերպն է դրել ինչպես Անի, այնպես էլ Եկրակի և Արարատյան նահանգի ամբողջ շինարարական գործունեալության վրա:


Անցուվ երեք դար, և մեկ այլ զնօարժեաւական դպրոց կազմավորվեց Մյունիցիում, այս անզամ արդեն Մոմիկի զիյանցությամբ: Այս դպրոցը հայ միջնաւարյան արվեստի վերջին փառաւակամունքն էր, որտեղ այնպիսի գարմանահրաշ ձեռվ միանձուրվել էին ճարտարապետաթյունը, քանդակագործությունը և մանրանկարչությունը: Երկար կրանք շունչցան այս դպրոցը, XIX դարի կեսերից օտար բոհուկալների վայրագ ակադեմիանելությունը քայլարման եզրին հասցընց Երկրի տնօւառապետությունը, կանգ սուալ մանամենաւալ շինարարությունը, մեռվեց արաւագաղբը: Ավ միայն XVII դարում որոշ նախադրյաներ սանգծվեցին մի նոր, թիւ կարճաւան վերելիք համար, առաջն այլն չվերականցնելուց այն մեծ արվեստը, որի հավերժական զադաթիւնը էին Մանուկը, Տրդատը և Մոմիկը:



ԼՈՒԽԱԱՆԿԱՐՆԵՐ

бг. I. Азимовъ. Азимовъ. Азимовъ.






Կը. 2. Աղթամար. հինգեցրու քաղաքամուր տեսքը Հյուսվառաբեկքից



Աղ. 3. Ազբաձոր. հիեղեցու նորովային ճակատը



Նկ. 4. Աղբամար. Դաղիկ սրբան առևմոքի մակրահերթը ձևաբան



Նկ. 5. Արքամար. արհեմոյան Հակոս. պրթագուշաբի հատված



Նվ. 6. Ազթամար. Հյուսիսային Հայկաս, դարդաբակալավ



Ակ. 7. Խոյքավար. Հյուսիսային ճակատ. Սաման




Fig. 8. Dvärghammar, 8th century, church, relief.

Fig. 8. H. *giganteus*. Стебель с листьями, цветками, плодами и листьями.





Նկ. 10. Աղբամար. Հոգովայշին ճահառ. որթադաշտարի համար



ს. 11. ბაგრატი. ციკლოպიუმის მახათმების ქადაგი




№ 12. Աղթամար. Հարավային ճոկում. Դափիլ և Գողիսը




Նկ. 12. Աղթամար. Հայոցացին ճախուռ.

Հայոցացին Արքունու պատհեմութեանից




Ֆ. 14. Աղթամոր. սրբավան ժակար



Հիւ. Խճ. Շրջանի հայոց ակադեմիայի նորոգիլից

Fig. 16. Egyptian. A fragment of a relief sculpture from Abu Simbel.





Ֆ. 17. Արքիմ, որմեսյան




Նվ. 18. Հայոց տաճարի արհելլուն ճախառը



Ֆ. 19. Հայոցաւ. Ամրատ և Պուրգեն թագավորների
կոյժառական պատճենահանուլը

Ms. A. 9. 29. fol. 144v.



№ 27. Узоръ настѣнныиъ въ хорѣ церкви святаго Георгія





Fig. 27. Hagh. Haghpat monast. phyl. hachpat' mchq'z' "mamq'z' mchq'z'







Fig. 22. Abb. 1. Umjäg. umzäumt. spätbarocken Stil in qdrl. Pp




Նկ. 24. Անի. Մայր տաճար. գլխավոր արտիկը



Ակ. 25. Անժ. Մայր տունը. պահապահերի
խորբաժներ և խոշովներ (շափաք. Բ. Թորումանյանի)


бг. № 20. Мж. Шарм монеты. Краснодарский край





Ֆ. 27. Արք. Դարձուշնե. Դազիկ և Բաղրամյան
թագավորի զիւմարանցանը

34. 28. Աճ. Պատմութիւն. Գաղկի թագուցիւր առաջնորդ ժամանակաշրջանու հայութիւնը (պատմութիւն)։






Fig. 27. Wall. Saraylik. Photo: V. S. Gerasimov





Fig. 29. Wall, Tung-shui-ho. Horizontal gap, 6 inches wide, & vertically through



May 22, 1945
As we approached the village



Ֆլ. 26. Նորավառը. Խուճարք. բանդուկիսպարժ Մաժիկ



Այս լուսապատճենը պահպանության մեջ է գտնվում:



ՖՈ. 26. Արևիք. Առավաճանը պատկերաբանելը որիմույն
մուսզի Հակատակալ բարի վրա



Կ. 37. Արձիք. ավելացնածին խորհրդակառ



Ֆ. 35. Արձնիք. ազթառաբանիչի խորհրդական



Էջ. 29 Նորագույք. զավիթ. Աստվածամուռ պատճենագույշը



Fig. 40. Тарасовка. гробница. Голова воина



ՅՈՒ. Ժ. Եղիսաբետ Հոռով հիմքեցի. ըստ Հակոբ Ավագի




Ֆ. 42. Նորավանք. Երկնարկ զամբյառան. Լեշուցի, Երկրորդ Հարվի ժամբը



Աղ. 42. Նորավառեր. Հրինարկի զամբարան - հինգշին-
Առաջնամեր պատկերաբանելու ռասունդայի այս վրա



Նկ. 44. Նորավասեր. հրկնարկ զամբարան և կեղեցի:
Բռբթել իշխանի որդու՝ Բեշբեկ իշխանի պատկերանզանը



Ֆ. 45. Նորավանք. Արկածարի դամբարան-հիեղեցու արևմտյան պատը

Ներածություն	5
Մանուկ	16
Աղթամարի պարագ	17
Պալատական տաճարը	31
Աղթամարի պատկերազրական համակարգը	46
Տրդա	79
Արգիլա	86
Հազրատ	91
Անիի մեծ պարիսով	99
Կոստանդնուպոլիս. ո. Առջիա	104
Նորից Անիում. Մայր տաճարը	109
Միջնարերդի պալատի Հյուսիսային զարդարները	124
Ա. Գրիգոր (Գագկաշեն)	128
Տրդատի դպրոցը	138
Մոմիկ	143
Խորագանքի խաչքարերը	149
Տաթեի ո. Գրիգոր Լեռդեցին	151
Արևելյան հեծդեցին	152
Խորագանքի զավթի վերակառուցումը	158
Ջրաց հեծդեցին	166
Խորագանքի երկնարի դամբարան. հեծդեցին	169

ԱՍՏՎԻՆ ԽԱՇԽԱԾՈՒՐԻ ՄՐՎԱՅԱՆԱ-ԸՆԻ

ՎԱՐԴԱՏԻԼ ՎԱՐԴԱՏՆԵՐ

Մանուկ. Տրդա. Մոմիկ

Հայո. խմբագիր՝ Զ. Խ. ՕԹՄԱՆՅԱՆ
 Կղ. խմբագիր՝ Հ. Խ. ԴԻՐԱՎԱՆՅԱՆՅԱՆ
 Տէլ. խմբագիր՝ Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
 Մշագործ՝ Ա. Ա. ԱԽԱՎԱՅԱՆ

ԽԲ № 575

Հանձնված է շարժամարի 1.12.1981 թ., Մասրության մազարության 5.04.1982 թ., վ. 06105. Չափը $84 \times 108^{1/2}$. Բուզը № 1. Տառափակակ «Գրի առարկան», բարձր տպագրաթուն. Պայմ. 11.37 մամ., տպագր. 11.25+45 նմ. Հրատ.-Հաջարի 10.21 մամուլ. Տարբանակ 5000. Հրատ.
 № 5672. Պատճեր № 926. Գիր 1 ո. 60 կ.

ՀՅԱՀ ԳԱ Հրատարակություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 զ.

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՅԱՀ ԳԱ Հրատարակության տպարան, 378310, ք. Էրեմանքի,

Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Արար.



FL0230863

1 n. 60 q.

A " 68215